



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999



Առաջնորդ

ՖԻԶԻՔԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՇԵՐԵԲ

Հայ տղայոց և օրիորդաց ուսումնա-
րանների համար


Ա. Շ Խ Ա Տ Ա Բ Ե Ց


ԱԻԵՏԻՒՄ ՏԵՐ - ՅԱԿՈՎԵԱՆՑ

Ուսուցիչ Հայաստանի տշխարհագրութեան Տիխոսու Ներսիսեան
Հայոց Ազգային Հոգեւոր Գպրանցի

Տ Փ Խ Ի Ս

ՅՈՒ.ՀԱ.ՆԵՐ. ՄԱՐՏԻՆՈՒԵԱՆՑ ՏՊԱՐԱՆՈՒՄ





ար հիմնական բայ խոհեց ունակություն ունակություն

ար պատճեն զամ և ուղարկած ունակություն ունակություն

այս զամ և ուղարկած ունակություն ունակություն ունակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԾԱՇՎԱԳՎԱԾ

ՔԱՅԱՋԱՀ

առնելու քարտավոյ և քարտի լու
զնունք գյուղական

ՏԱՐԱՎԱՐԱ

ՏԱՐԱՎԱՐԱ

42056-60

Հ.Բ. 2059

Дозволено цензурою. Тифлисъ. 20 Июня 1881г.

Типогр: И. Мартиросианца, на Орбел. улицѣ д. № 5

բանում են պատճառ ըերելով այդ առաջիկայից՝ դաստիքի պահանութիւնը:

Ազգիսի մի ծանրակշխու և նոր առարկայի դասագիրք կազմելը մէկ առանձին հմուտ մասնաժողովի գործ է, որ երկար ուսումնասիրելուց և ծանր աշխատանքից լիտոյ կարող էր լոյս ընծայէլ մի օդտակար և ճիշա տեղեկութիւններով դասագիրք: Բայց քանի որ այդ չկայ, ես ոչ մի միջոց չխնայելով իմ թողլ ոչ ժերով լոյս եմ ընծայում ներկայ աշխատութիւնը երբեք մի թեթև ձեռնարկ հայ տղաջոց և օրիորդաց ուսումնարանների համար: Այս դասագիրքը հիւսուածքօրէն կազմուած է աւելի քան լիսուն հայ և օտար ազգիւթեանը, որոնց լիշելը աւելորդ եմ համարում: Բայց դոսանից և նկատի ունենալով Վենետիկեանների տպած հայաստանի աշխարհագրութեան քարտէցի մեծաքանակ սիսալները և շատ քաղաքների, լեռների, գետերի, լճերի անունների բացակայութիւնը, ես իմ դասադրութիւնը անունների նորագոյն աշխատասիրութիւններից և մի աշխարհագրական քարտէց համար ձեռնարկեցի պատրաստելու և մի աշխարհագրական քարտէց հայաստանի օդուտ քաղելով եւրոպական մեծ հեղինակութիւն ունեցող աշխարհագրութէնների նորագոյն աշխատասիրութիւններից, ինչպէս են Կիպրոսի 1, „Special kart Türkischen Armenien“ 2, „Die Euphrat-Tigris lander. Armenien, Kurdistan und mesopotamien“ 3, „Asiatische Tüuqeı Kaukasus lander“ 4, „Armenien unde Kurdistan. Berlin“ և այլն. Պետէրմանի „Klein-asien und Syrien Armenien, Kurdistan. Mesopotamien. Cotha և այլն: Բայց վերոյիշեալներց ձեռքի տակ եմ ունեցած այլի շատ ուռւսական նոյնիսկ Տաճկոց մասի համար տաճկական քարտէցներ ըոլո՞ն էլ 1880 թուականից այս կողմը:

Մի քանի խօսք էլ դասագրքի ուղղութեան մասնին: Ես ամենից առաջ նշանակել եմ ֆիզիքական, ասլա ժողովրդագրական և վերջապէս քաղաքական մասը, ազգպէս դասաւուելու պատճառը այն է, որ ես աշխարհագրութեան հեմքը ընդունում եմ ֆիզիքական մասը, այսինքն երկրի արտաքին կազմութիւնը, ջրերը, օդը, ընական հարստութիւնները, տեղական առանձնայատկութիւնները և այլն: Երկրի կազմութեան և նորա առանձնայատկութիւնների համեմատ կազմում է և ժողովրդական կեանքը, նորա եղանակը, պալամազունքը, սովորութիւնները, ընաւորութիւնները, կրօնը, բարսաւաները և այլն: Ժողովրդական կեանքը եւրաքանչիւր կողմը ընականապէս կաթելի է բացագրել երկրի կազմութեամբ և արտաքին ընութեամբ, այսպէս առել երկրը և ս ընութեամբ զեկաւարող, առաջնորդող և ձեռակերպող է մարդկացին կեանքի բոլոր կողմերի: Ուրեմն միայն ֆիզիքական մասը ուսումնասիրութիւնուց լիտոյ կաթելի է ժողովրդագրական մասը ըմբռնել: Ժողովրդագրական աշխարհագրութիւններուց լիտոյ գալիս է քաղաքական աշխարհագրութիւնը, սովորշեան քաղաքական կեանքը, կառավարութեան ձևը, եղանակը, օրէնքները, վարչութեան կազմակերպութիւնը, քաղաքանը զերքը և այլն կախուած է ժողովրդական կեանքից և երկրի ֆիզիքական կազմութիւնից: Ուրեմն այսպէս առել երեք շրջաններն ես մէկ մէկից սզնող, մէկ մէկի հետեւանք են կապուած ներքին պատճառական կապով: և հարիչ և իմ յարգելի պաշտօնակեցները և ս առարկան ուսուցանելու ժամանակ աւելի ուշի կդադանեն նոյս ներքին կապի, հետեւողութեան փոխագրած աղդեցութեան վերայ, ոչ թէ իւրաքանչիւր մասը առանձին, այլ երբեք մէկ միւսի հետեւանք կանցնեն, որով նաև առարկայի ներքին կութիւնը աշակերտները լաւ կմըսնեն, երկրտու աւելի զարգացողա-

կան պաշար և մտածելու նիւթ ստամբալով կազա-
տուեն անհաղատակ չըլ ու ցամաք անուններ անգիր
անելուց: Այդ նովատակով ևս ես մի փաքքի գլուխ
զետեղեցի Փիզիքական աշխարհագրութեան վերջը,
որ միայն համառօտութիւնն է այն ցանկութեան, ինչ
որ ես առաջարկել կամենում են պաշտօնակիցներիս:
Եսկ աւելի ընդարձակուել անկարմիլ էր, որտվշետե իմ
դատողութիւնով ու ընդունութիւնով կաշկանդել չէի կամենալ:

Իմ գասագքում նկարագրուած է Հայաստանի
աշմեան վիճակը, ուրեմն և իմ դասագիրքը նոր
Հայաստանի աշխարհագրութիւնն է ուստացանում: Ես
կամենումէի նորի հետ զուգընթաց տանել և հինը
համեմատական կամ բազգաստական սճավ, որի ար-
դիւնքը և հարիւ և աւելի կլինէր, բայց փորձեց երեւ-
ցաւ, որ այդ աւելի գժուար ու ծանր է աշակերտաց
Համար, Ժամանակ ևս խիստ շատ է պահանջված,
եսկ այդ աւելիքից Համար առանձին զաներ մեզա-
նում չկան, եղած աեղերումն էլ շատ քիչեն: Գտցէ
նախնի Հայաստանի մասին Համառօտորին յետոյ
լոյս ընծայեմ: Քազաքական մասում բաժանմունքները
ընդունեցի նախնականը այն պատճառով, որ նա ա-
ւելի հաստատ է և մինչեւ այժմ Հայոց մէջ զործա-
դրական, իսկ այժմեան բաժանմունքը ընդունեցի,
որովհետեւ նա խիստ շուտ շուտ փոփոխում է մանա-
ւանդ Տաճկա - Հայաստանում: բայց և այնովէո Հա-
մառօտ ծանօթութեան Համար նշանակեցի դաստ-
գարել մէջ և նոր բաժանմունքը միասին և հետը զնե-
լով նախնական անունները:

Ա-Եպիք Տեր - Յակով Բետոն

1881 ամի
20 յուլիսի. Տվիսիս.

— 8 —

Տաճակ առաջինով վեր ըշնչացքոց մասը
առաջայի լուսի, ըմբացաւոր վզմարտ առնեցին
զման մէջ ապարագան և զման ու առնեց առ նու
մանց վի շնոր և անուրա իսկ առ վի վայձուն
ՄԱՍԱ Ա. Ա. Ա. Ա. Ձ. Ի. Ն մաքարաց մէջ
ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒԽԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ. Հայաստան կոչվում է այն երկիրը,
ուր ծագեցաւ Հայոց ազգը և իւր սեփական լե-
զուով, կրօնով, սովորութիւններով ու ազգային
յատկութիւններով ապրում է մինչև այժմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՌԻՆԸ. Հայաստանը իւր ա-
նունը ստացել է մեր նախահայր Հայկից, որ յաղ-
թելով Բէլին կազմակերպեց այդ երկիրը: Հայաս-
տան անունի տեղ մերայինք շատ անգամ դործ են
դնում այլեւայլ անուններ, վերցրած Հայկի ազգա-
կիցների անունից ինչպէս Յարէթեան նահանգ, Թորգոմեան աշխարհ, Արամեան նահանգ, Ասքանա-
զեան աշխարհ, Արարատեան երկիր:

Օտար ազգերը մեր երկիրին այլեւայլ անուններ
են տալիս. Արացիք մեր երկիրը կոչում են Սոմիկթ
Հայաստանը Արատանից Հարաւ. գտանուելու պատ-
ճառով: Միւս բոլոր ազգերը մեր երկիրը անուա-
նում են Արմէնիա Արամ նահապետի անունով: Յոյ-
ները առում են, Հայաստանը Արմէնիա կոչվում է

Եղօնի ընկերներից մէկի՝ Արմէնիոսի անունով՝ որ արգոնաւորդների պատերազմից յետոյ Հայաստանում շատ շինութիւններ և կարգադրութիւններ անելով, իւր անունով այդպէս է կոչել: Մի քանի Եւրոպական դիտնականներ ևս Արմէնիա բառը լուծում են Հար-և-Մինի բառերի: Հար երբայցերէն նշանակում է լեառն, Մինի կամ Մինէտա Հայաստանի գաւառներից մէկի անունն է (Մանաւաղ), իրու թէ այդ երկու բառերի ածանցուելուց առաջցել է Արմէնիա (լեառն Մանաւաղի) բառը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:
Հայաստանի սահմանները միշտ փոփոխուած են, երբեմն խիստ ընդարձակուած են և երբեմն խիստ փոքրացած: Հին ժամանակ աւելի յայնի էին հետեւեալ սահմանները. հիւսիսից՝ Խզերացոց, Արաց և Աղուանից աշխարհները. արևելքից՝ Կասպից կամ Ալրականայ ծովը և Ատրպատականը. հարաւից՝ Մարքը, Ասորեստանը, Ասորոց — Միջագետքը, Ասորիքը և Միջ-երկրական ծովը. արևելքից՝ Փոքր - Ասիայի մանր տէրութիւնները՝ Պամիրլիա, Փոխոդիա, Գաւաստիա, Պափլագոնիա և Պոնտական կամ Սև ծովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Հայաստանը իւր շուրջը չունի այնպիսի գժուար անցանելի դետեր, բարձր լեռնաշղթաներ, որոնք կարողանան պաշտպանել նորան թշնամինների յարձակմանքներից, այլ նա բացէ ամէն կողմից և միացած շրջապատող տէրութիւնների հետ գաշտերով և հովիտներով: Եղած բնական սահմանները են՝ հիւսիսից Կուր գետը, աշ

րևելքից Վրիանայ կամ Կասպից ծովը և Գեղմանց (Գիլանու) սարերը. հարաւից Զագրոսի շղթան և նորս Ճիւղերը, Միջերկրական ծովը, արևմուտքից՝ Իրիս գետը և Սև ծովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՀԵՌԱՒՈՐ ԿԵՏԵՐԸ:
Եթէ որոշելու լինենք Հայաստանի սահմանային հեռաւոր կէտերը, կտեսնենք, որ նա ընկնում է հիւսում 42°-ի տակ, հարաւում 36°-ի տակ հիւսիսային լայնութեան. արևմտքում՝ 50°-ի տակ (Կիլիկիայի արևմտեան ծայրում) և արևելքում՝ 67°-ի տակ արևելեան երկայնութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ: Այն երկերը, որ շրջապատուած է վերոյիշեալ սահմաններով, մօտ 14,500 քառակուսի մղոն տարածութիւն ունի: Արևելքից արևմուտք նորա երկայնութիւնը մօտ 1,700 վերստ է հաշուելով Կիլիկիայի արևմտեան ծայրից՝ Սելինոսի գետաբերանից մինչև Կասպից ծովեղը, իսկ հիւսիսից հարաւ մօտ 600 վերստ է լայնութիւնը հաշուելով Կուր գետի հիւսիսային հեռաւոր կէտից մինչև Կիլիկիայի հարաւային ծայրը՝ Անդրբիրն հրուանդանը: Ուրեմն երկրի երկայնութիւնը լայնութիւնից մօտ երեք անգամ աւելի է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱԽՈՐ ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔԸ: Հայաստանը հին ժամանակ կաղմում էր մի զօրեղ տէրութիւն բաղկացած ջրա գլխաւոր մասերից, որոնք են՝ Մեծ - Հայաստան, Փոքր - Հայաստան, Կիլիկիա, և Հայոց - Միջագետք, իսկ այժմ պատկանում է երեք տէրութեանց. հիւսիսարևելեան մասը պատկանում է

Ոռոսաց և կոչվում է Ռուսամ - Հայաստան, հարաւաշը մասնեան մեծ մասը պատկանում է Տաճիկներին և կոչվում է Տաճկա - Հայաստան, հարաւաշը արևելքան փոքր մասը պատկանում է Պարսիկներին և կոչվում է Պարակա - Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹ-Ը

Հայաստանի մակերեսը թիստ բազմատեսակէ, նա առասէ երկայնաձիգ, բարձր և ձիւնապատ լեռնագօտիներով, միայնացած, հսկայատես և սղիտաւ կափառ գագաթներով, լայնատարած հարթ բարձրաւանդակներով, մշտականաչ, ցողապատ և ծաղկաւ զարդ գաշտավայրներով և տափաստաններով, կարկաչահոս բազմազբիւր հովիտներով և մարգագետիններով, խիստ եղեղնոտ և թռչնառատ ձահիճներով մնաթ անտառներով և անսպառելի մացառներով, տեղ տեղ քարքարոտ և աւագոտ անսպատաներով. բայց ընդհանրապէս Հայաստանի մակերեսը թիստ բարձր է և լեռնոտ նա գտանուերով Սև, Միջերկրական և Կասպից ծովերի մէջ՝ կաղմում է մէկ բարձր լեռնակղղի, որի բարձրաւանդակների բարձրութիւնը ծովի մակերեսոյթից 2-8,000 ոտնաչափէ, միայնացած լեռների բարձրութիւնը 17,000 ոտնաչափի է հասնում, իսկ կիրճերինը 6-7,000 ոտնաչափէ:

Առհասարակ Հայաստանի լեռները գօտիաւոր են, անդօտի լեռներ քիչ կան, բայց և այնպէս գօ-

տիաւոր լեռները խիստ շատ ունին բարձր կօնածեգագաթներ, որ նշան է Հրաբուխների մեծ քանակութեան. լեռնագօտիները առհասարակ միմեանց զուգահեռականնեն, աստիճանն առ աստիճանն են բարձրանում, լեռնագաշեր շատ են կազմում և մեծ մասով դիւրին բարձրանալի են, բայց այդ զուգահեռական լեռնագօտիների շարքը անկանոննէ, երբեմն երկու երբեմն երեք, չորս և այն գօտի են կազմում և ամէնքն էլ միացած են միմեանց հետակողմանի բազուկներով. Մի գլխաւոր և ընդհանուր յատկութիւն ես, որ պարզ կարելի է նկատել այնէ, որ լեռնագօտիները հարյաւ արևելքից հիւսիս արևմուտք են ուղղած և կազմում են Հիմալայեան և Հնդուկուշ լեռների շարունակութիւնը; Վերջապէս Հայաստանի լեռնագօտիները չեն կազմում այնպիսի խոր և զարհուրելի անդունդներ, ծործորներ և ձորեր, կողմնակի ցից ցից և աշուելի կողերով. որպիսիք ունին շատ ուրիշ լեռնային երկիրներ, որովհետեւ բազմաթիւ հրաբուխներից ժայթքած լաւան հեղեղի պէս լքցրել է այդ բոլորը և այդպիսով մեղմոցրել նախկին սուրսափեցուցիչ տեսարանը^{*)}:

ՄԵԴ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ

Մեծ-Հայաստանը ամբողջ Հայաստանի ամենալեռնոտ և բարձր դիւր ունեցող մասն է: Դա

^{*)} Վագնէր, Ճանապարհ, ի Հայաստան, Հումբութ, Ռետուշ ընդհանուր տիեզերագրութիւն:

սահմաններում ցածր գիրք ունի, բաղկացած է հովիտներից և գաշտավայրներից, որ դէպի Մեծ-Հայաստանի կենտրօնը աստիճան առ աստիճան բարձրանալով միջն մասում կազմում է կենտրօնական բարձրաւանդակութիւնը. բացի այն գլխաւոր լեռնագոտիներից, որոնք աստիճանաբար սանդիւտանման Հայաստանի մակերեսոյթը դէպի կենտրօնն են բարձրացնում, կան և շատ ուրիշ լեռնագոտիներ և առանձնացած լեռներ, որոնք փոխադարձ միմեանց կտրտելով բաժանում են Մեծ-Հայաստանը միմեանցից բոլորովին անջատուած և յատկութեամբ տարբեր մասերի, որոնց հաղորդակայութիւնը կատարվում է նեղ և գժուար անցանելի կիրճերով *):

Մեծ-Հայաստանի կենտրօնական բարձրութիւնը աստիճանաբար ցածրանալով հիւսիսում իջնում է կուր և թիօն գետերի հովիտները, որոնցով բաժանվում է Կովկասեան լեռներից. Հարաւում իջնում է Ափրասայ հովիտը. Դէպի արևելք և արեմուտք մակերեսոյթի ցածրանալը աւելի աստիճանաբար է կատարվում. արևելքում իջնում է Կասպից ծովեզեայ գաշտավայրները, իսկ արեմուտքում Մալաթիայի կամ Փոքր Հայոց գաշտավայրները **):

ՄԵԾ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԱՌՆԵՐԸ: Մեծ-Հայաստանի միջով Հարաւ արևելքից դէպի հիւսիս արե-

*): Ափառէր:

**) Մէջէր:

մուտք ձգվում է մէկ լեռնագօտի, որ բաժանում է նորան երկու գլխաւոր մասերի՝ հիւսիսային և հարաւային. գա և Հայկական - պարզ: Այս լեռնագօտիի ամենաբարձր կէտը արևելքում Մասիս է: Մասիսը, որին Եւրոպայիք և Հայերը այլապէս կոչում են Աբարատ, գտնավում է Հայաստանի և ամբողջ հին աշխարհի կենտրօնում: Նա հաւասար հեռացած է Եւրոպայի, Ասիայի և Ավրիկայի ամենաշեռաւոր կետերից *). Գորա վերայով է անցնում Հայկական առաջին միջօրէականը: Մասիսը բաղկացած է երկու գլխաւոր գագաթներից՝ Մեծ-Մասիսից և Փոքր-Մասիսից, որոնք միմեանցից տասը վերաս հեռաւորութիւն ունին: Մեծ-Մասիսի գագաթը բաղկացած է երկու բլուրներից, որոնք բաժանուած են միմեանցից մի սաւուցի ձորակով: Մեծ Մասիսի բարձրութիւնը ծովի մակերեսոյթից մօտ 17,000 ոտնաչափ է և 13,000 ոտնաչափից վեր միշտ ձիւնով և յաւիտենական սառուցով է պատահած **): Փոքր Մասիսը մօտ 13,000 ոտնաչափի բարձրութիւն ունի և ամառուայ իսխառ շոգերին ձիւնը բոլորովին հալվում է և միայն միքանի ձորակներում ամբողջ տարի պահպանվում է, բայց եղանակը փոխուելուն պէս գարձեալ ձիւնով ծածկվում է: Մասիսը ամբողջապէս պատած լինելով հրաբխային կարծր նիւթով, շատ աղքատ է բուսականութեան կողմանէ: Բարերազ (Թաքէալթու)

*): Վագնէր Ճանապարհ. և Հայաստան:

**): Բարըստ պօքիտոր:

գտանվումէ Ասսիսից գեղի արևմուտք և շատ
հարուստ է աղահանքով: Սուհան համ Սուհանէս կամ
Զբաբաշխ (Փեռէ - գաղ) գտանվումէ Բարդողից
գեղի հարաւ արևմուտք, մօտ 9,000 ոտնաշափ
բարձրութիւն ունի, աւելի քան երկու հարիւր
փոքր և մեծ գետեր վազելով այս լեռնադօսիցից
որոգում են շրջակայ գաշտերը և հովիտները, որոնք
Հայաստանի ամենաբարեբեր մասն են կազմում: Քե-
րակներն լեռներ (Բինդեօլ - գաղ) գտանվումէ Սու-
կամից հարաւ արևմուտք, իւր անունը ստոցելէ
հազարաւոր ճակներից և գետերից, որոնք գտան-
վում են այս լեռան վերայ: Այս լեռների ամենա-
բարձր կետը Սերմանց գագաթն է, որ մօտ 12,000
ոտնաշափ բարձրութիւն ունի: Սերմանց գագաթից
գեղի հիւսիս է գնում Կարսոյ լեռնաշղթան, որ այլ
և այլ անուններով շրջապատումէ Կարսոյ քա-
զաքը, մեկ ուրիշ Ճիւղ էլ Մայրա անունով գեղի
հարաւ գնալով հասնում է մինչեւ երկու նիդրատների
միանալու աելը ուր և վերջանումէ Հայկական
պարը:

Հայկական - պարը իրանից շատ Ճիւղեր է ար-
ձակում գեղի հիւսիս և հարաւ: Հարաւում նշա-
նաւոր է այն մեծ լեռնախումբը, որ շրջապատումէ
Վանայ լիճը: Այդ խումբը կազմով լեռներից նշա-
նաւոր են Ծաշէր լեռները (Ալա - գաղ). գտան-
վում են Մասսից գեղի հարաւ արևմուտք, մօտ
10,000 ոտնաշափ բարձրութիւն ունին: Այս լեառ-
ներից մեկ շղթայ ձգվումէ գեղի հարաւ արևմուտք

մինչեւ Վանայ լճի հիւսիսային կողմը, ուր կանգնած
է բարձրագագաթ: Սիկան լեառը, որ մօտ 13,000
ոտնաշափ բարձրութիւն ունի և համարեա միշտ ձիւ-
նովէ պատաժ: Սիկանից գեղի հարաւ արևմուտք
Վանայ լճի արևմուեան կողմը ձգվումէ Նելրութոյ
լեառը (Նիմրուգ - գաղ). համանուն գագաթով, որի
վերայ մինչև այժմ կայ հրաբխային լիճ: Ընցաւարն
գտանվում է Վանայ լճի հարաւային կողմը, մօտ
9,000 ոտնաշափ բարձրութիւն ունի: Տածկուածէ
խիստ անտառով: Արքու գտանվումէ Ընձաքեարսից
գեղի արևելք: Առանու գտանվումէ Արտասից հա-
րաւ, Արքու լեռն գտանվումէ Վանայ լճի արևե-
լքան կողմը:

Ինչպէս մեկ լեռնախումբ հարաւում պատումէ
Վանայ լիճը, այնպէս և մեկ ուրիշ լեռնախումբ
հիւսիսում պատումէ Սևանայ լիճը: Այս լեռնա-
խումբը ընդհանուր անանով կոչվումէ Սևանայ
շղթանելլ կամ Փոքր - Կովկաս: Սորա անդամները են:
Գեղանոյ լեռները, գտանվում են Սևանայ լճի արև-
մուեան կողմը, որա ամենաբարձր գագաթն է սպի-
տակ լեառը (Աղդաղ) որ մօտ 12,000 ոտնաշափ
բարձրութիւն ունի: Գեղանունեաց լեռներ (Փիւչե-
լան գաղ) ձգվում է Սևանայ լճի հարաւային կողմը,
ունի բարձր և ձիւնավատ գագաթներ, որոնցից
արևելքում նշանաւոր է Սարիալ իսկ արևմուտքում
Գագաթն: Գագաթն լեռներ ձգվում են Գեղարքու-
նեաց լեռներից գեղի հարաւ մինչև Գողթն գա-
ւառը Արաքսի ուղղութեամբ, որա ամենաբարձր գա-

գաթն է Ահար: Գարուսյ լեռները հասնելով Բարկուշատ վտակին բարձրութեամ են աջ տփով գէպի հիւսիս կազմելով Գիլախյառա լեռնաշղթան: Բացի վերոյիշեաներից այլ և շատ ուրիշ ժայռուտ լեռնաւ շղթաներ մէկ մէկու կազած անձուկ հովիաներով, բարձր գագաթներով, ուղղահայեաց կողերով լցնում են բոլոր Սիւնեաց աշխարհը: Սոցանից մէկ Ճիւղ թեքուելով գէպի հիւսիս Սևանայ լճի արեւելան կողմով Վարշայաց լեռներ անունով ձգվում է գէպի Հայաստանի հիւսիս արեւելոք Կուր գետի վերին մասի աջակողմեան ջրաբաժինը կազմելով:

Արտգոծ (Արգեօլ): Սորա գագաթը բազկացած է չորս ձիւնապատ բլուրներից, որոնց բարձրութիւնը ծովի մակերեւոյթից մօտ 13,000 ոտնաշատի է: Արագածի ստորոտները ներկայացնում են խիստ պերճ արօտներ, այդ պատճառով և շրջակայ Հայ, Պարսիկ և Քիւրդ ցեղերը իւրեանց անթիւ ոչխարիներով շարունակ թափառում են այդտեղ: Արագածից գէպի արեւելք գտանվում է Արայի լեռուը (Արանը եարըք): Արայի լեռնից գէպի հարաւ արեւելք գըտանվում է Արայի լեռուը (Վերանը):

Պարթարէան լեռնեն: գտանվում է Հայաստանի հիւսիս արեւմտեան կողմը ձորոխի ձախ ափին, այժմ կոչվում է Պալիսար գաղ իւր ստորոտում գտանուած Պալիսար գիւղի անունով, մօտ 8,000 ոտնաշատի բարձրութիւն ունի, ծածկուած է խիտ անտառներով և լիքն է որսի կենդանիներով. Հին ժամանակ յայտնի էր իւր ամռու և անմտաւելի տեղերով:

Մասկէտան լեռաներ, սկսում է Կովկասեան լեռաների հարաւային ստորոտից և ուղղուելով գէպի ձորոխի բերանը աջ կողմից ձգուելով կազմում է ջրաբաժինը կուրի, Արաքսի և Նվիրատինը մէկ կողմից և Իհոնի ու ձորոխինը միւս կողմից *): Մոսկիքեան լեռաները իւրեանց բազմաթիւ Ճիւղերով ծածկում են Տայոց և Բարձր - Հայոց հահանդները: Դիսաւոր Ճիւղերը են՝ Կշարջւ գտանվում է Տայոց հիւսիսային կողմը:

Օթանի (Քիրեջլու). գտանվում է Կարինից գէպի հիւսիս արեւելք. Կապոյա (Գեօդ - գաղ) գտանվում է Կարինից գէպի հիւսիս արեւմուտք. 10,000 ոտնաշատի բարձրութիւն ունի: Աւառաւ կամ Գրշանտեմ գտանվում է Կարինից հարաւ արեւմուտք Եվրատի աջ ափին:

Վաստանդաց սարեր (Սոլմնլու) ձգվում է Արաքսից գէպի հիւսիս Ուահ գետի ձախ կողմից. Խիստ հարուստ է անտառով, այս լեռաները գէպի հիւսիս արեւելք ուղղուելով կազմում են Զարիշատուսարերը (Զըլըլ գաղ), որոնք կազմում են Ուահ գետի և Կուր գետի ջրաբաժինը:

~~Տօրս~~. սկսվում է Կիլեկիայի արեւմտեան սահմանից և նորա հիւսիսային կողմով ձգուելով մըտնում է Մեծ - Հայաստան և Վանայ լճի արեւմտեան կողմը շատ Ճիւղերի բաժանուելով միանում է տե-

*) Տես Կիպերտի աշխարհ, քարտեզը Die Euphrat-Tigris länder Berlin. 1854.

գական լեառների հետ. Տօրոսի Ճիւղերից նշանաւոր են Խոյ շղթան Անթաղ գաղաթով և դորանից դէպի հարաւ արևելք Գրգռու լիառը: Կորդուայ լեառներ (Ճիւղի դաղ), ձգվում է Հայաստանի հարաւային կողմը Զաբ գետի բերանից մինչև Բոհդան գետի բերանը, ուր շատ Ճիւղերի բաժանուելով միանում է Տօրոսի հետ: Զագրոսի շղթան ձգվում է Որմիոյ լճի արևմտեան կողմը և բաժանում է Վանայ և Որմիոյ լճերի աւազանները: Այս լեառները իւրեանց ուղղահայեաց կողերով, բարձր գաղաթներով, խորը անդունդներով, խորխոմներով և ծործորներով շատ ամուր և անմատչելի տեղեր են ներկայացնում, ուր մինչև այժմ շատ կիսանկախ Քուրդ, Ասորի և այլ ցեղեր են բնակվում: Զագրոսից դէպի արևմտաք գտանվում է Հասկեռի բարձր լեռնաշղթան, որի Տաւրոջելու գագաթը բարձրութեամբ Մասիսից ոչինչով պակաս չէ: Զագրոսի մէկ ուրիշ Ճիւղը պատում է Որմիոյ լճի արևելեան կողմը. այսուղ Զագրոսի ամենաբարձր կէան է Սահանու գագաթը, որ մօտ 11,000 ոտնաչափ բարձրութիւն ունի: Գէշանց սարերը (Գիլան) գտանվում են Կասպից ծովի արևմտեան կողմը և շատ Ճիւղեր են արձակում դէպի Հայաստանի խորքերը. Գեղմանց սարերից դէպի արևմտաք գտանվում է Սաւալսն գագաթը, մօտ 12,200 ոտնաչափ բարձրութիւն ունի: Այսուղից մէկ լեռնաշղթայ մօտ 8,000 ոտնաչափ բարձրութեամբ ձգվում է դէպի արևմտաք Որմիոյ

լճի հիւսիսային կողմը և բաժանում է Որմիոյ աւազանը Որմիոյ լճի աւազանից *):

ՓՈՔՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅՑԹԸ

Փոքր - Հայաստանի մակերեսոյթը բոլը լիւ ապակեր է ներկայացնում քան Մեծ - Հայաստանինը: Մեծ - Հայաստանը իւր սահմանային գաշտավայրիներից ատահճանաբար դէպի կինդրօնն է բարձրանում, այն ինչ Փոքր - Հայաստանի բարձր մասը՝ լեռնագուախները ձգվում են նորա սահմաններում, որոնք դէպի երկրի ներսը տարածուելով կազմում են Փոքր - Հայաստանի ընդգրածակ բարձրաւանդակութիւնը, որի վերայ գտանվում են երկրորդական աւելի փոքր բարձրաւանդակներ: Մեծ - Հայաստանը Հայկական-պարով բաժանվում է Հիւսիսային և Հարաւային մասերի, իսկ Փոքր - Հայաստանը Անտիարոսով բաժանվում է արևելեան և արևմտեան մասերի: Մեծ Հայաստանը բազմաթիւ լեռնագուախներով բաժանվում է միեւնացից անջատուած և յատկութեամբ բոլը լիւ տարբեր մասերի. Փոքր - Հայաստանը կազմում է մի ընդգրածակ, միակերպ և համեմատաբար աւելի ցածր դիրք ունեցող լեռնադաշտ:

*) Մեծ - Հայաստ. մակ. աւս Հ. Ալբանի քաղ. աշխ. Խաչեձեանի Հնախօսութիւնը ա. Հատոր. Կեպերտի քարտէզը. „Asiatische Türkei Kaukasus lander“ 1881.

ՓՈՔՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԱՌՆԵՐԸ

Փոքր - Հայաստանի հիւսիսային կողմը ձգվում էն Պարխարեան լեառները իւրեանց բազմաթիւ ճիւղերով, որոնցից նշանաւոր է 1, Սատան լեառը, որ իւր փառաւոր տեսքով նմանվում է Մասիսին. 2, Հաբեշ լեառն, գտանվում է Աստղեկից դէպի արևելք. շատ հարուստ է մայրի և կաղնի անտառներով. 3, Շահնշահ բնակչում է Աստղեկից դէպի արևմուտք, նոյնպէս հարուստ է անտառներով:

Փոքր - Հայաստանի արևմտեան կողմը գտանվում է Արքէս (Երճիաս գաղ). Հարարխային լեառն է, մօտ 12,200 ոտնաշափ բարձրութիւն ունի: Տօրոս. գտանվում է Փոքր - Հայաստանի հարաւային կողմը: Անտիգրան. Տօրոսի մէկ ճիւղն է, որ ձգվում է Փոքր Հայաստանի միջով հարաւ արևմուտքից դէպի հիւսիս արևելք մինչև Բարձր - Հայոց Նահանգը, ուր շատ ճիւղերի բաժանու ելով միանում է տեղական լեառների հետ *):

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ

Կիլիկիայի մակերեւոյթը ներկայացնում է երկու միմեանցից բոլորովին տարբեր պատկերներ: Նորա

*) Փոքր - Հայաստ. մակ. տես Հ. Ալեքանի քաղ. աշ. և Փոքր Ասիա Կիպերտի. նոյնպէս Կիպերտի ՀԱ-
ստածիա Կավաս լան.

մեծ մասը լեառնօտ ապառաժային է, ուստի և կոչվում է Քարային կիլիկիա կամ Տրաքեան Կիլիկիա: Ծովեղբեայ փոքրիկ մասը յածր դիրք ունի և կոչվում է Գառայային կիլիկիա: Քարային Կիլիկիան ձըգվում է Կիլիկիայի արևմտեան կողմը Լամասից մինչև Սելինոս գետակը: Այստեղ սփովում են Տօրոսի բազմաթիւ ճիւղերը, որոնք տեղ տեղ մինչ այն աստիճան մօտենում են ծովին, որ հազիւ մէկ մարդ երկիւղով կարող է անցնել ծովեղբեայ, տեղ տեղ հըսկայական ուղղահայեաց ապառաժները խորը ծովն են ընկդմվում, տեղ տեղ մինչ այն աստիճան յետեն քաշվում: որ ընդարձակ գաշտավայրներ են կազմում Այդ լեառնային ճիւղերը դէպի հիւսիս արևելք միանալով աւելի բարձրանում են և Կիլիկիայի հիւսիսային սահմանում մի պար են կազմում, որ է Տօրոսի (Քուղար - գաղի) պարը: Բայց իսկապէս պար էլ չի կարելի անուանել, որովհեաւ Տօրոսը ոչ թէ շղթայ է կազմում, այլ մի քանի կարդ բարձր լեռնակոյաեր և այդ պատճառով զարմանալի չէ, որ այնքան բազմաթիւ գետեր առանց խոնդոտի 12,000 ոտնաշափ բարձրութիւն ունեցող Տօրոսը կարելով Կիլիկիան գաշտավայրներով հանդարա հոսալով Կիլիկիայի ծովն են թափվում:

Դաշտային Կիլիկիան ձգվում է Լամասից արևելք մինչև Ամանոս լեառը, որով բաժանվում է Եփրատացոց գաշտավայրից: Այս գաշտավայրների հարաւ արևմտեան մասը շատ յածր դիրք ունի և ծածկուած է Ճաշիճներով, իսկ հիւսիս արևելեան

մասը ճանձկուած է ցածր բլուրնելով, որոնք պիտ
նում են հիւսիս արևելեան ուղղութեամբ Ամանոսի
հետ:

Կենելիսիք լւանեցը: Ամանոս (Գեավուր զաղ) սկըս-
վում է Հռովիսիք (Թաղէլքանդիր) հրուանդանից և
հիւսիսային ուղղութեամբ ձգուելով Մարտի մօս
մանում է Տօրոսի հետ կաղմելով լեռնային ան-
կիւն: Չնայելով որ Ամանոսի բարձրութիւնը 5—
6000 ոտնաչափ է, աւելի խիս է և շղթայաձեւ քան
Տօրոսը, ուստի կարողանում է հօսող ջրերի առաջն
առնել: Ուերեան լեռո (Մուսագալ) գտանովում է
Հռուանդանի վրայ, կաղմում է պատմա-
կան Արևիկայի հարաւային ասհմանը: Տօրոս (Բուլ-
զար գաղ), ձգվում է Կիլիկիայի հիւսիսային ասհ-
մանում իւր ցից ցից և բարձր կատարներով, ուղ-
ղահայեաց կողերով, մերկ ժայռերով և խորը ան-
դունդներով շատ անմատչելի տեղեր է ներկայաց-
նում: Տօրոսի արևմտեան Ճիւղերից նշանաւոր են
Կրտոս (Արագիծոտիւկ) ձգվում է Կիլիկիայի արե-
մտկան ասհմանի վրայ արևելքից արևմուտք: Ին-
չորս ձգվում է Կալիկադնոսի բերանից ուղեղ դեպի
արևմուտք:

Վերոյիշեալ լեռնախումբերը շրջապատելով
Կիլիկիան դժուարացնում են ցամաքային հաղոր-
դակցութիւնը շրջակայքի հետ մանաւանդ, որ դե-
աելն էլ նաւագնաց չեն: Միակ ճանապարհները ցա-
մաքային հաղորդակցութեան նորա կիրճերն են,
որոնք նախնի ժամանակ դրունք են կոչվում: Կիր-

ճերից նշանաւոր են: 1. Ամանոսի ուրունք (Բէյլմնի
կիրճ): միայնում է Կիլիկիան գաշտավայրը նվիրատա-
ցոց գաշտի հետ: 2. Ասորոց ուրունք միայնում է Կի-
լիկիայի գաշտը Ասորոց գաշտի հետ: Մէկ ուրիշ
ճանապարհ հաղորդակցութեան կազմում է Պիրա-
մոսի հովիտը: 3. Կիլիկիան ուրունք (Բիւլէք բօղաղ)՝
միակ ճանապարհն է Կիլիկիայի և Փոքր-Հայաս-
տանի հաղորդակցութեան, ընկնում է Կիւղնոսի հո-
վետում *):

ՅԱՅՐՑ - ՄԻԶԱԳԵՏՏՔԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ

Հայոց - Միջագետքի մակերեւոյթը հարթ հա-
ւասար է գեղեցիկ տափաստաններով և արօտներով
ծածկուած: Այդ միակերպութիւնը փոքը ինչ փո-
փոխվում է մի քանի կարգ բլուրներով, որոնք ձբգ-
վում են Հայոց - Միջագետքի հիւսիսային կողմը և
կաղմում են Մասրու լեռան (Կարաջադաղ) շարունա-
կութիւնը ու Ճիւղերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԲԱՆԴԱԿ- ՆԵՐԸ

Հայաստանի լեռնագօտիները փոխադարձ կոր-
տելով միմեանց լիրեանց վիշերի վրայ կաղմում են
*) Կիլիկիայի մակերեւոյթը տես Աօնքօյի գրուածքը
Կիլիկիա: «Փոքը» ամսագրում թարգմանուած:

շատ բարձրաւանդակներ 2—8,000 ոտնաշափ բարձրութեամբ, միացած կողմնակի գժուար անցանելի կիրճերով մինչև 7,000 ոտնաշափ բարձրութեամբ: Մեծ - Հայաստանի բարձրաւանդակները նըման են Փոքր - Հայաստանի և Կիլիկիայի բարձրաւանդակներին իւրեանց հողի բազարութեամբ, ամէնքն էլ խառն ջրային և հրաբխային կազմութեանց ծալերով խխու հարուստ են. այդ հրաբխային նիւթերը (սևակուճ, արաստ, գրախիտ, պօրփիւր) օդի և ջրի ազդեցութիւնից փշուելով և միանալով ջրային կազմութեանց (կաւի, կրի, աւազի) հետ առաջնում են ամենապարարտ և ընտիր մշտկելի հող: Հողի աւելի մեծ արգիւնաբերութեան օգնում է հրաբխային կազմութեան տաքութիւն երկար պահող յատկութիւնը, բարձրաւանդակների հարթ հաւասարութիւնը, որով անձրեւ ամենուրեք հաւասար է բաժանվում և վերջապէս երկիր կազմող շերտերի ծակոտիքն բնութիւնը, որ օգնում է եկած անձրեների ջրին մեծ քանակութեամբ ծծուելու երկրի մէջ, որ յետոյ հանդարտ գոյուշիանալով մատակարարում է բոյսերին և կամ բազմաթիւ ստորերկեայ աղբիւներ կազմելով իջնում է մերձակայդաշտերը և հովիտները որոգելու:

Գլխաւոր տարբերութիւնը Մեծ - Հայաստանի բարձրաւանդակների Փոքր - Հայոց և Կիլիկիայի բարձրաւանդակներից այն է, որ Մեծ - Հայաստանի բարձրաւանդակները բազմաթիւ կիրճերով միացած են իրար հետ, և իւրեանցից արձակում են մեծ քաշ:

Նակութեամբ գետեր և գետակներ, որոնք առնելով անձրւային աւելորդ ջուրը չեն թոյլ տալիս ճահիճներ կազմուելու և օդը ապականելու:

ՄԵԾ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԿԱՆԴԱԿՆԵՐԸ

Մեծ - Հայաստանը լինելով մի բարձրագիր երկիր ունի և շատ բարձրաւանդակներ, որոնցից շատերը ներկայացնում են ամենաընտիր գաշտեր, աղօններ և վարելահողեր: Իւրեանց ընդարձակութեամբ աւելի յայտնի են՝ 1, Կորճայ բարձրաւանդակը. Հայաստանի ամենաընդարձակ և բարձրագիր բարձրաւանդակներիցն է, մօտ 7,500 ոտնաշափ բարձրութիւն ունի. օդը յուրահ և առողջարար. Հողը արդաւաննէ. կաւոտ և գաջուտեղեր էլ շատ ունի. Երջակայ բարձրաւանդակ, դտանվում է Կարինից հարաւ արևեմուտք. մօտ 6,000 ոտնաշափ բարձրութիւն ունի, երկիրը ծածկուած է սևահողով և կաւահողով: Երբակայ բարձրաւանդակ, դտանվում է Կարինից գետի արևեմուտք, յայտնի է իւր խխու պաղաբերութեամբ. մօտ 5,000 ոտնաշափ բարձրութիւն ունի: Արտաքիտան բարձրաւանդակ, բաղկացած է մի քանի բարձրաւանդակներից, որոնք դտանվում են Սևանայ լճի արևեմուան կողմը և 3—6,000 ոտնաշափ բարձրութիւն ունին. ըստ մեծի մասին ծածկուած է սպիտակահողով: Մեծեայ կամ Վարաբղի բարձրաւանդակ. դտանվում է Սևանայ լճի հարաւ արևելան կողմը. Հայաստանի ամենից ըն-

դարձակ և լեռնոտ մասն է. ամբողջապէս բազկացած է լեռնային հանգոյցներից և խսկապէս ութէ մէկ այլ շատ բարձրաւանդակներ է կազմում մօտ 8,500 ոտնաչափ բարձրութիւն ունի, ծածկած է սևահողավունիքով. հարուստ է անտառներով: Տառապայ բարձրաւանդակ, գտանվում է Վանայ լճի հարաւային կողմը, մօտ 6,500 ոտնաչափ բարձրութիւն ունի: Աշբակայ բարձրաւանդակ գտանվում է Որմիոյ լճի հիւսիս արևմտեան կողմը, մօտ 8,000 ոտնաչափ բարձրութիւն ունի: Առաջապահութեան բարձրաւանդակ, կազմում է Հայաստանի հարաւարեելեան անկիւնը, մօտ 6,000 ոտնաչափ բարձրութիւն ունի:

Հայաստանի աւելի ցած բարձրաւանդակները են Գուգարաց կամ Սփուլցիոյ բարձրաւանդակը, որ մօտ 3,000 ոտնաչափ բարձրութիւն ունի և հարուստ է անտառներով: Խորբեպոտե բարձրաւանդակ, մօտ 3,000 ոտնաչափ բարձրութիւն ունի, հողը կաւային և աւաղային է, երկիրը լաւ մշակուած: Տիգրանաշերտե բարձրաւանդակ. Հայաստանի տմենից ընդարձակ և ցածրադիր բարձրաւանդակն է, մօտ 2,000 ոտնաչափ բարձրութիւն ունի, երկիրը կաւային, աւաղային և սևահողավունիքով կազմութիւն ունի:

ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿՆԵՐԸ

Փոքր - Հայաստանը ամբողջապէս կազմում է մի մեծ բարձրաւանդակ մօտ 4,000 ոտնաչափ բարձ-

րութեամբ: Սորա մի քանի տեղերը ցած ընկած են, ուստի անձրեների հաւաքուելուց ճահճաներ են առաջանում, մանաւանդ կրային տեղերում: Նատ տեղեր էլ երկիրը աւաղային և քարային կազմութիւն ունի, ուր նոյն իսկ մեծամեծ գետեր գետնի տակ կորչում և նորից երեւում են: Փոքր - Հայաստանի բարձրաւանդակներից նշանաւոր են Սէլսոսիոյ բարձրաւանդակը մօտ 4,000 ոտնաչափ բարձրութիւն ունի, երկրի հողը կրային, աղային և սպիտակահողային կազմութիւն ունի. շատ կան և զաջային տեղեր: Ընդհանրապէս բարձրաւանդակի մեծ մասը արգաւանդ բարեերէր է և լաւ մշակուած. հարուստ է և անտառներով: Աւաղայիոյ բարձրաւանդակ, գտանվում է Փոքր - Հայաստանի հարաւարեեան կողմը. Մաշտիսիոյ բարձրաւանդակ, գտանվում է Փոքր - Հայաստանի հարաւարեեան կողմը: Կիլիկիայում նշանաւոր է Մարտաւանդակը: Հայոց Միջազգեաքը դաշտային լինելով չունի բարձրաւանդակ, նորա բարձրութիւնը ծովի մակերեսոյթից մօտ 1,000 ոտնաչափ է: *):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԵՐԸ ԵՒ ՄՈՐԵՐԸ

Դարձակ կամ Մարդու գաշտ. ձգվում է Կասպից ծովի արևմտեան կողմը հիւսիսից հարաւ. սորա երկայնութիւնը մօտ 180 վերսէ, լայնութիւնը մօտ

*): Բարձրաւանդակների մասին տես Ալիշան, քաղ. աշխ:

120 Վերասահ Այս Կաշովի մակերեսոյթը շատ ցածր է և մինչեւ անդամ՝ ծովեղբեայ մի քանի տեղերը Մեծովի մակերեսոյթից էլ շատ ցածր են: Երկրի մակերեսոյթը ամեն տեղ միակերպ չէ: Տեղ տեղ ծածկուածէ մանր տւազով, որ խիստ քամու ժամանակ սիւնաձև գեալի վեր բարձրանալով մթնացնում է օդի, տեղ տեղ երկիրը կառային լինելով հաւաքուած անձրեային ջրերից աշագին ասրածութեամբ ճահիճներ է կազմում ծածկուած եղեգնով լիքը հազարաւոր թռչուններով, օձերով, մօղէսներով և գեռուններով, տեղ տեղ երկիրը աղոտէ, որ ամառ ժամանակ ահագին ասրածութեամբ երկիրը սպիտակ շերտով ծածկում է: Բայց մեծ մասը ծածկած է կարճ խոտով, որ լաւ կերակուր է կազմում անսառնների համար: Անսառների է ամառ ժամանակ այստեղի օդը, վնասակար ճահիճներից առաջացած տենդային գոլորշիք, արեգակի կիսիչ ճառագայթները, բազմոթիւ թիւնաւոր մժեղները և գեռունները, քաղցր ջրերի պակասութիւնը, երկրի անպաղաբերութիւնը. Այստեղ ամբողջ ձևում են թաթարների, թուրքմենների և Քուրդների հարիւրաւոր թափառական ցեղեր, որոնք լաւ կերակուր են գտնում իւրեանց հօսի և խաչինքի համար: Բայսոտիան բաշտ կամ Մեծ - անսպաս - հայոց: Գտանվում է Կուրի Յօրի և Ալազանի. մշտ ձգում է հիւսիս մինչեւ Սլամիի կողմերը, ծածկուած է դեղեցիկ գալարդ, բայց մշակել կարելի է միայն արուեստական լու որոդմամբ: Արաւ-

ծանուոյ և նորա վտակ Խնուսի. մշտանուած տարածութեան վրայ ձգվում են Թորշու և Դարայէտաղ գոշտերը, պրոնք տեղ տեղ աւազով և տեղ տեղ դալարով են ծածկուած, բայց մշակութեան անյարմար են:

Փոքր - Հայաստանում նշանաւոր է Մատումեայի գաշտավայրը:

Հայոց - Միջագետքը ամբողջապէս ներկայացնում է մի մեծ գաշտավայր, որ կարելի է կոչել Միջագետի գաշտավայր: Կիլիկիայում ամբողջ ծովի գրեայ մասը գաշտավին է:

Հայաստանը ունի և մօրու կամ Ճահճուտ տեղեր ծածկուած եղեգնով լիքը թռչուններով: այդպիսիներից նշանաւոր են Կորսոյ - Մօրը, որ գտանվում է Կարինից հիւսիս: Մէծամու գտանվում է Արագածից հարաւ: Նորութայ մօրը, որ գտանվում է Նարուրայ գաշտում: Փոքր - Հայաստանում նշանաւոր է Մերսամիայի մօրը և այն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ՊՂՈՒՑՈՆԱԿԱՆ, ՊՈՄԻԾՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԵՓԵՍՏԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հայաստան երկրի ներքին կազմութիւնը գլխաւորապէս երեք կերպ է առաջացած, Պղուտոնական կամ հրային, Պոսիփոնական կամ ջրային և Հեփեստեան կամ հրաբխային:

Պղուտոնական իոն հրային կազմութիւն. առա-

ջացած է ամենաշին ժամանակներում երկրիս վերայ հալած և տաքնի թերը պաղելով սառելով, կեղև կապելով և քարանալով։ Եյն կազմութեան գլխաւոր քարերից մէկն է հատաքարը (գրանիտ), որ իւր մէջ բովանդակում է որձաքար, պտկարդ և մասամբ փոյլար։ Մոցան ներկայութեամբ կարելի է որոշել թէ երկրի կազմութիւնը որ տեսակին է վերաբերում։ Հատաքարի մէծ քանակութիւնը գտանվում է Փոքր Հայաստանի հիւսիսային կողմը, մասաւանդ Գիւմիշխանայիշուր արիապետում է պղուտոնական կազմութիւնը։ Նոյն իսկ քաղաքը կարմրագյն հատաքարի ցից և մերկ կողերի վերայ է շինած։ Գիւմիշխանից դէպի հարաւ արևելք այդ կազմութիւնը աւելի զօրանում է։ Պղուտոնական կազմութիւնը իւր առատ հատաքարով տիրում է և Արմենի շրջակայքին, այստեղ աւելի մէծ քանակութեամբ քան Փոքր Հայաստանում։ Հայաստանի շատ տեղերը այդ կազմութիւնը ունին, միայն նորածածկուած լինելով ուրիշ կազմութիւններով չեն երևում։

Պատմուած է ամ Զրային հաղութիւն։ Պատմական շրջանից առաջ Սև և Կասպից ծովերը միացած են եղած և այդ ժամանակ Հայաստանը ծածկուած է եղել ջրով։ Չուրը թէ մեքենայապէս և թէ քիմիապէս լուծելով իւր յատակ կազմող հողերը և քարերը և ապա մէկ տեղից միւս տեղ տանելով և կամ անմիջապէս շերտ շերտ նստացնելով յատակի վերայ բարակ տիղմը առաջացրել է Զրային կազմու-

թիւնը։ Զրային կազմութիւնը առաջանում է և ջրերի խիստ գոլորշիանալուց և կամ զօրեղ պատճառներից ջրի մեծ քանակութեամբ յետ քաշուելուց երբ ջրի մէջ գտանուած աղերը նոյնակա շերտ շերտ նստանմ են երկրի վերայ։ Բայց որովհետեւ ջրի բերած արյմբը այլևայլ ժամանակներում մինչնյնը չէ, այդ պատճառով իւրաքանչեւր ժամանակից նորանոր շերտեր են կազմուել, իւրաքանչեւր շերտ իւր մէջ բովանդակելով իւր ժամանակակից կենդանիք, որոնք մերջերում քարանալով յահնենան մնում են։ Երասխի հովիտը Բայազիտի կողմերը և Շարուրայ գաշտը շատ հարուստ են քարացած խեցեմորթերի մնացորդներով։ Անացիսայի կողմերում նոյնակա խիստ շատ են քարացած խեցեմորթեր։ Եփրատի աջ ափում Շարուրիք գիւղի մօտերը կրաքարի ժայռեր կան։ այդ կրի մէջ կան բազմաթիւ երկփեղինեայ, մի փեղկանի խեցեմորթեր, ստորին կենդանիների և ձաւագոյթածեների մնացորդներ։

Զրային կազմութեամ զլիսաւոր հողերը են կիր, կաւ, փշրաքար, աւաղ, ասրաքար և չեչաքար, բայց ամէնից առատ է կիրը, որի պատճառով և Մեծ Հայաստանը երրորդական շրջանի կրային կազմութեան են մերաբերում։ Համարեամ ամբողջ Հայկական պարը կրային կազմութիւն ունի։ այդ պատճառով և Տաճիկները շատերին այդ մերան Ճիւղերից Աղդաղի են անուտնում սպիտակ կրի Համնը։ Պարխարեան և Սովկիքեան, ինչպէս և շատ ուրիշ լնոներ կրային և գաջային կազմութիւն ունին։ Միրանի

Ենաները այժմ Քիրեջլու են անուանվում, նորա բաղադրիչ կրի պատճառով: Երրորդական շրջանի ջրային կազմութեան են վերաբերում նոյնպէս Մանանալի, Գարանալի, Կուզափի և Մշի կողմերը, որ հարուստ են աղահանքով: Նաև տեղեր, ինչպէս Գերջանի, Թորթումի, Խոնուսի, Բայազեղի կողմերը շատ աղբիւրներ, Ճահիճներ և գետեր աղբատ կամ գուղլու են կոչվում ծովային աղի համ ունենալու պատճառով: Հայաստանի արևելիան կողմը Կասպից ծովեղբները մասամբ Կուրի և Արաքսի հովիաները նոյնպէս և Կիլիկիայի ծովեղբները նորագոյն ջրային կազմութեան են վերաբերում և նոր են աղատուած ջրի տակից, բայց նոցա հողը ծովային հեղեղեց է առաջացած: ուստի և կոչվում է հեղեղահող: Այժմ ջրային կազմութեան մեծ մասը ծածկուած է հրաբխային կազմութեամբ:

Հետեւոք է այս Հրաբխային կառավարելու: Դեռ Հայաստանը ջրի տակ ծովերի յատակ էր կազմում, որ ստորերկիւայ հրային ոյժը գեպի վեր էր ժայթքում, իր հալուած նիւթերը ահագին տարածութեամբ ծածկում էր ծովի յատակը և այդպիսով կազմում հրաբխային շերտեր: Բայց աւելի մեծ փոփութեանց ենթարկուեցաւ Հայաստանը ջրի տակից գուրս գալուց յետոյ: Հայաստանում երկու անգամ մեծ և ընդհանուր հրաբխային ներգործութիւն է պատահած: մէկը պատմական շրջանից շատ առաջ, միւսը պատմական շրջանի սկիզբներում, առաջին կարգի հրաբուխները կոչվում են նախնական կամ հին, իսկ

երկրորդ կարգինը՝ նոր, որ թուով խիստ շատ են նախնականից *):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱԲՈՒԽՆԵՐԸ

Հայաստանը ներկայացնում է մէկ մեծ հրաբխային լեռնախումբ: Խեռնախումբը կազմուլ հրաբուխները, ուղեղ է, այժմ հանգած են, բայց նոցա արած խիստ մեծ յեղափոխութիւնները յաւֆտենական են: Երկրի վերին մասերը համարեած ամրող ջապէս հրաբխային նիւթով են ծածկուած: Հրաբխային լեռները այժմ խիստ շուտով կարելի է ճանաչել նոցա կոնաձեռնութիւնից, գագաթային փոսերից, լեռան շրջակայքի բալաղրութիւնից և մերձակայ տաք հանգային ջրերից: Հայաստանի մեծ հրաբուխների բերանը կողքից է եղած, իսկ փոքր հրաբուխներինը գագաթից: Հայկական հրաբխային լեռնախումբը իւր ստորերկիւայ զօրութեամբ միանում է հիւսիսում Կովկասեան, արևմուտքում Փոքր Ասիայի և արևելքում Վրանի լեռների հետ և նորանց հետ միասին կազմում է մէկ ընդհանուր հրաբխային համակարգութիւն: Այդ կարելի է նկատել նորանից, որ բոլոր հրաբուխների ներքին բաղադրութիւնը մէկ է. նոքա բոլորն էլ մէկ ընդհանուր ուղղութիւն ունին, մէկ տեղ հրաբխային զօ-

*) Երկրի կազմութեան մասին տես Ալեօդէն. Գիշաշխ. Ֆոխտ երկար. Ալեշ. քաղ. աշխ.

բութիւն արտայալութելիս նկատվում է և ամեռղջ
խմբի մէջ և վերջապէս դոցա նախնական հրաշն-
չութիւնը եղած է մէկ ժամանակ և մէկ պատճառից:

ԱՊՋՎՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԱՅՆ ԳՐԱԲՈՒԽՆԵՐԸ

ՄԵԾ - Հայաստանի հրաբուխներից նշանաւոր են՝
Մասիս: Հայաստանի հրաբուխին զօրութեան կենտ-
րօն կարելի է համարել դորա ներդործութիւնը
պատմական շրջանից առաջ պատահած է, բայց իւր
ներքին զօրութիւնը խիստ երկրաշարժներով և այլ
երկոյթներով ստէպ ստէպ կրկնած է պատմական
շրջանում: Նշանաւոր է 1840 թուականի սարսա-
փելի երկոյթը: Յունիսի 20-ին արել մայր մանե-
լուց կէս ժամ առաջ երկինքը պարզ և վճիռ էր,
յանկարծ շրջակայ բնակիչները մէկ տեսակ որոտա-
ձայն բամբիւններով զարհուրեցան, որ մեծ Մասիսի
մօտ ամէնից աւելի ուժգին և սոսկալի էր հնչում:
Մէկ կողմից հողը ալիաձե տատանուելով հարաւ ա-
րելելեան ուղղութեամբ խիստ մեծ վնասներ էր պատ-
ճառում նարուրայ և նախջևանայ կողմերին, միաս
կողմից Արկուռիից մի քանի վերստ վեր մռայլ ձորի
ծոցում մեծ ձեղքուածք բացուելով, խիստ օդ և
շողի էր արձակում, որոնցից սաստիկ ուժով դուրս
նետուած քարերը և հողերը սարի վրայից դէպի
դաշտն էին արձակվում: Հրաբուխի բերանից դուրս
եկած շողեղն ամպերը շուտով Մասիսի կատարից
աւելի վեր բարձրացան, շոգին դուրս պոռթքելուց

յետոյ դոյնգեղոյն էր երեսում գորշ հրեղէն կարմիրա-
գոյն, կապտագոյն և այլն: Բայց շուտով գոլրշու-
կարմիր և կապրյա դոյնը մռւթ սեի փոխուեցաւ,
օդն էլ վերին աստիճան անախորժ ծծմբային հոտով
լցուեցաւ: Եւառը շարունակ թնդում էր, գետինը
անդադար սասանում էր որոտումներով: Երկրի տակ
եղած մռնչական և գղրդական ձայների հետ մէկ
տեղ յայտնի և որոշ լսվում էին օդի մէջ ցատքած
քարերի շառաչիւնը, որոնք ուումբի պէս սլանում էին.
Երան ներսի կողմից եղած որոտական թնդիւնը ո-
րոշ զանազանվում էր այն ձնյժմունքներից, որ
օդի մէջ թռած մեծ և փոքր քարերը միմեանց դիպ-
չելով էին պատճառում: Այս սարսափելի տեսարանը
տեսեց մօա մի ժամ: Երբ գոլրշները, քարի և հողի
անձրւեները դադարեցին, ոչ մի նշմարանք չէր ե-
րեսում մէծ և հարուստ Ակուռի գիւղե, աներեու-
թացաւ: Ա. Յակովլայ վանքը, ծածկուեցան բարե-
բեր գաշտերը 2,000ից աւելի մարդ տակն անելով
Արարատի այս հրաշնչութեան հետ միասին մի կոր-
ծանիչ խիստ երկրաշարժ էլ կար, որ ընդարձակ գաշտի
մէջ շատ կորստաբեր հետեւանքներ ունեցաւ: Երասիսի
և Սև ջրի ափերքին շատ Ճեղքուածներ բացուեցան,
որոնցից ուժով գուրս եկած օդը գետի ջուրը պղպ-
ջակելով վեր էր բարձրացնում: Երասիսի յատակի վե-
րայ շատ տեղ բերաններ բացուեցան, որոնցից գո-
լրշու զօրութեամբ ջուրը կարկաչելով վեր էր բարձ-
րանում զարմանալի ջրբուխների կարդ կազմելով.
շատ տեղ գետի ջուրը ափերքից դուրս գալով ողո-

զում էր շրջակայքը, աղբիւրներից շատերը փակուեցան և շատերը նորից բացուեցան։ Այս աւելը տարածուեցաւ մինչև Նախիջևանայ, Մաքուայ, Բայազիդի և Իրանի կողմերը, վեց հազարից աւելի տուն քար ու քանդ անելով։

Ակտագոթ: Պատմական շրջանից առաջ աշխարհիս ամենազօրաւոր հրաբուխներից մէկն է եղած, մինչև այժմ նկատելի են կողքի Ճեղքուածքները, որտեղից հոսած է լաւան։ Երջակայքը մինչև Ախուրեան ծածկուած է լաւայով։ Մի մեծ հրաբխային խումբ օղակաձև շրջապատում է Սևանայ լիճը, որը և մէկ ժամանակ եղած է զարհուրելի հրաբխային ներդորթեան բերան։ Լճի արևմտեան կողմից աւելի նշանաւոր են Ա.Տ.Հ.Ա.Գ.Ա. գորանից արևմուտք Շամբար (Ք.Յ.Օ.Թ.Ա.Ն.Դ.Ա.Ղ.), գէպի հիւսիս արևմուտք Արայի լեառը (Ղ.Ա.Ր.Ա. եարբք), իսկ Ա.Ք. մանգանից գէպի հարաւ Սովորու լըտուն (Ա.Ղ.Դ.Ա.Ղ.)։ Սևանայ լճի հարաւային կողմը Գեղարքունեաց ասրերում հրաբուխներից նշանաւոր են Գիքֆիլաքսն և Ա.Ր.Գ.Ո.Լ.-Ա.Վ.Ս.Ա.Ր. Բարկուշատի ձախ կողմից Սիւնեաց լեառներում նոյնպէս շատ են հրաբխային գագաթները. աւելի նշանաւոր են Գ.Ե.Ա.Վ. Գէպ (Ուղա-ակն) և Ո.Ա.Հ. լըտուն (Ա.Ը.Վ.Լ.-Թ.Ե.Ա.Փ.Ե.Ա.): Գոյլթն գտաւառում Երնջակ գետից արևելք կանգնած է բարձրագագաթ 0ի լըտուն (Իլան - գաղ)։

Մէկ ուրիշ մեծ խումբ հրաբխային լեռների շրջապատում է Վանայ լիճը, որոնց մէջ երեւելի են հիւսիսում Սիփոռը, Սիփանից հիւսիս ա-

թեելք Տաղուարէն, որի մօտերքից մինչև այժմ ծծմ բային խիստ գոլորշեք են բարձրանում։ Վանայ լճի արևմտեան կողմը նշանաւոր է Նէբրալ-Շայ լեառն, որ ստէպ ստէպ ցոյց է տուած իւր հրաբխային զօրութիւնը պատմական շրջանում։ Նշանաւոր է 1441-ի հրաշնչութիւնը՝ և 1881-ի խիստ շարժը, որ մի քանի գիւղ քարուքանդ արաւ։ Ատրպատականը նոյնպէս ներկայացնում է մէկ մեծ ստորերկրեայ հրաբխային զօրութեան աւաղան։*) Նոյն իսկ Ատրպատական (Ատր-կրակ) բառը այդ է ցոյց տալիս։ Չորրորդ - Հայքը իւր շրջակայքով Վանայ լճի արևմտեան կողմը ներկայացնում է մեզ մի երկրորդ Ատրպատական։ Հայաստանի հիւսիս արևմտեան կողմը նոյնպէս շատ ունի հրաբխային լեառներ։ Գոյանից աւելի նշանաւոր են Պարխարի երկու գագաթները Խաչուար և Վարշանակ։ Կարնոյ մօտ նշանաւոր է Սէիչէն։

Մեծ Հայաստանի արևելեան մասը նորագոյն ջրային կազմութեան է վերաբերում, ուստի և զուրկէ հրաբուխներից։

ՓՈՒՐ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱԲՈՒԽՆԵՐԸ

Փուր-Հայաստանը նոյնպէս շատ ունի հրաբխային գագաթներ, որոնք ամէնքն էլ այժմ մարած են, բայց մէկ ժամանակ խիստ ներգործած են։ Փոքր Հայաստանի հրաբխային զօրութեան կենտրոն կա-

*) Տես Խնձեռքեան հնախօսութիւն։

բելիք է համարել Արգեռոց (Երջիաս դաղ); Կիլիկիայի բազմաթիւ հանքային ջրերը, ստեղ.ստեղ.կրկնուող երկրաշարժները պարզ ապացոյց են, հրաբուխների մեծ գանձակութեան:

Ուղիղ է այժմ բոլորն եւ հանգած են, բայց բազմաթիւ հանքային ջրերը, յաճախ կրկնուող խիստ երկրաշարժները պարզ ապացոյց են, որ Հայաստանի հրաբխային լեռնախումբը ամբողջ պատմական շրջանում պահել և պահում է գաղտնուկ իւր ստորերկրեայ ոյժը և կարող է ապագայում մեծ վնասներ պատճառել *):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԵԲԸ

Հայաստանը աշխարհիս ամենաջրառատ երկրներից մէկն է. նա հարուստ է ծովերով, լճերով և գետերով. բայց Հայաստանի բազմաթիւ գետերը լիռնային, արագընթաց և քարավազ լինելով, այն օգուտը չեն կարողանում տալ երկրին, ինչ կարելի էր սպասել մի ջրառատ երկրից: Հայաստանի բոլոր գետերը և գետակները թափվում են գլխաւորապէս եօթը ջրային աւաղանների մէջ, որոնցից չորսը արտաքին ծովեր են Աև, Կասպից, Պարսկական և Միջերկրական, իսկ երեքը ներքին լճեր են՝ Սևանայ, Վանայ և Որմիոյ:

*) Հրաբուխների մասին տես. Սլեշ. քաղ. աշխ. Կէօդէն Փեղեքական աշխ.:

Այս Աբ՛սեմին ջրերը, Կամալից ծովը գտանգուելով Հայաստանի արեւելեան կողմը բաց է անոնց նորու համար ջրային հաղորդակցութեան մեծ հանագալարհ արեւելքի հետ և առաջ աղբիւր ընդարձակ ձկնային վաճառականութեան; Գոնստական կամ Սև ծովը Հայաստանի արեւմտեան սահմանադամ նոյն դերն է կատարում արեւմտեան երկրների վերաբերութեամբ: Պարսկական ծովը Հայաստանից հեռու հարաւարեւելքում ընդունում է իւր մէջ երկուորեակ Տիգրիս վիրատը, որոնցով հին ժամանակ լինում էր Հայաստանի վաճառականութիւնը բոլոր հարաւային աշխարհների հետ. Միջերկրական ծովը կազմում է Հայաստանի հատիւնը արեւմտեան սահմանը և իւր Հայտիւն և Տարսոսի ծոցերով մեծ կայարան է կազմում արեւմտեան վաճառականութեան համար:

Մերքին Ջրերը: Հայաստանի ներքին ջրերը կազմում են նորա լճերը և գետերը, որոնք երկրի լեռնոտ լինելուց խիստ արագավազ սահմանքաւոր և նաւագնացութեան համար անցարմար են: Հայաստանի գետերը առհճասարակ զոյտ զոյդ են: մէկ տեղից սկսնում են, միջին մասում միմեանցից հեռանում են, իսկ վերջը կամ բոլորով միանում են: թափում, ինչպէս Երիս և Ալիսը, Սարոս և Պիւրամնար և այն: Հայաստանի գետերը, ինչպէս և շատ լիռնային գետեր, փոփոխում են իւրեանց ուղղութիւնը, ոչ միայն փոքրերը այլ և մեծերը: Պիւրամնար

Սարոսը երեք անգամ մէկ բերանով թափուած են ծովը. այժմ երկուսի բերանը մօտ 100 վերստ միամացից հեռու է: Արաքսը առաջ առանձին բերանով էր թափվում Կասպից ծովը և աւելի հիւսիս էր գտնավում նորա տաշար, ուր մինչեւ այժմ կամուրջների մնացորդ կայ (Արտաշատի և Արմաւիրի մօտերքը), իսկ այժմ աւելի հարաւ է ընկած: Նոյն իսկ ջրերի քանակութիւնը խիստ փոփոխվում է տարուայ զանազան եղանակներին. դարնան ամենափոքր գետը ահագին տարածութեամբ ողողում են գաշտերը, իսկ ամառը շատ անգամ չորանում:

ՄԵՌ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Մեծ - Հայաստանը իւր մէջ բովանդակում է Հայաստանի ամենամեծ գետերը, որոնք համարեարոլորն էլ սկիզբն են առնում Կարսոյ բարձրաւանդակից կամ նորա շրջակայքից: Գետերից նշանաւոր են Արևի կամ Երևան (Բինդեօլ սու, Բասէն սու, Արալ) սկիզբն է առնում Սրմանց գագաթից, մօտ 8,000 սանաչափ բարձրութիւնից, սկզբում գնում է գետի հիւսիս յետոյ արեւելք, դարձեալ հիւսիս, մինչեւ Հասանդալա գիւղաքաղաքը. այս տեղից փոխում է իւր ուղղութիւնը գետի հարաւ արեւելք մինչեւ Մեղքի գիւղը, որ տեղից բարձեալ հիւսիս արեւելք ուղղուելով թափվում է Կուր գետի մէջ: Արաքսը խիստ արագավաղ և սահանքաւոր է. միքանի տեղ ջրնկեցներ է կազմում ամէնից նշա-

նաւոր է Բարկուշատի խառնարանից մի քանի վերստ գէպի արեւելք գտանուող Կրետը ջըմնկեցը: Զուրը այնպիսի բարձրութիւնից և այնպիսի մեծ ոյժով վեր է թափվում, որ մի քանի վերստ հեռու շրջակայքում խլացնում է ամենայն ինչ պատմում են, որ նոյն իսկ ջրի անկման աղեղը այնքան մեծ է, որ տակով կարող են կարտաններ անցնել Երասխի վտակներից նշանաւոր են ձախ կողմից՝ Մարց (Հասան զալի ջուր) սկիզբն է առնում Ծիրանի լեռներից: Ախորդեան (Արփաչայ) կազմուած է երկու Ճիւղերից՝ Ոտու կամ Մօր Էծ (Ղարս չայ), որ սկիզբն է առնում Վանանդու սարերից և Գարուոյ գետ (Արփաչայ) որ սկիզբն է առնում Խարուոյ լճից: Մէծառնը (Առ ջուղաչայ), սկիզբն է առնում Արագածի հարաւային ստորոտի լճակներից և ձահիճներից: Սորա մէջն է թափվում և Քառակ (Ապարանու կամ Կարբի գետ) սկզբում է Արագածի հիւսիսային ստորոտից. Հրազդան (Զանգի) սկիզբն է առնում Սևանայ լճից և Արայի ու Շամիրամի լեռների միջով ձգուելով թափվում է Երասխի մէջ. Աղստ գետ (Գառնի չայ) սկզբում է Գեղամայ լեռներից. Վետէ սկզբում է Գեղամայ և Գեղարքունեաց հանգրցից: Սարտարակ սկզբում է Գեղարքունեաց լեռներից: Արեւելան Գալրուոյ գետ (Արփաչայ) բղխում է Գեղարքունեաց լեռաներից. Նսենիջեանայ գետ, Երնջակ (Ալնջա), Մեշքի բղխում են Գալրուոյ լեռներից: Բարերաշտ բաղկացած է երկու Ճիւղերից, արեւմտեան՝ Որդոն և արեւելան՝ Հագոր. Երկուսն էլ բղխում են Սիւնեաց սարերից և միա-

նալով կազմում են բարկուշատը, որ թափվում է երասխի մէջ:

Աջ կողմից Երասխի մէջ թափվում են՝ Կազմական, բղնում է քրաբաշխ լեռներից, Սուրբ Հարի, բղնում է բարդող լեռներից, Մահմայ գետ (Բալդայ) սկսում է Գայլատուց լճից: Կարմիր գետ (Աղջայ) բաղկացած է երկու Ճիւղից Տշնառից և Կոփուրից, երկուսն ել բղնում են Բուժունեաց լեռներից: Աւշտ (Կարսոսու) բաղկացած է երկու Ճիւղից, մէկը Արդարակեց բղնում է Սաւալան գաղաթից, միւսը Աշտի, բղնում է Սաւալանի արևմտեան լեռաներից:

ԿՈՒՐ ԳԵՏ (Քուր, Մթկվարի) սկիզբն է առնում Զարիշատայ սարերից. սկզբում հօսում է հիւսիս արևելքան ուղղութեամբ և մտնում է Վրաստան, անցնելով Թիֆլիսի միջով փոխում է ընթացքը դէպի հարաւ արեւելք և Հայաստանում իւր մէջ ընդունելով Երասխը շատ բերաններով թափվում է Կասպից ծովը: Կուր գետի վտակներից նշանաւոր են ձախ կողմից՝ Ալքել, Խրամ, որ իւր մէջն է ընդունում Զարագետը (Բորչալու չայ): և Աղստե, բոլորն ել բղնում են Վրաստանի հայոց լեռներից. Լուբնաս, Շոմհար, Գանձա, Կառասէ, Տէր-Տէր բղնում են Սևանայ լճի արևելքան լեռներից, Խաչէն և Գարգար բղնում են Սիւնեաց լեռներից:

Կուր գետի ձախակողմեան վտակներից նշանաւոր են Խօր և Ալաղան երկուսն ել սկսում են Կովկասիան լեռներից:

ԵՓԲԱԾ. բաղկացած է երկու Ճիւղից, մէկը սկս-

վում է Կարնոյ բարձրաւանդակի Բար գագաթից 9,000 ոտնաշափ բարձրութիւնից և կոչվում է Սկազար (Կարա սու) միւսը սկիզբն է առնում Մաղկոց լեռներից և կոչվում է Արածանի (Մուրադ չայ): Աւ ջուրը նախ քան Արածանույ հետ միանալը աջ կողմից ընդունում է Գայլ գետը, որ բղնում է Գոհանամաս սարից, իսկ ձախ կողմից Քեշայ գետը, որ բրդիսում է Բիւրակնեան սարից: Արածանին ևս ընդունում է շատ վտակներ, որոնցից նշանաւոր են աջ կողմից՝ Խոնուս գետ (Դուզլու չայ), Զարբռահար, Բալշան, Ճաղաջառը և Լէշէն, բոլորն ել բղնում են Բիւրակնեան լեռների հարաւային սարորտից: Ձախ կողմի Ճիւղերն են Մաստչերակ ջար (Սարը սու) Մէլքանգէտ (Կարասու). առաջինը բղնում է Նպատի հարաւային սարորտից, երկրորդը Ներլովդայ լեռնից: Աւ ջուրը և Արածանին միանալով ընդհանուր անուամբ կոչվում են Եփրատ, որ հոսելով դէպի հարաւ Հայոց Միջագետքում ընդունում է Բէշէնից և Խոտրուր գետերը, ու ապա միանալով Տիգրիսի հետ Շաբալարը անունով թափվում է Պարսից ծովը:

Տիգրիս (Տիգաթ կամ Նաթ) բաղկացած է երկու Ճիւղերից, որոնցից մէկը սկիզբն է առնում Տօրոսեան Ճիւղերից մօտ 5,000 ոտնաշափ բարձրութիւնից, միւսը բղնում է Աղբակայ լեռների արևմտեան Ճիւղերից: Առաջինը կոչվում է Արևմտան Տիգրիս, երկրորդը Արևելքան Տիգրիս: Արևմտեան Տիգրիսի մէջ ձախ կողմից թափվում են Ասդա գետ (Բաղ գեօլ) և Սամայ գետ (Բաթման սու). արևել-

լեան Տիգրիսի մէջ աջ կողմից թափվում է Բաշէշը, գետը՝ Երկու Ճիւղը միանալուց յետոյ ընդունում են Զառ (Մեծ - Զար կամ Գայլ) գետը, որ բղխում է Աղբակայ սարերից:

ՃՈՐՈԽ. իւր սկիզբը առնում է Մոսկիքեան սարերից. Նախ հոսում է գէպի հարաւ արևմուտք, ապա հիւսիս արևելք և վերջապէս հիւսիս արևմուտք ուղղուելով թափվում է Սև ծովը: Ճորոխը իւր բերանի մօտ խիստ ջրառատ է և իւր պղաօք գեղին դժյնը ծովին է հաջորդում կէս մղոնից աւելի տարածութեամբ. Ճորոխի աջակողմեան վտակներից նշանաւոր են Թորթում, բղխում է Մոսկիքեան սարերից, ազնիւ ականալճիտ ջուր ունի, առատ է խիստ ձկներով, հիւսիսային ուղղութեամբ հոսելով ճանապարհին կազմում է Թորթումայ լեճը: ԼՃից դուրս գալիս Թորթումը կազմում է Ասիայի ամենաշքեղ չըլսնէցը, որ իւր նկարչական գեղեցկութեամբ նւրոպայի ամենաշքեղ ջըրնկեցներին կյալթի: Օլլի, Ալբանուշ և Աճարայ գէտ երեքն էլ թափվում են Ճորոխի մէջ նորա աջ կողմից: Զախ կողմից Ճորոխը ընդունում է Պարիսով գետը, որ բղխում է Պարիսը սարերից և անցնում է Պարիսալ գիւղի մօտով:

ՓՈՔՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Փոքր - Հայաստանի գետերից նշանաւոր են Երես (Եշլ - ըրմաք). բաղկացած է Երկու Ճիւղեց Գայլ գէտից

(Գայրմանչայ) և իսկական Երես (Թոկաթ չայ): առաջինը բղխում է Անտիտորոսի հիւսիսային Ճիւղերից, երկրորդը Աստղեկ լեանից: Ալիս (Կըզլ - ըրմաք) օկսում է Աստղեկ և Հաբէշ լեաների հարաւային ստորոտից: Նախ հոսում է գէպի հարաւարեմուտք մինչև Կեսարիա քաղաքը, ապա հոսում է գէպի հիւսիս արևմուտք և վերջապէս ուղղութիւնը փոխելով գէպի հիւսիս արևելք ընդունում է իւր մէջ Կառու գետը ու թափվում Սև ծովը: Սորու (Սէյհուն չայ) և Պիրանս (Զիհան չայ) վերին ընթացքով պատկանում են Փոքր - Հայաստանին: Փոքր - Հայաստանի արևելեան կողմից նվիրատի մէջ թափվում են Զիհան, Ոսէնգէպառ և Մէլլու (Թոքրմայ չայ): *

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳԵՏԵՐԸ

Կիլիկիան Հայաստանի ամենաջրառատ և խոնաւման է. գեռ միայն Կիլիկիոյ ծովի ներկայութիւնը մեծ խոնաւութիւն է պատճառում երկրին, ուր մնաց բաղմաթիւ գետերը, որոնք որոգում, իսկ մեծացած ժամանակ ողողում են Կիլիկիայի դաշտերը: Գետերի մէջ իւրեանց մեծութեամբ և խորութեամբ առաջին տեղը բռնում է Պիրանսը (Զիհանչայ): Կարոսը (Սէյհունչայ): Երկուսն էլ սկիզբն են առնում

*) Հայաստանի գետերի մասին տես Խնձեձ. Հնախ. Ալիշ. քաղ. աշխ.

Փոքր - Հայաստանում Անտիտորոսից և կորելով Տօրոսի շղթան Կիլիկիայի դաշտավայրով հանդարձու հոսելով թափում են Կիլիկիոյ ծովը: Կիւռէնս (Տարսու չայ) սկսում է Տօրոսի հարաւային զառիվայրներից անցնելով Տարսոսի մօտով թափում է Կիլիկիոյ ծովը. Պիտարէս (Գէլի չայ), Կայիւտէնս (Գեօդ սու), և Լոհաս (Լամաս սու), երեքն ել բղիսում են Տօրոսի հարաւային զառիվայրներից. Խիստ արագավազ և սահանաքուոր գետեր են, գարնան խիստ մեծանում են և ողուզում դաշտերը, իսկ ամառը համարեա ցամաքում, Սէլէնս (Սէլէնտի) կազմում է պատմական Կիլիկիայի արևմտեան սահմանը:

Կիլիկիայի գետերը համարեա բոլորն ել մէկ ժամանակ նաւագնաց էին, բայց այժմ բաւական չէ որ նաւագնաց չեն, բացի Սարոսը, որ նաւագնաց է մինչեւ Ատանա, այլ և սակաւաջուր, սպղուր և վատոհամ են գարձած: Առաջ դոցա ընթացքը և ջրի քանակութիւնը կանոնաւոր և միատեսակ էր, այժմ գարնան խիստ մեծանում, ողուզում են դաշտերը, իսկ ամառը համարեա ըորմնում են, դորա պատճառը Կիլիկիոյ ամբողջ արևելքում հռչակուած անտառի անխնայ ոչնչացնեն է: Տաճիկ կառավարիչների անհոգութիւնից օգուտ քաղելով տեղական բնակիչները, ոչ թէ հասարակ ատաղձագործութեան այլ և այրելու համար կորում են այն հսկայական ծառերը, որ ընտիր անփոյտ փայտ և ատաղձ կարող են տալ նաւաշնչնութեան համար: Բնակչաց պակասորդը լրացնում են վայրի այծերը, որոնք անխնայ

կրծում են նորաբաղը բոյսերը, փորում կեղեները և այդպիսով ոչնչացնում անտառը: Անտառների բացակայութիւնից գարնան ժամանակ արեւգակից անպաշտպան ձիւնը հալվում է, գետերը մեծանում, ողուզում են դաշտերը, լճեր և ձահիճներ կազմելով աղականում են օդը: Կիլիկիայի գետերը մեծացած ժամանակ մեծ քանակութեամբ տիղմ բերելով, բերանի և շրջակայքի մօտ հաւաքում և այդպիսով ընդարձակում են ցամաքը դէպի ծովը: Այդ բանին շատ է նպաստում և ծովային կատաղի քամին, որ մեծ քանակութեամբ աւագմզելով դէպի գետի բերանը, ահազին կրային և աւազային կոյտեր է կազմում: Յամաքի դէպի ծովը ընդարձակուելը վագուց է նկատուած: Տարսոնի և Հայոց ծոցերը առաջ աւելի ընդարձակ էին և խորը, այժմ նեղ և երես: Տարսոն քաղաքը այժմ 4 անգամ աւելի հեռու է Կիւռնոսի բերանից քան խաչակրաց ժամանակ. Պիւրամոսը շարունակ լցնում է Հայոց ծոցը տիղմավել աւագով: Նկատուած է, որ ամբողջ Կիլիկիայի ծովեզրեայ ափը բարձրանում է *): Ուշրեմն կլինի մի ժամանակ, երբ Կիպրոսը կմիանայ իլլիկիայի հետ:

Կիլիկիայի գետերի զինաւոր յատկութիւններից մէկը ևս նոցա ուղղութեան փոփոխուելն է. մօտ 2,000 տարուայ ընթացքում 3 անգամ միացել մէկ բերանով են թափուել ծովը, այժմ մօտ 80 վերստ

*) Կլեոդէն:

դոցա բերանները հեռու են միմեանցից։ Նախնի կամուրջի աւերակները մնում են Կալաբրալի մօտերքը, ուր ընդհանուր բերանով ծովն են եղել թափուելիս։ Հայոց Միջագետքի գետերը են Տիգրիսը և Եփրատը իւր Խառնը վտակով, որոնք որոգում են Միջագետքի տափաստանները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՃԵՐԸ

Հայաստանի լայնատարած լեռների, դարատաշի և հովիտների մէջ բնականապէս շատ լեռնային լճեր պէտք է լինէին, բայց ընդհակառակը Հայաստանը լճեր քիչ ունի, այն պատճառով որ գետերը ամենայն ուղղութեամբ կտրելով լեռները հեշտութեամբ թափում են ջրային աւազանների մէջ։ Նոյն իսկ հողի ծակոտկին բնութիւնը, որ բոլոր անձրեային և այլ ջրերը ծծելով արգելում է լճերի առաջանալուն։ Եղած լճերի մեծ մասը ևս հրաբխային բերաններ են։ Հին ժամանակ Հայաստանի թէ մեծ և թէ փոքր լճերը ծով կամ ծովակ անունն էին կրում։ ԼՃԵՐԸ Կանաւոր են՝

ՍԵՒԱՆԱՅ կամ Գեղամայ լիճ (Գեօքսայ դարիա)։ Սորա շրջապատող կամաչաղարդ լեռները, ձիւնապատ գագաթներով, հանդարտ և անվրդով մակերեսոյթը, պայծառ ու մուժ կապոյա գոյնը, վճիտ ջուրը, խիստ գեղեցիկ տեսարան են ներկայացնում։ Երջակայքի սոսկալ հրաշունչ լեռները, որոնք այժմ հանգած են, պարզ ցոյց են տալիս, որ մի ժամանակ

իրանց ընդհանուր բերանը եղած է այդ լիճը, որից ահագին քարեր, բոցեր և հրացին նիւթեր են դուրս ցանքած։ իսկ այժմ այն անդունդը, որ կաղմում էր հրաբխային բերանը, լքցուած է ջրով։ Նոյն իսկ նորա միջի Սևանայ կղզին ոչ այլ ինչ է, եթէ ոչ հրաբխային կաղմութիւն։

ԼՃԻ երկայնութիւնը 66 վերսու է, լայնութիւնը 30 վերսու, շուրջը 220 վերսու, խորութիւնը 60—250 սաժէն։ Զրի մակերեսը 6500 սոնաչափ բարձր է։ Սևանայ լՃԻ ջուրը տարեցարի պահասում է։ այդ կարելի է նկատել այնտեղից, որ նախ ալքունական մշտական ճանապարհը, որ առաջ լՃԻ մօտովն էր անցնում այժմ շատ հեռու է մնացել երկրորդ հրագդանի մէկ Ճիւղը, որ Սևանիցն է բղիտում, տարեցարի պահասում է, երրորդ լՃԻ արևելքան և արևմտեան կողմից նորա մէջ մանող թերակղզիները աւելի և աւելի ներս են մանում և կլինի մէկ ժամանակ, երբ երկուսն էլ կմիանան և լիճը կբաժանուի հիւսիսային և հարաւային մասերի։ Սևան կղզու մակերեսը ևս ցոյց է տալիս, որ նա մէկ ժամանակ ջրի տակ է եղած, իսկ ապա վեր է բարձրացած։ Ամենազլխաւոր նշանը ջրի պակասելու այն է, որ Սևան կղզու և արևմտեան ափի մէջ դեռ մի քանի տարի առաջ գտանուած կղզիները այսօր ցամաքի հետ միանալով թերակղզի են ձևացնում։ ուրիմն կպատահի մի ժամանակ, երբ լՃԻ ջուրը բոլորովին կցանաքի։ Զրի պակասելու գլխաւոր պատճառներից մէկը շրջակայ անտառների ոչնչոցնելը

պէտք է համարել որի պատճառով նոյն իսկ ըշի մէջ թափուող գետերի թիւը նուազել է, եղածներն էլ սակաւաջուր են:

Աւանայ ըշի մէջ թափուող գետերից նշանաւոր են Քէսուսա, բղխում է Գեղամայ լեռների Սալիսակ լեռնան գագաթից. Այսի, բղխում է Գեղարքունեաց լեռների Սարիալ գագաթից: Լձի Հիւսիս արեւմտեան մասում գտանվում է Սևանայ կղզին, որի շուրջը մօտ 4 վերստ է և բարձրութիւնը ջրից 2,000 ոտնաչափ: Կղզու մակերեսոյթը բաղկացած է մութ և սև քարաժայռերից, որոնք ուղղաշայեաց ծովն են ընկղմվում: Կղզու մի տափարակ մասում գտանվում է Սևանայ վանքը իւր խուցերով, որ հոգեսրականաց աքսորարան և ճգնարան է: Սևանայ լիճը և նորա մէջ թափուող գետերը խիստ հարուստ են տեսակ տեսակ ձկներով, որոնք կազմում են բոլոր շրջակայքի վաճառականութեան առարկան. Ծի շրջակայքը բաժանուած է 37 ձկնորսական շրջանների: Ձկներից նշանաւոր են՝ իշխան, գեղարքունի, եաբանի, չալածուկ, կապոյտ, կարմրախայտ, կողակ և այլն, որոնք մեծ քանակութեամբ տարածվում են շատ հեռու երկիրներ ^{*)}:

Ա ԱՆԱՅ ԼԻԾ (ծով Վասպուրականի կամ Խըշտունեաց կամ Բղնունեաց կամ Տոսպայ). ծովի մակերկայթից մօտ 5,200 ոտնաչափ բարձր է և բաւա-

կանին խորը. եռանկիւնի ձևունի, իւրաքանչեւր կողմը մօտ 75 վերստ երկայնութիւն ունի: Զուրը մաքուր և վշիտ է, բայց խիստ աղալի, չնայելով, որ նորա մէջ բազմաթիւ գետեր են թափվում: Գետերից նշանաւոր են՝ արևելքում Բէրդի, Սև ջուր (Կարա սու), Խշող, Հարաւում նշանաւոր է Նարեկայ գետը և Թոռի գետը (Կողլ գերէ): Վանայ ըշի ջուրը տարեցարի աւելանում է. այդ կարելի է նկատել սյնտեղից, որ Վանայ ըշի հիւսիսում գտանուող պատմական Արձէշ քաղաքը այսօր ջրով ծածկուած է և ամբողջ վերստ յամաքից հեռու է. Իյու կղզին առաջ յամաքի հետ կուած էր, Կտուց անապատը առաջ թերակղզու վրայ էր գտանվում: այժմ կղզիացած է և եղերքից մի քանի հարիւր սամէն հեռու է: Աղթամար կղզու հարաւում գտանուող Աղթամար քաղաքի աւերակները այսօր ջրի տակն են:

Վանայ ըշի գլխաւոր հարստութիւնն է տառեխ ձուկը, որ առաւելապէս գտանվում է Սև գետում, ուր մէկ ժամում ամենանհապետական ձեռվ կարելի է մի քանի միլիոն որսալ: Այս ձուկը բաւականութիւն տալով տեղական բնակիչներին, որոնք ամբողջ տարուայ պաշար են վերցնում, տարածվում է և Տաճկաստանի, Պարսկաստանի և Ռուսաստանի հեռաւոր կողմերը: Վանայ լիճը իւր ձկների առուտուրով նոյն նշանակութիւնը ունի միջին Հայաստանում, ինչ որ Սևանայ լիճը հիւսիսում: Վանայ ըշի մէկ ուրիշ հարստութիւնն էլ կազմում է նորա բարձրակ կոչուած աղը: Զուրը կապում են նախապէս

^{*)} Սաղաթելեան. Օзеро Ерив. ցը. օզ. Շուայ.

աղասիաստուած ածուների մէջ՝ երբ արեւի ճառաւ-
գայթներից ջուրը դոլորշիանում է, բարակ աղը
շերտ շերտ նսառում է երկրի վերայ, որը և տեղա-
կանները հաւաքելով վաճառ են հանում: Բարակը
թէ Հայաստանում և թէ դուրսը լուացքի համար
են զործ դնում, որովհետեւ խիստ մաքրով յատ-
կութիւն ունի. Վանայ լիճը ծառայում է և իրեւ
ընդարձակ ջրային ճանապարհ շրջակայ երկրների
հաղորդակցութեան համար: Արդէն նորա վերայ լո-
ղում են 70աշափ առագաստանաւեր, որոնք լստ
մեծի մասին Առաջ գիւղի հայ բնակիչներին են
պատկանում: Վանայ լճում գտանվում են կիմ, կիռայ,
Առաջեր և Աղլեռմարտայ կղզիները, վերջինում կենում է
Աղմամարայ հայոց կաթուղիկոսը ^{*)}):

Որբոյ կամ Կապուտան լիճ: այլսողէս կոչվում է
Թիլոյ լիճ մէջը գտանուող Թիլ կղզու անունով: Այս
լիճը մօտ 120 մերստ երկայնութիւն ունի և 40
վերատ լայնութիւն. ջրի մակերեսոյթը ծովից մօտ
4,000 ոտնաշափ բարձր է. 48 ոտնաշափ խորու-
թիւն ունի, այդ պատճառով և ամենափոքր հողմի
ժամանակ խիստ ալեկոծվում է. ջուրը խիստ աղի է,
չնայելով որ իւր մէջ ընդունում է բաղմաթիւ բարե-
համ գետեր, որոնցից նշանաւոր են՝ Աղի, բղխում է
Սաւալան գագաթից և թափվում է Որմիոյ մէջ ա-
րեւելեան կողմից. Սաքի, սկսում է Սոհունց գագա-
թից և թափվում է լիճը արեւելեան կողմից: Գոյզառայ

լիճ (Բալգ գեօլ), գտանվում է Մասիսից հարաւ-
արեւմուտք, հարուստ է տեսակ տեսակ ձկներով, մօտ
7,500 ոտնաշափ բարձրութիւն ունի. Ծռչէ Հիւսիսոյ
(Թափառաւան կամ Փառաւան) գտանվում է Հայաս-
տանի հիւսիսային կողմը: Պալաշից (Զլդը գեօլ) Մեծ
գետով (Զլդը - չայ) միանում է Ուահ գետի հետ:
Գոյզառայ լիճ (Արփա գեօլ), այսաեղից է բղխում Գա-
րուոյ գետը. Ծռչ (Գեօլ Ճիք) գտանվում է Նիրա-
տից արեւելք Տօրոսից հարաւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶՐԵՐԸ

Հայաստանը, որ մէկ հանքերով առատ հրաբ-
խային լեռնակոյս է ներկայացնում, հարուստ է և
շատ տեսակ տեսակ հանքային ջրերով, որոնք մինչեւ
այժմ գեռ լսւ չեն քննուած. բայց նոցա մէջ կան
այնպիսի զօրութիւն ունեցող հանքային ջրեր, ո-
րոնց մէջ լուացուելով ամենածանր և երկարած
տկարութիւն ունեցողները միանգամայն աւողջա-
նում են, ինչպէս օլինակ Կարնոյ մօտ գտանուած
հանքային ջուրը, ուր լուացուելով ամենածանր կա-
նացի հիւմներից կարելի է աղատուել:

Հանքային ջրերի ամենամեծ քանակութիւնը
գտանվում է Կարնոյ շրջակայքում: Կարինից գէպի
արեւմուտք մինչեւ Գիւմիւշանէ քաղաքը 60աշափ
ջերմ հանքային աղբերներ կան: Ծծմբային, էրէտ-
եային և Ալեւային ջրերից աւելի նշանաւոր են Կար-

^{*)} Օնանեանն, տես Պորձա 1880 թ.

նոյ, Խլեջայի, Հասանղալայի, Աբասթռւմանի, Բար-
բակու, Տիատինի հանքային ջրերը:

Կամախի մօտ մէկ սարի մէկ կողմից աղի աղ-
բիւր է բղնում, իսկ միւս կողմից այնպիսի հան-
քային աղբիւր, որ ձմեռը խիստ տաք է լինում, իսկ
ամառ ցուրտ: Տիատինի մօտ մի ծծմբային ջեր-
մուկ կայ, որ իւր միջի ծծումբով մի կամուրջ է
գյացրել Արածանուոյ վրայ 60 քայլ երկայնու-
թեամբ 30 քայլ լայնութեամբ. Հասանղալայից գէպի
Կարս կէս Ճանապարհին մի ծծմբային աղբիւր կայ,
որ նոյնպէս մեծ քանակութեամբ ծծումբ է արտա-
գրում. Կրաքն բաղադրութիւն ունեցող աղբիւրներից
նշանաւոր են Որոտն գետի վրայ Տաթև գիւղի մօ-
տինը, որ ամբողջ կրային կամուրջ է առաջացրել
20 սաժէն երկայնութեամբ և 12 սաժէն լայնու-
թեամբ. այս կամուրջը կոչվում է սատանի կամուրջ:
Ցէ՛նդային աղբիւրներից նշանաւոր են Մեղմի գաւա-
ռում Ագարակ գիւղի մօտ գտանուած աղբիւրը, որ
աղնիւ և ընտիր պղնինձ է արտագրում: Տաք և ցուրտ
հանքային ջրեր շատ կան այլ ևս Սեբաստիայի,
Կարնի շրջակայքում, Նեմրովդ լեռան ստորոտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԴՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՆ: Հայաստանը ամբողջա-
պէս գտանուելով ջերմ բարեխառն գօտիում, պէտք է
ունենար և միատեսակ ջերմ բարեխառն կլիմայ,
բայց նորա մակերեսոյթը բազկացած լինելով խորը

ձորերից, բարձրաւանդակներից և հսկայաձեւ ձիւնա-
պատ լեռներից ներկայացնումէ բոլոր տեսակ կլիմաները
սկսած ջերմից մինչև յաւիտենական սառնամանիքը:
Այնպէս որ Ճանապարհորդելով Հայաստանում ցած-
րադիր երկրից գէպի բարձրագիրը մէկ օրուայ մէջ
մենք կարող ենք պատահել տարուայ 4 եղանակին:

Ջերմ առաստանձրեալին գօպի: Ջերմ կլի-
մային պատկանում են Հայաստանի ցածր գիրք ու
նեցող տեղերը՝ գաշտերը և հովիտները, որպիսիք են
Կուր և Երասխ գետերի հովիտները սկսած այն տե-
ղեց, ուր նոքա գաշտն են մտնում, Սև և Կասպից
ծովեղբեայ գաշտավայրները, Կիլիկիայի և Միջա-
գետքի գաշտավայրները և առհասարակ այն բոլոր
տեղերը, որոնց բարձրութիւնը ծովի մակերեսոյթից
2,000 ոտնաչափից աւել չէ: Այս տարածութեան
մէջ տարուայ միջին ջերմութիւնը հիւսիսում 16° է
և հարաւում 20° , ամառ ակեռմ է խիստ երկար
հարաւում աւելի քան հիւսիսում: Արեգակի կիզիչ
ճառագայթները և ամսապային ծանր տօթը անտա-
նելի են լինում բնակչաց համար, մանաւանդ Կիլի-
կիայում, ուր ջերմութեան հետ միանալով ճահճային
գոլորշեր, բոլորովին ապականում են օգը, այնպէս
որ այդ ժամանակ Կիլիկիայի գաշտավայրները գառ-
նում են ջերմախտութեան կենտրօն և բնակիչները
Քարային - Կիլիկիա փախչելով հաղիւ են աղատվում:
Աւելի սարսափելի է տեսարանը, երբ հիւսիսից փշում
է կիզիչ քամին, որին չեն կարողանում մեղմացնել
և ծովի խոնաւ օդային հոսանքները: Հայաստանի

բոլոր ցածրագիր տեղերում կէսօրուայ տաքութիւնը քառասուն աստիճանից անցնում է և այդ ժամանակն է, որ մի տեսակ անշարժութիւն է տիրում ամէն ուրեք: Բնակչաց յուսահատութիւնը մեծ կլինէր, եթէ տօթային ցերեկուան չհետեւէր գիշերուայ զօվարար և քաղցրաշունչ օդը պայծառ երկնքով: Ամառուայ վերջը Հոկտեմբերի սկզբին ջերմութիւնը սկսում է փոքր առ փոքր նուաղել. ամառուայ օդի անշարժութիւնը տեղի է տալիս փոթորիկներին և անձրևներին: Խունքը իւր անձրևախառն փոթորիկներով խիստ կարծ է տեսում. շուտով սկըսում է հանդարտ ձմեռը. թափվում են երկնքից հեղեղներ, քիչ կպատահի որ մերձակայ լեռներից քամին ձիւնը բերի գէպի դաշտերը, զարմացնի տեղականներին: Ձմեռը տեսում է մօտ 2 ամիս Դեկտեմբեր և Յունվար, միայն գիշերները գուցէ փոքր ինչ զգալի լինի ցրտութիւնը, ապա թէ ոչ ձմեռը շարունակ բարեխառն է և երկիրը ծածկուած մետաքսանման խոտով: Գարունը նոյնպէս կարծ է տեսում ինչպէս աշունքը, բայց ոչ այնպէս փոթորկալի:

Բարեխառն իտմ տառապ ցրդյն գողի: Առատ ցողի գոտուն պատկանում են այն բարձրաւանդակները և լեռները, որոնց բարձրութիւնը ծովի մակերեսոյթից 2,000ից մինչև 10,000 ոտնաչափ է: Այս գոտիում առհասարակ ձմեռը խիստ աւելի երկար է տեսում քան ամառը. մի քանի տեղ աբողջ ութ ամիս է շարունակվում: Ամառը ուղեղ է ցերեկները տաք են լինում, բայց գիշերները դարձեալ ցրտում են: Որով-

հետեւ այս գոտիի վերաբերեալ բարձրաւանդակների և լեռների բարձրութիւնը տարբեր է, այդ պատճառով և նոյն իսկ կլիման տարբեր է նայելով բարձրութեան: Կարնոյ բարձրաւանդակի վրայ ձիւնը նոյեմբերից սկսում է դալ և տեսում է մինչև Մայիսի վերջը, բայց էլի շատ ձորեր և փոսեր իւրեանց ծոցում ամբողջ ամառ թագնում են ձիւնը: Չմեռը գետերից շատերը բոլորովին սառչում են. դարուփոսեր, ձորեր և ձանապարհներ սառուցով պատվում և սաժէնաչափ կամ աւելի ձիւնով ծածկվում: Յաճախ բարձրացող խիստ քամիները ժողովելով ձեան մեծ քանակութիւն լքցնում են անդունդները և ահագին ձիւնակցուեր կազմում: Սարսափելի է այդ ժամանակ ձանապարհորդների և կարավանների վիճակը, որոնք շատ անգամ ձիւնի մէջ թափվում կորչում են, պատահել է որ հազարով և աւելի զոհ են գնացել ձիւնախառն խիստ քամիներին սառուցով և ձիւնի տակ մնալով: Այդ պատճառով սովորութիւն է դառել, որ ձանապարհորդները իւրեանց ձեռքին կրում են երկայն ձողեր և յանկարծ ձիւնի մէջ ընկզմուելուց յետոյ նշան են թողնում ուրիշ ձանապարհորդներին, որ իւրեանց ազատեն, միեւնոյն ժամանակ դոցանով օդ շնչելու անցք են բացանում: Ձմեռուայ ցրտերը այս գոտիում հաշնում են մինչև—26 և—30°. Երկար ձմեռուանից յետոյ գալիս է կարձատե փոթորկալի անձրեային գարունը և ապա երեք ամիս տեսողութեամբ ամառը այդ ժամանակ գաշտերը ծլում ծաղկում են,

այգիները հասունում մի քանի տեղ ջերմութիւնը
մինչև 26° և 30° աստիճանի է հասնում, այն ինչ
միւս տեղերում՝ ձիւնը ծածկում է երկիրը նրաշա
ամառուանից յետոյ գալիս է կարծ և ձիւնախառն
անձրևային աշումքը, որին դարձեալ հետեւում է
ձմեռը: Երեանեան նահանգը զուանուելով ցամաքի
մէջ տեղ կլիմայի մեծ ապրելութիւն է ներկայաց-
նում ձմեռը խիստ ցուրտէ, որպէս և բարձր - չայ-
քում, իսկ ամառը խիստ չող մօտ 30°:

Աշխատանքների համար Սահմանադրութիւնը գոտի: Այս գո-
տուն պատկանում էն Հայաստանի ան տեղերը, ո-
րոնք 10,000 ոտնաչափից աւելի բարձրութիւն ու-
նին, կան և այնպիսի լեռներ, որոնք միայն 13,000
ոտնաչափից վեր են, մշտական ձիւնով ծածկուած:
Դորա պատճառը ոչ թէ լեռների աշխարհագրական
դիրքն է, այլ նոցա առանձնայատկութիւնը: Մի քանի
հիւսիսոյին լեռներ 13,000 ոտնաչափից վեր են
մշտական ձիւնով ծածկուած, այն ինչ նոցանից շատ
հարաւ գտանուող լեռներ 10,000ից վեր միշտ ձիւ-
նով են պատած: Օրինակ Մասիսի և Արագածի վրայ
13,000 ոտնաչափից վեր է մշտական ձեակ սահ-
մանը, Եւրոպայում նոյն աստիճանի տակ լեռները
8-9,000 ոտնաչափից վեր են ծածկուած, իսկ
Հայաստանում Մասիսից շատ հարաւ Բիւրալներն ե-
նորդուած գագաթները 10,500 ոտնաչափից վեր
միշտ ձիւնով ու սառուցով են պատած: Գլխաւոր
պատճառները են քարի սեռութիւնը, որի պատճա-
ռով աւելի ջերմութիւն է ընդունում, լեռանց կօնա-

ձեռութիւնը, որ ամէն կողմից հաւասար ջերմու-
թիւն է ընդունում և ստորերկրեայ հրաբիսային գո-
րութիւնը: Այս գօտիում տիրապետում են յաւի-
տենական սամանամնիքը, փոթորիկները և մըրիկ-
ները, որ գէպի վեր բարձրացնելով ձիւնը մթնաց-
նում է օդը և կամ հաւաքելով դարուփոսերի մէջ
անդունիներ լքցնում, երեւմն էլ աշագին ձիւնա-
կըստեր կազմելով գլուզում են գէպի ցած դարա-
տափերը և գաշտերը: Տարուայ չորս եղանակը անկա-
տելի անցնում են. միայն ամառուայ ջերմ օրերին փոքր
ինչ հալուելով ականավճիտ աղըսիւրներ են կազմում:

Հայաստանում պիտի բարձր գույնու վեց ջայաբաժնում
տիրապետող քամիները անկանոն են, բայց և այն-
պէս այստեղ երկու գլխաւոր օդային հոսանք կայ.
մէկը վչում է Կովկասեան լեռների կողմից և կոչ-
վում է հիւսիսային, միւսը Հայաստանի հարաւ ա-
րևելեան կողմից և կոչվում է հարաւ արևելեան:
Այդ երկու օդային հոսանքները Հայաստանում մի-
մանց պատահելով խիստ քամիներ են բարձրաց-
նում, որոնք մեծ վտանգի մէջ են գցում Վրկանայ
նաւերը և երեւմն խորտակում են: Հիւսիսային հո-
սանքը վչում է աւելի ձմեռը, հարաւ արևելեանը
ամառը. բացի վերոյիշեալ երկու գլխաւոր օդային
հոսանքներից նկատելի է և մէկ երրորդ հոսանք, որ
վչում է գարնան ժամանակ արևելու տքից, ուստի և
կոչվում է արևմտեան: Այս օդային հոսանքները
կտրտելով Հայաստանը ծայրէ ի ծայր մեղմացնում

են կլման ջերմութեան և խոնաւութեան այլեայլ
աստիճանները խառնելով միմեանց հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԴԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ: Հայաստանում՝
կրինուած են մի քանի անգամ պատահական օդե-
րեոյթներ, որոնք կազմում են Հայաստանի օդի գե-
ղեցկութիւնը: Դոցա կարգում են՝ «ինսոյն», բլրոց-
շերտոյն և այլ տեսակ հիւսիսափայլները, հորին
չեն, արդրական չեն, ու չեն, չեն ուստաղ հարկուու
և այլ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՅՄԵՐԸ

ՊՏՂ.Ա.ԲԵՐՈՒԹԻԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ: Հայաստանի ար-
դաւանդ և բարերեր հողը, առատ և քաղցր ջրերը,
ջերմ օդը խիստ նպաստում են բուսական հարս-
տութեան ձոխանալուն և փարթամանալուն: Եատ
բոյսերի ծագման տեղը՝ հայրենիքը Հայաստանն է
եղած և այդ տեղից է տարածուել ուրիշ երկիր-
ներ: շատ բոյսեր էլ կան, որ Հայաստանում վայրի
գրութեամբ առատօրէն աճում են, այն ինչ ուրիշ
երկրներում ամենամեծ հոգացողութեամբ հազիւ
մշակում են: Հին ժամանակ երկրի բարերելութեան
համաձայն էր և մշակութիւնը անջուր տեղերն էլ
արուեստական կերպով որոգելով մշակում էին, բայց
հարազատ թագաւորներից զրկուելուց յետոյ շատ
տեղ ամայացաւ, անապատ դարձաւ: Այն երկրը,
որ 30 միլիօն բնակիչ կերպելուց յետոյ, ահազին

քանակութեամբ պաշարեղէն էր գուրս ուղարկում,
այժմ յաճախս սովով է ենթարկվում շնորհիւ երկրի
վատ կառավարութեան, տէրութիւնը ամենայն տե-
սակ հարկերով ծանրաբեռնում է երկրագործին,
կառավարիչը Ճնշում և կեղեքում է, ըրջապատող
վայրենի Քուրդ և Թուրք ազգութիւնները յափշ-
տակում են գաշտային աշխատանաց պտուղը. երկրա-
գործը չունի իւր սեփական հողը և մեծ մասամբ
վարձով է վերցնում ահազին տոկոս վճարելով: Այս
և նմանօրինակ պատճառներ արգելում են երկրի
լաւ մշակութեան. Ռուսա- Հայաստանը փոքր ինչ
բացառութիւն է կազմում վերտիշեալից: Ինչպէս
բազմատեսակ է Հայաստանի մակերեսոյթը և կլիման,
այնպէս էլ բազմատեսակ է նորս բուսական հարս-
տութիւնը, սկսած ջերմ բարեխառն գօտոց մինչեւ
բեկուային գօտու բոյսերը ունի, որոնք սկսած գաշ-
տերից և հովիսներից բարձրանում են մինչեւ լիրանց
գագաթները: Հայաստանի բոյսերը գաշտերի և լիո-
ների վրայ աւելի բարձր են տարածվում, քան նոյն
աստիճանի տակ նւրոպայում: օրինակ այդու բոյ-
սերը, որ նւրոպայում հազիւ մինչեւ 5,500 տանա-
շափ են բարձրանում, Հայաստանում նոյն աստիճանի
տակ Արարատեան գաշտում տարածվում է 4,500
ունաշափից վեր: Այն վայրի ծառերը, որոնք նւ-
րոպայում հազիւ 5,500 տանաշափ են բարձրանում,
Հայաստանում Մասիս և Սուկաւի վրայ 8,000 ուն-
աշափ բարձրութեան են համառւմ:

Հայաստանը հարուստ է բազմատեսակ պտղա-

տու ծառերով, խեժերով, հացաբյսերով, բանջարելէններով, ծաղիկներով և անտառային ծառերով:

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԵՒ ԹՈՒՓԵՐ. Հայաստանի պտղատու ծառերից յայտնի են աւելի չելական, ջերմ կլիմայի բայսերիցն է, վայրենի դրութեամբ ծածկում է Կիլիկիայի լեռները: Շագանակ գտանվում է Գուգարաց, Մոկաց և Խաղտեաց անտառներում, նոյնպէս և Զար գետի հովիտում: Նուան գտանվում է Երասխի, Կուրի և Տիգրիսի հովիտներում: Կիլիկիայում աշաղին նուան անտառներ կան. ամենաընտիրն է Վանայ նուար, բայց Պարսկա-Հայաստանում գորանից գինի են շինում: Նշանի և շնչուղչնի գտանվում է Երասխի աջ կողմը Կարմիր գետից մինչև Սև ջուրը, նոյնպէս Սիւնեաց և Բիւրակնեան անտառներում: Ծիրանի. սորա հայրենիքը Հայաստանն է. ընտիր տեսակը գտնվում է Կաղզուանից մինչև Մեղքի գետը, նոյնպէս Վանայ և Խարբերդի կողմերը:

Կիործն և նորինց մշակվում է Տրապիզոնի և Կիլիկիայի դաշտավայրներում: Արևոտ և Թռոլինց գտանվում է Կիլիկիայում: Բամբակ, Հայաստանի բամբակը Ամերիկայի բամբակից լաւն է, միայն մաքուր չեն հանում, ուստի հարկադրուած են անմշակ օտար երկիրներ տանել: Դոված է Երևանու, Մուշի, Խարբերդի, Սմիւնիայի և Կիլիկիայի բամբակը: Խաղող. լաւ խաղողը գտանվում է Արագածի հարաւային ստորոտներում և Ուտիքում, իսկ ամենաընտիր գինի պատրաստում են Վանայ, Սալմաստի և Խարբերդի կողմերը: Խարբերդի գինին իւր գերազանց համով

արտամասով և թնդութեամբ կալող է մրցել Խերէսի և Մագելիքի հետ: Կիշտան, իսկական կինամոնը ստանում են դոցա երեք ամեայ մատաղ ոստերի կեղևներից: Կետան. սորա հայրենիքը Հայաստանն է և այստեղից են տարած առաջին անգամ Եւրոպա *): Դոված է ձորոխի և Արաքսի հովիտի կեռասոր: Խաչը. սորա լաւ տեսակը գտանվում է Երասխի և նորա վտակ Կարմիր գետի հովիտում, իսկ ամենից ընտիրն է Վանայ արքայափնձորը, որի կորիղները մեջը աղատ շարժվում են: Բացի վերոյիշեալներից այլ և շատ ուրիշ պտղատու ծառեր լրջնում են Հայաստանի անտառները և մացառները. Խեժեր: Հայաստանի խեժերից յայտնի են Քարախունի. մի տեսակ խեժէ, որ ստացվում է համանուն ծառից. գոյնով կարմիր է, կարծրութեամբ և յատկութեամբ նման է սովորական խունկերին. Սպիրոֆու, գորա խեժը լաւ հոտ ունի, Կիլիկիայում Ամանոսի վրայ անտառներ է կազմում: Կալպանում, նոյնպէս անուշահոտ խեժէ, որի անտառները լեռների վրայ ցրուած են մանաւանդ Կիլիկիայում: Դաշտէ. մեղրահամ քաղցլը խեժէ, որ երեւում է մի քանի բոյսերի տերենների վրայ, առաւելապէս կաղնի ծառի, մատուտակ խոտի և դաղ կոչուած թփի. Դաղպէն առաւելապէս երեւում է Յունիս և Յուլիս ամիսների մեջ Կարմինից սկսած մինչև Սասունի կողմերը. Գաղպէն վերոյիշեալ բոյսերի տերենների հիւթն է, որ

* Կլոուէն. Փեզեք. աշխարհագր.

գոլորշանում է գիշերներով և դիպչերով ստոցնող տերեներին գոյացնում է քաղցր ցողանման հատիկներ։ Այդ կերակուրը մեկ լաւ գեղ է համարվում թօքախախ։ Բայց Գաղպէից, ինչպէս և մեղրից շատ ուրիշ տեսակ տեսակ քաղցրահամ ուտելիքներ են շնում։

ՀԱՅԱԲՈՅՑԵՐ. Հացաբոյսերի այլ և այլ տեսակները ինչպէս են՝ շրջու, բրնձ, գալի, հաճար, էրրշի, էգեղաղցրին և այլն ամենամեծ առատութեամբ մշակվում են Հայաստանում և լաւ վարձատրում են աշխատանքը մեկին 60—մինչև 100 տարով։ Ցորենի երկու տեսակը կայ Հայաստանում էտքնրահառ և սպառականացար տոկունէ և մշակվում է նիրակայ, Բագրեանդայ և Տարօնայ դաշտերում։ Սպիատակահատը մշակվում է Այրարատում։ Գարի Աշրաքսի և կուր գետի հովիսներում աճում է վայրենի դրութեամբ ինքնաբոյս։ Բրնձ ամենալաւ տեսակը գտանվում է Շարուրայ, Խարբերդու և Մարտոնայ դաշտերում։ Հայաստանի բրնձի առուտուրը հասնում է մինչև Հաշտարիսան, Նիմնի-Նովգորոդ։ Կրպէի և հաճար նոյնպէս ինքնաբոյս աճում է մանաւանդ Արածանու հովտում։ Կաճէլ, զբու, կաճէլ նոյնպէս լաւ մշակվում են Այրարատում, Վանայ կողմերը և այլն։

ԲԱՅՆՉԱԲԵՂԻՆՆԵՐ. Եի ԱՐՄԱՏԻՔ. Հողի խիստ ուժեղ յատկութիւնից երկրի բանջարեղիններն էլ աւելի զօրաւոր և համով են, մինչև անգամ շատերը իրեւ գլորայք են գործ ածվում։ Ոչ միայն

մարդոց աշխատանքով, այլ և ինքնաբոյս աճում են շատ բանջարեղիններ։ Միախառնի ընտիր տեսակը գտանվում է Սեբաստիայի, Բաղէշի և Մուշի կողմերը, որ Սաման տեսակից ոչնչով պակաս չէ։ Դումա, որի ընտիր տեսակը գտանվում է Նրեանսայ կողմերում։ Տիգրանակերտը յայտնի է իւր խիստ մեծ չեղուներով և սեփակ ասում են, որ եթէ 10 ամեայ երեխան նստի ձմերուկի վրայ՝ ոսները գեանին չեն հանի։ Սեխի ամենալընախիր տեսակը Որմիոյ կողմերումն է գտանվում։ Սեբաստիան յայտնի է իւր պարարտ և հիւթալի ճակարտական, որից շաքար են պատրաստում։ Լոշպակ, սորա արմատը մարգու գլխի ձեւ ունի, այդ պատճառով և հարդակերպ էլ է կոչվում։ Խիստ թըրեցնուլ յատկութիւն ունի. գործ է գրվում բժշկականութեան մէջ։

ԱԵՐԿԱՏՈՒ ԲՈՅՑԵՐ. Տօրոն. սորանից ստանում են կարմիր ներկ, գտանվում է Կուր գետի հովիտում։ Ճպէի, սորանից նոյնպէս կարմիր ներկ են ստանում։ Գետը, առաւելապէս գտանվում է Նվիրատի և Նրասխի հովիտում, սորանից ստանում են սեաներկ։ Ամենալընախիրն է Բաղէշի գլստորը, որ կ. Պօլոյ վաճառանցում առաջին տեղն է բռնում։

ԾԱՂԻԿՆԵՐ. Համաձայն երկրի մակերեսոյթի կազմութեան ծաղիկներն էլ բաժանվում են, հովտային, լիռնաստորոտային և լիռնագագաթային կամ ալպիան տեսակների. իւրաքանչիւր տեսակից էլ խիստ շատ կան և գեղեցիկ են. գեղեցկութիւնը ոչ թէ կայանում է բազմատեսակութեան և գոյների մէջ,

այլ նոցա փարթամութեան, գոյնիւկամ նարօտե
պայծառութեան և բժշկական գործադրութեան
մէջ. Քրիստով, մասունքնի, շրջանի, միահինքնի,
նունուքնի, նորուոնի, աշխերածաղնի, շամածաղնի
և օշակ շատ տեսակները ծածկում են Հայաստանի
գաշտերը և հովիտները; Առածազեկը և օշոշը չու-
րացրած իբրև լուի գեղ մեծ քանակութեամբ տա-
նում են Եւրոպա, մինչեւ անգամ Ամերիկայ:

ԱՆՏԱՌՆԵՐԻ Հայաստանը իւր օդի խստութեան
պատճառով չունի մեծամեծ անտառներ, եղած
ներն էլ վատ հոգացողութիւնից արգէն սպառուե-
լու վրայ են: Անտառներից նշանաւոր են Գուգարաց
անտառը, որ բռնում է Աղսուեց սկսած մինչեւ
Խրամ գետի հովիտը. Վահանդայ (Սողանլու) ան-
տառը, առաւտ է մայրի ծառերով. այստեղ 1828-ին
12 սամէն փայտը արգէր 2 ռուրլի 50 կոպէկ:
Բիրսկինեան անտառ, հարուստ է ընկուղենիներով,
որի կոճղը ամենայն տարի մեծ քանակութեամբ Եւ-
րոպայէ տարվում: Խնուռի անտառ, բռնում է Խնուռ
գետի հովիտը. հարուստ է տօսախով, որից ընափա-
կարասիք են շինում: Տօրուեան անտառ, հարուստ է
ընկուղենիներով և կաղամախով: Ընյուտեարափ անտառ,
բռնում է Վանայ լճի հարաւային կողմը, Աղաւա-
անտառ, հարուստ է ընկուղենիներով. Բաղշա-
անտառ, հարուստ է բազմատեսակ ծառերով, Սիսուտց
անտառ, բռնում է Գարւոյ լեռները և Բարկուշարի
հովիտը. Խաղբեաց անտառ, ծածկում է Պարխա-
րեան և Մոսկվեան սարերը: Անտառ կազմող ծա-

ռերը զլիաւորապէս են հետեւեաները՝ չաշանախ,
որի երկու տեսակը կայ, բարպէ (ղովախ) և ասի
(չինար). Էաղնի, արտայականի, պաղնի (զարաղաջ)՝
շատ ամուռ փայտ ունի. Գի մշտադալար ծառ է,
իւղային անուշահոտ, խիստ կարծր և անփոյտ փայտ
ունի. շաճի (շամաղաջ) գիի տեսակիցն է. պիճի,
անուշահոտ խեժոտ ծառ է, դափնի, մշտականաչ և
անուշահոտ է: Խաճի ընտիր նաւաշինութեան համար
փայտ ունի: Տրամի, (շինշատ) մշտականաչ է: Որպա-
փայտը ամուռ է, կարծր, ծանր և գեղնագոյն. գործէ
զրվում նուրբ քանդակադործութեանց համար:
Մարդ պառւղներից թունդ խմիչք են շինում (։)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴՐԱԿԱՆԻ ԵՐԱ

Հայաստանը իւր բազմատեսակ կլիմայի և ձոխ
բռնականութեան համաձայն ունի և կենդանիներ,
բայց և այնպէս Հայը երբէք չէ բաւականացած ե-
ղածով, այլ ամենահին ժամանակից սկսած միշտ
աշխատած է աղնուացնել և բազմացնել օգտուետն
կինդանիների տեսակները:

ԱՆՏԱՌՆԻ ԿԵՆԴՐԱԿԱՆԻ ԵՐԱ. Հայաստանի ընտանի
կենդանիներից ամենից օգտակարը և ընտիրը չեն է:
Գոված է մանաւանդ նժրագիտ կոչուածը, որ յայտնի է

* Հայաստանի բազմատեսակ տեսակներ, Ալեք. քաղ. աշխ.
Խճ. Հնախուու. Կլէոպէն. Ֆիբլ. աշխ. Վաղներ ձան. Հայաստան, և ազն:

իւր ոյժով և գեղեցկութիւնով հին ժամանակ դռան բանեցնում էին միայն թագաւորները և իշխանները. 20,000 էլ իրեւ հարկ վճարում էին Պարսից թագաւորին. նմոյգի մէկ տեսակը այժմ կայ Խնուսի կողմերում և կոչվում է քէհլան. խիստ գոված է և Ղարաբաղի կամ Արցախի ձիաները, որոնք իւրեանց մի քանի յատկութիւններով Թուրքեատանի և Արաբիայի ձիաներից գերազանց են. Զորք. Հայաստանի խոշոր և ուժեղ ջորիները գամանվում են Սպերի կողմերը ձորոխի հովիտում և Որմոյ շրջակայքում Դոված են և Հայաստանի ահագին գոմեշնը, մանաւանդ Խնուսինը և Ղարաբաղինը, ուր աշխատում են դոցա տեսակը ազնուացնել նախ կռուացներով և ապա յաղթողի տեսակը բաղմացներով: Նշանաւոր են նոյնպէս իրավը և ոչխորհնչը մանաւանդ Բիւրակնեան լեռների ստորոտներում և Արածանու վերին հովիտում. իսկ ամէնից ընտիր տեսակը գտանվում է Վանայ կողմերը. այստեղի ոչխարները այնքան չաղ և ահագին դմակ ունին, որ շատ գժուարութեամբ են կարողանում հետեւից ձգել ուստի հանձարեղ հայ գիւղացին կապում է ոչխարի մէջքից երկու անիւնների վրայ գրուած փայտէ սայլակը նորա վրայ զնելով այն ահագին դմակը հեշտացնում է այդպիսով կենդանու մանգալը արոտներում: Հայաստանը իւր ոչխարներով կերակրում է ամբողջ Փոքր - Ասիան, Եգիպտոսը և Կովկասը, միայն Կարինից տարեկան 25,000 ոչխար է գուրս գնում Փոքր - Ասիա. իսկ Գանձակայ նահանգը (Սիւնիք)

մոտ 900,000 ոչխար է արածացնում: Այծի ազնիւ տեսակը գտանվում է Բաղեշի և Վանայ կողմերը, ուր նոքա էր է կոչվում. փուլիկը Հայաստանի միրինոսն է, որ իւր սպիտակ և աղնիւ մաղով պակաս չէ իսպանական միրինոսից: Խոզ որի պահելը Հայոց յատուկ պարապմունքներից մէկն է, ամենայն տարի հարիւր հազարներով դուրս են տանում օտար երկիրներ վաճառելու. Դոված է և Վանայ իտաւն երկար և փափուկ մազով ծածկուած. սորա մորթուց շատ լաւ օձիք են շինում:

Վ ԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ: Բացի վերոյիշեալ-ներից և ուրիշ շատ տեսակ վայլենի կենդանիներ մեծամեծ երամներով շրջում են Հայաստանի տափաստաններում և անտառներում: Այծեանների և ցե-աէրի երամները շրջում են Պարսկա - Հայաստանի ծաղկաղարդ տափաստաններում, Կիլեկիայի դաշտերում և լեռներում, ինչեւը երամները շամբերում, հշիկ-նէրի երամը անտառներում, ոչխարի վայրենի տեսակը Հայաստանի շատ տեղերում, և այն: Մեղաների խումբը տարածուած է ամէն ուրեք, աւելի Սիւնեաց անտառում, ուր փեթակներից մեղը հալուելով Որոտն գեսն է թափփում:

Վ ԱՅՐԵՆԻ ԳԱԶԱՆՆԵՐ: Հին ժամանակ աւելի շատ տեսակ վայրենի գաղաններ են յիշվում, քան թէ այժմ. նոցանից մի քանիսը այժմ անյայտացած են. վայրենի գաղաններից աւելի յայտնի են առիւծ և լոռի, երկուսն էլ գտանվում են Հայաստանի ջերմ կիմայ ունեցող տեղերում. յախոզ, աւ ելի գտանվում է

Երգնկայիւ և Կարայիսամրիւմէց Հարէշ կոչուած լիւ
բանանտառներում և Հայքստանի անտառները լիքն են
Հնագայերով, Հայյերով, Արձերով, Բրունիներով,
աղուէներով և այլն ։ Խոռոչուած ան ու ան ան ան ան
թի՛ջուննեմ ։ Հայաստանում շատ կան և տես
սակ տեսակ թռչուններուայսապէս մի ճանապարհորդ
Կարնոյ շամբուամ տեսած է հարիւր հօթանասուն
տեսակ թռչուններ ։ Ա պյտուղ ։ Թռչունները այնքան
շատ են և աներկիւղ ծորե համարձակ մօսենում են
մարդկանց առանց երկիւղ կրելու ։ Բացի Կարնոյ
շամբից և ուրիշ ։ շատ շնմբերում, անտառներում
լիքն են հնագար տեսակ թռչուններ, որոնցից նշառ
նաւոր են արծիւ; անգաւ շահնշանցին, առեւակի առխոնի
Քաղիւն, զիշուալ արտգիւ կոռուէ է կորու, արօն և այլն;
Ա Զիմեին և Անդամնենին ։ Հայաստանի գետերը և
Ծերը հարուստ են տեսակ պետակ ջրային կենդա
նիներով, ամենից հարուստ է ձկներով, որոնցից նշառ
նաւոր է Արածանոյ վեևերբն ձուկը, առաւելի իշխուա
գեծորունի ։ Հայն է բարիւրիակ ։ Հայրմրիայու, բեղուա,
հողոյտ և այլն ։ Ջրշուն, որի մոլոր մուշտակի հա
մար թամիեցնվում է, գնված է Նարկիւայի ջրշունը
էրիս, որի մաշկը նոյնպէս պէտքական է ։

ՅԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆՔԵՐԸ

Վերջին ժամանակուայ երկարանական հե
տական հայաստան, իւնդ, մանդին տես Ալիշ Խնձ Վագւ
ներ, ռեօն առ քըր Արման, Արցրան, և այլն:

Պատճտութիւնը պարզ ցոյցէ տալիս, որ Հայաստանի
հողը իւր մեջ թագուցած է եւնի առաջին քանիսոււ
թեամբ հանքային հարածութիւն, որ լաւմշակուեա
լով կաթրող էր եկերին, մեծ հարսած թիւն տալ: Այդ
հանքերից շատերը նախնի ժամանակները մշակ
վաւ էին, ինչ այժմ հանմակեամենքը բոլորին բարձի
թողի են այծուածք նղաճ հանքերից այժմ առելի
նշանաւոր են այլ հանքերը, որոնց քանակութիւնը
այնքան մեծ է, որ Հայաստանի մի քանի գնաւառու
ներ գործու անունով կոչում են Սանանաղի, Դար
րանաղի, Աղբումիտ և այլն. այժմ աղահանքով շատ
հարուստ են Կարգումանի Ամախի, Դերջանի, Կող
պի, Նախիջևանայ և Աղուշի կողմերը ։ Եթէ բոլոր
Եւրոպայի և Ասիայի աղերը սպառուեն, Մուշք իսր
այս հանքով նոցա կարող է բաւականութիւն տալ:
Խնուսից ողեալի հարաւարեւելք միւս տեսակ պատ
հանք կայ, որ բոլորովին պայծառ է կարմր գոյն ունի
և իւր անցոյշ համան սպանակ աղեց էլ գերազանց է.
բացի նվերայիշեաներից բազմաթիւ աղմածուր աղ
բիւրները և Հնակները անցնուած ցոյցնեն տալիս, որի երկրի տակ
գեռ շան թագնուած աղահանքեր միան, որը մեզ
յայտնի չեն ։ Երկան, առաջութեամբ գտանվում է Առաջինի
լիոններում, բայց ամենից լաւմշակում է Զեյթունի
կողմերը ։ ուր տեղական Հայերը զէնքերէն շինում:
Պահանջանալուն է Վահայոց, Մուկիւտան, Պար
խարեան և կալվածքու (Կարահայոց), սպրերում, մեծ
քանակութեամբ գտանվում է և քիթշինի, Ակնի,

Սեբաստիայի ոռ Բալուայ կողմերը: Բալուայ պրնձառ հանքից տարիեկան 200,000 տութ պղինձ է ստացվում: Սորա մօտով անցնող գետերի եզերքները մինչ յիսուն վերատ հեռանորութեամբ պղնձային ժանդով են պատած: Արծաթի հարուստ բայց անշակ հանքերը գտանվում են Կապան կոչուած տեղում և Արագիկերի մօտերքը: Բայց ամէնից հարուստ և մշակուող արծաթահանքն է Գիւմիւշխանէինը: Արծաթահանք գտանվում է և Գանձակայ կողմերում, նոյնպէս և Կիլիկիայում Զէյթունի մօտերքը: Բայց անշակ են Ոսկու հանքերից նշանաւոր են Մոսկիքեան լեռներում Սպերի հանքը և Տորոսեան լեռներում Արդանայի ոսկու հանքերը: Մագնիսի հանքերը առաւելապէս գտանվում են Տէրէնտէ քաղաքի մօտերքը Փոքր Հայաստանում: Ծըծռանք. Նշանաւոր է Հասան-Ղալայի, Կաղզուանի ծծմբահանքը: Արտագածը նոյնպէս հարուստ է Տըծումբով որի վրայ Գուրգերը հրացան արձակելով կրտսում են և տանում ծախում: Ճորոխի աջ կողմում, Մոսկիքեսն սարերում, Նարիմանի մօտերքը գետնի առաջնդարձակ տարածութեամբ թաղուած են գարանտիք, հանքերը Բայց քայլածուխով հարուստ են: և Կամախի, Զէյթունի, Բալուայ և Գանձակայ կողմերը: Զանելի առաջնորդ հանքերը Հայաստանի շատ տեղերում: Կան, բայց ամէնից հարուստն է Բիթլիսինը, որից տեղական քնակիչները, ներկ են շինում: Նաև սորա ընտիր տեսակը շատ առատօրէն գտանվում է Բագուայ կողմերում, որը և լաւ մշակ-

վում է. Նաւթի հանքեր կան այլ ես Հասան-Ղալայի, Վանից և Գանձակայ կողմերը, ուրագան ըն մշակում: Մարմար. Հայաստանում մարմարի կրեք տիւսակը կայ, և սպիտակ կարմիր: Սպիտակ և կարմիր մարմարով հարուստ է Սեբաստիայից Հիւսսիս Պարխարի շղթան: Իւրեանց մաքրութեամբ գովածն և Այնթափինանելով գտանուց մարմարի հանքերը մաղրուածի մօտերքում և և կայ մի տեսակ մարմարինի պէս հանք որ նախ հանկիս խիստ փափուկ է և կարելի է մինչև անգամ դանակով կարելի խակ յետոյ օդի ազգեցութիւնից խիստ ամրանում է և ստացվում է գանազան գոյների մարմար: Նշանաւոր է և Մարանիտի կողմերը գտանուած մարմարի հանքերը: Պաշէշ (շիր), գտանվում է Գանձակի մօտերքը Երասինք կոչուած գետի լեռներում: Պորֆիր: Մասիսը ամբողջաղէս պորֆիրային կազմութիւն ունի: Արծիճ: գտանվում է Տօրոսեան լեռներում: առաւելապէս Խարբերդի կողմերը: Առև. սորա երեք տեսակը կայ, սպիտակ, գեղնադոյն և սե, դոված է Օլթիի սաթը: Բէրէշ: սորա լաւ տեսակը գտանվում է Վանայ կողմերը և Մոկաց ու Աղբակու կողմերը: Հայաստանում կան և շատ ուշից տեսակ աղմի: Հանքերը ինչպէս են գտնուած, ունենալու շնորհ, ունենալու, ունենալու և այլն: Հայաստանում կան և այնպիսի տեղեր, որոնք ճարտարապէտութեանց համար կարող են խիստ խոշոր քարեր տալ: պատմութիւնից կարող ենք յիշել և նամիրամայ կտրել տուած քարը, որ մօտ 130 դոնաշբախ

երկայնութիւն և 25 ունդազմակագայնութիւն .ունէր :
ուս բազմատեպակի է .և Հայուսանունի հողիմակազմու-
թիւնք .չափանիջու միրռամակահրաբխային կազմու-
թիւնք ,քանու վայրական շուշատ .ունդ էլ նոքա-
խայն են միմեանց հետեւ ու առաջ խարապան ունիւն
որ զան նայած բանու ու մանց վըստիքած ու .
ԵՐԿՐՈՎԱԿԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳԵ-
ՅՈՒԹԻՒՆԸ ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆՆԵՐ
ՔՍԴԱՔԱԿՈՆ ԿԵՍՆՔԻ ԴՐԱՅ
առաջ առաջ մաքան մաքան մաքան մաքան առաջ առաջ
Երկրի ՆԵՐԵԹԻՄ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ :
Հայաստան ասելով մենք հասկանում ենք այն Երկրը ,
ո՞ր հին ժամանակարածվում էր Հայկական քաղաքա-
կան իշխանութիւնը . իսկ Երկրաբանական Հայաստան
իւր յատկութիւններով մի մրութիւն կազմող , որոշ
աշխաններով Երկրի Հայ : Այն Երկրը , որ մենք կո-
չում ենք Հայաստան , Երկրի ներքին և արտաքին
կազմութեան նայելով բնականական բաժանուածէ
միմեանցից Միանգամայն տարբեր շատ մանր և մեծ
մասերի : Ներքին կազմութիւն ասելով հասկանուածէ
ենք Հայաստան Երկրը կազմող պղատոնական , պղու-
դուական և Հեփեստեան կազմութեանց ծալերը և
նոցա բաղադրութիւնները և այն Արտաքին կազ-
մութիւն ասելով հասկանական շատ մանր և մեծ
բնական միմեանցից բաղադրութիւն պարբեր մասերի մի-
քանի ժամանակից յետոյ իւրաքանչիւր բաժնի բնաւ
կիչը կունենայ իւր առանձին յատկութիւնները , ու-
վորութիւնները , պարապմանքը և այն ամենը
անգամ մէկ մասի բնակիչների աւելի շատ բաղա-
ցած կլինին քան միւս մասինը հնդհակառակը եթէ
մի քանի ցեղերու բոլորովին առարկեր այսակութիւնը
ներով առվարդութիւններով կեանք իւրանական և այն
բնակեցնենք : միասին մէկ անելուն ոգբա նախ ծրի հա-
ւասարակշռութեան պէտք միմեանց վերաբեր կազդեն
և ապա ամենքն էլ կենթարկուեն տեղական բնաւ
թեան աղյուցութեան : Ֆրուցէ ազգային մի քանի
գարերով պամատացած սովորութիւններ երկար յա-
մառութեամբ պատերազմեն : իրայց գարձեալ վնու-
թիւնը կյազմիւաւ

բարձրաւանսկակները , հովիտները , ձորերը , դաշտերը ,
տղիփառացանութեան ջանակակից անունները և անունները
տերը և աղյուց անունները բայց մասնաւոր թիւնը Երկրի
ներքին և արտօնքին կազմութեան մեծ բազմատեսա-
կութիւնն է աղյուց անուններին ու մա քանի աքական
կեանքի բոլոր պայմաններին մէծ , քանի աքական
թեան , կրծանական քարբայական ուղղութեան հազար-
կան գարգացման , պարտապման քնների , սովորութիւն-
ների , բարբառների ցեղերի , ժողովրդեան թուրին կա-
ռավարութեան , եղանակին , քաղաքների ծագման և
այն : Պարզնեք օրինակով և թէ մի ազգ իւր մինանակի
յատկութիւններով և սովորութիւններով . բնակեց-
նենք մի այնպիսի Երկրութիւնը որ բաժանուածէ շենք-
ներով , միեանցից բաղադրութիւն պարբեր մասերին մի-
քանի ժամանակից յետոյ իւրաքանչիւր բաժնի բնաւ
կիչը կունենայ իւր առանձին յատկութիւնները , ու-
վորութիւնները , պարապմանքը և այն ամենը
անգամ մէկ մասի բնակիչների աւելի շատ բաղա-
ցած կլինին քան միւս մասինը հնդհակառակը եթէ
մի քանի ցեղերու բոլորովին առարկեր այսակութիւնը
ներով առվարդութիւններով կեանք իւրանական և այն
բնակեցնենք : միասին մէկ անելուն ոգբա նախ ծրի հա-
ւասարակշռութեան պէտք միմեանց վերաբեր կազդեն
և ապա ամենքն էլ կենթարկուեն տեղական բնաւ
թեան աղյուցութեան : Ֆրուցէ ազգային մի քանի
գարերով պամատացած սովորութիւններ երկար յա-
մառութեամբ պատերազմեն : իրայց գարձեալ վնու-
թիւնը կյազմիւաւ

ԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹԵՍՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՍՆՔԻ ՎՐԱՅ

Երկրի ԿԱԶՄՈՒԹԵՍՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԱՊԱՄՈՒՆՔԻ ՎՐԱՅ: Որքան բազմակողմանի լինի երկրի հարատութիւնը, այնքան և բազմակողմանի կինի նորապարապմունքը, որքան դիւրամստչելի լինի նա, այնքան և պարապմունքները շատ առաջ կերթան և կծաղկեն: Հայաստանի ներքին առատ հանքային հարստութիւնները կամ արտաքին կազմութեանց խիտ անտառները, հարուստ արօտները, ընտիր վարելահողերը, ձկնառութ ջրերը և այլն դէպի իւրեանց գրաւելով բնակիչների ու շագրութիւնը՝ ստիպում են նոցա մշակել իւրեանց հարստութիւնը և այդպիսով իւր սեփական հարստութեան համաձայն երկիրը ստեղծում է ժողովրդեան համար պարապմունք: Ուրեմն պարապմանք մէջ շէտավար երիբն է՝ բնութիւնը և ոչ ճարդը: Այսպէս նիրակայ արգաւանդահող դաշտերը ստեղծեցին հռչակաւոր շերակացի երկրագործին, իրեն ամստափար իւր մասնագիտութեան մէջ հմուտ և միանդամայն վարժուած: Արցախի և Կիլիկիայի խիտ անտառները քաջ որսկաններ և ճարպիկ զինուորներ ստեղծեցին, որովհետեւ անտառապյին երկիրը տնամակ լինելով ի վաղուց ընտելացրել է կենդանիներ և վայրենի գաղաններ որսալուն: Զէյթունի առատ երկաթահանքը և լեռնային բնութիւնը մետաղագործութիւնը առաջացրին: Հայաստանի բազմատե-

սակ հարուստ քարահանքերը, տեսակ տեսակ հողերը և մետաղները ամբողջ Ասիայում հայկական ճարտարապետութիւնը ծնացրին, որի մնացորդները իւրեանց բանդակաղործութեամբ, նկարներով ամենքին զարմանք կարող են պատճառել: Վանայ և Սևանայ Ճերը իւրեանց բազմատեսակ համել ձկներով ձկնորսութեան լայն ասպարէզը բացին ամբողջ շրջակայ բնակչաց համար: Ցողապատ, ծաղկազարդ և պերճախոա հարուստ արօտները անասնապահութեան հետ միասին կենդանեաց ցեղը ազնուացրին և այլն:

Երկրի ԿԱԶՄՈՒԹԵՍՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՃԱՌՈԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ: Երկրի կազմութիւնը մեծ նշանակութիւն ունի վաճառականութեան ծագման և նորատեսակի վրայ: Երկրի բազմատեսակ կենդանական, բուսական և հանքային հարստութիւնները տեղականներին առատ վարձատրելուց յետոյ, մեծ պաշար էր թողնում և գուրս տանելու համար, ուստի Հայաստանում նախ ծագեցաւ աւելի պարզ ցամաքային վաճառականութիւնը, բայց դժուար անցանելի լեառները, բարձր կիրճերը, խորը ձորերը չմոյլ տուին նորան ծաղկելու Հայաստանի հողում: Դորս փոխարէն շրջակայ ծովերը, ներքին նաւազնաց գետերը աւելի դիւրին և ընդարձակ ճանապարհ բանալով ծաղկեցրին ծովային վաճառականութիւնը: Հայաստանի լեռնային դիւրին, ուրեմն և վաս հաղորդակցութեան պատճառով ներքին վաճառականութիւնը շատ ընկած է այժմ:

Երկրի ԿԱԶՄՈՒԹԵՍՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԲՆԱՒՈ-

ԲՈՒԹԱՆԱՎՐԱՅԻՑ Երկրի կամովնութիւնը պարագայմունք՝
ների համաձայն կամզմակերպեցաւ հայժողովութեած քայլ
մասեաստիքի բնաւորութիւնը մասով դժիմն կերպարութեա-
ծումնեամով լիներ և քայլ հոգի, պարին անդաշիկ աստի-
րազմով, առնջնութեր և անգամասնէն օրիւ-
նափակութեամասնութիւնը Սպասունցիք այն ։ Երկրակայ
երկրագործութեանկած էւր ոգութեամսի հայութիւն վայ-
րուեմ է ։ Խաղաղը հանգարաւագնվորութեամուսնի անինու-
կեամուսնի գութեանկամնը կամութեանութիւն դիղելի-
հագար շամբաւագամ աթաղսունհայր հայրենիքը,
թափանուն է քայլաքից քայլաք, Սիւր մեծ զարգաց-
նելով շամբանորութիւն, շամբանորութիւն, առն-
խոնջ քործունէրութիւն և անկուչու ադմանութիւն
ինչպէս են Գողթան գաւառարի քնակի ըները, որոնք
ամէն ուժը եք, ցրուածուն այդ նպաստների համար, Ա-
րարանունան երկրի, ութարձր հայքի և այլ ճանուների
հարուստներ, ազնիճաքարահանքերը և ճանետայները
գաղափարակներ ազնիճաքարահանքերը և ճանետայները
ներով հայճապտապեսներ ատեղծեցին, որոնք իւ-
րեանց համաձարք իւրականացրին Հայաստանի հողում:
Երկիրի խիստ բաժանականութիւնը Հայոց մէջ միտ-
թեան կատը թուարութեամսներ ատեղծեցին, որոնք իւ-
րեանց համաձարք իւրականացրին Հայաստանի հողում:
Երկիրի խիստ բաժանականութիւնը Հայոց մէջ միտ-
թեան կատը թուարութեամսներ ատեղծեցին, որոնք իւ-

քաղործութիւնը, և բրկրագրութիւնը չ ճաղիտարած
պետութիւնը և անաւագութիւնը պաշտութիւնը պատճե-
նան առանձին մասաւոր, պարտագրութիւններենց պա-
հանցնեւ մասնակույցի ապատճանմամակ պարտապէ-
մունքից համաձայն կապատակութիւններ տուածացից և
մուանոր պարտապէմուց մասնակույցի պարտագրութիւնը
փայութիւններ պատճենականացնելութիւնը, բժշկականց
թիւնը և ամյա պանուց տրիենի իւրեանց զամբուգաց
մակ հանրածր աստիճանին հատած անգամ ունի առաջա-
նակ Ալիկը ԱԶԻՖ ՅՈՒԹԻՒՄ ԲԱՐԱՔ ԱԲՐԱՄ ԱՌԻԿ ԱՐԱՄ ՅՈՒԹԻՒՄ:
Խա-
րագանցիւր զեկուրի հարսադաշտիւն կախնաց է ժողո-
վորեան մաքի հարսադաշտիւն որքան հարուստ է
միտքը այնքան վահանաւութեամսից որքան արտայայտող քանակը¹
և անեւը, բայց մոքերի հարսադաշտիւնը կախութիւնը է
երկրի բնութեան և կազմութեամ հարսադաշտիւնից,
ուրեմնու երկրի կազմութիւնը ազգում է շեզուի հմա-
քասութեան վըայի խոկ անդան մին բնակութեան պե-
ղերին անարելուաթիւնից ծագում է բարբառացը ։
Հայաստանը բաժեանուած վնենքն բնակութեան պե-
ղերի մասերի հոնի հարսադաշտիւնը լեզերի հեմու միասին և
շատ բարբառներ, որոնք թե տեղական երկրի տա-
ռանձնայատկութեան և թե ժաղական երկրի տա-
ռարբեց յանութեան և բնաւորութեան հետևանք ինձու-
թման գաւառու բնակչաց վառ բանասմեղծմաթեան կ
հանձարել բնաւորութեան հետքը այսօր երեւում է

*) Վեհելմ Հումլուտ օ յայկախ կամ էտր. 50.

նոցա միանդամայն տարբեր բարբառի մէջ *): Հին ժամանակ ամենագլխաւոր բարբառների թիւը Շէր ***) իսկ այժմ աւելի շատացել է:

Երկրի ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿՐՈՒԻ Վ.Բ.Յ. Երկրի ազդեցութիւնը կրօնի վրայ ամէնից աւելի զդալի է ազդութեան մտաւոր զարդացման ստոր աստիճանի վրայ գտանուելու ժամանակ: Բայց նա չէ անյայտանում և ազդութեան բարձր զարդացման ժամանակ: Խիստ բարձր հսկայական լւոները, դժուար անցանելի լայն գետերը, անհասանելի խորը ծործոները և անդունդները սկզբնական շրջանում սարսափեցնում ձնշում և ընկճում են մարդոյ միտքը և հոգին և վառում երեւակայութիւնը. արտաքին բնութիւնը նորա: Մոքին անհասանելի և զօրութիւնը անդիմակրելի ու անխուսափելի լինելով՝ նա ակսմայ զգումէ իւր ոչնչութիւնը և սկսում է շրջապատող բնութիւնը պատել ինչպէս և եղաւ Հայաստանում երկար ժամանակ * * *): Եթէ չէին եղել Հայաստանի հսկայատես լւոները, յորդահոս գետերը, մութ քարանձաւները, թանձր և խիտ անտառները, նոքա չէին պաշտուի հայրերից, ինչպէս մի քանի դար պաշտուեցան (Մանի, Գրգուռ, Մասիս և այլ սարերը, Արմաւիրի անտառը, Արաքս գետը և այլ): Այն երկրները, ուր բնութեան բոլոր գեղեցկութիւնը կայանում է երկնային լուսաւորների մէջ, ամէնից

*) Ավշան քաղաքական աշխ. **) Ինձեւեան ***)
Бокль Исторія цивілізації. 80.

առաջ ծաղում է արևապաշտութիւնը. ինչպէս և եղաւ Հայաստանում Մոքայ աշխարհում Տեղական հանքերը և մետաղներն էլ ներգործում են կրօնի վրայ: Եթէ Հայոց աշխարհի փառք, պատիւ, կեցուցիւ, մայր, խնամող և ամէնից աւելի տարածուած, ժողովրդականութիւն ստացած ոսկէածին և զգաստութեան ասոււածուհին Անահիար չէր եղել ձուլած ոսկուց և զարդարած գեղեցկագոյն քարերով, գուցէ և նա չհասնէր այնքան փառքի: Եթէ իւրաքանչիւր քայլափոխում չէին եղել այնպիսի մեծ քանակութեամբ բազմատեսակ քարեր և հողեր, որից շինուած են Հայաստանի բոլոր անկիւններում վանքեր, գուցէ և այնքան վառ կրօնական զգացմունք չունենար հայ ռամիկը: Եւ ուղեղ որ երկրի լեռուները այնքան ուխտատեղեք ունին որքան Հայաստանինը: Եթէ չէին եղել Բաքուայ մօտերքում երկրից արձակուող բոցերը և հրային գագերը և չէր լինի կրակապաշտութիւնը, վերջապէս եթէ ուղեղ է որ բազմատեան կազմութիւն ունեցող երկրի բնակիչները աւելի կրօնական են *), ապա ուրեմն հայերը իւրեանց ծայրայեղ կրօնական զգացմունքով երկրի կաղմաւթեան են պարտական, որ համարեա ամբողջապէս պատած է բազմատեան շերտով:

Երկրի ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՑԵՂԵՐԻ ԾԱԿՄԱՆ Վ.Բ.Յ. Ցեղեր կարող են ծագել այնպիսի

*) Фонъ - Гота «Геологія о вліянні почви на життя человека».

երկրում, որ դժուար անցան լիւաներով պետքով և այն բաժանուածէ միմեանցից բոլորովին տարբեր թագերի: Հայաստանը ամբողջապէս այդպիսի կտրողաձան մասեր ներկայացներով՝ շատ նպաստեց ցեղերի ծագման և ընդդիմակլեց այլ ազգաց Հայոց հետ ձուլութիւնն: Օտար ազգերը առանձնացած երկրներում բնակութիւն, իրեանց կրօնով սովորութիւնն սերով իրեւ առանձին ազգ ապրեցան, իսկ Հայերը ընդարձակ տնօրածութեան մէջ ափառած լինելով բաժանուեցան շատ ցեղերի, որմնցից շատերը այժմ կամ անյայտացած են և կամ այլ անուններ են կրում:

ԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ԲԱԼԱԳԱՎ ԿԵՎԱՆՔԻ ՎՐԱՅ

Պատմութիւնից յայտնի է, որ ժայռոտ, աւազ զոտ և քաղաքարոտ երկրի բնակիչները բնորեանց երկրում ապրուստ չփոնելով ընդրում են մէկ գլխապետ և նորա առաջնորդութեամբ առաջատակում շրջակայ հարուստ և պատղաբեր երկիրները և վերջապէս նուածելով կազմում են միապետական կառավարութիւն: Բարերեր երկրի բնակիչները խաչարածական կամ երկրագործական կեանք վարելով հաւաքվում են մի քանի գնորդաստում առանձին ցեղերի ապրում են: Ցեղապետների իշխանութիւնը որդեցորդի անցնելով կազմվում է կալուածական կամ տանուտերական կառավարութիւն, ինչպէս և Հայոց

էր: Հայաստանի արտաքին կազմութիւնը աւելի նպաստեց տանուտերական իշխանութեան զարգանալուն: Երկիրը ամբողջապէս կտրտուած լինելով դժուար անցանելի կամ անանցանելի լեռնաշղթանելով շատ օգնեց իշխանութեան անկախ զարգանալուն և ընդէմիառակել մինչեւ մայր թռչանալուն: Մէջ Հայաստանի համարեա բոլոր գաւառները առանց բացառութեան ունկն իւրեանց բնական սահմանները և ներկայացնում են մի քանի ինքնուրոյն աշխարհագրական դիրք ունեցող երկիրներ: Հայաստանի սահմանների դաշտային ուրեմն անպաշտպան լինելու պատճառում սահմաններում կազմուեցան բգեշնութիւններ սահմանապահ վօրքերով և ամուր բերդերով:

Երկրի կազմութիւնը մեծ ներգործութիւն ունի և քաղաքների ծագման վերայ. քաղաքներ հիմնարկելու համար հարկաւոր է լաւ հող, բարերեւ շոջակայք, առողջարար օդ, քաղցրահամ աղբիւրներ, հանքային ջոեր, բուսական, կենդանական և հանքային հարստութիւններ, նաւագնաց գետեր, ծովեզը, յարմար դիրք վածառականութեան կենտրոն լինելու համար, բնական ամրութիւն:

առ ու ուստի անցած մեջուայ վաստակով այս
շաբախ մասնի ամսութիւնը մայնացնաւուան զնաւուան
լուծել է և առարկ ո քանդրած զբիլի մատուա
մասնաւուան անմայն առաջ պատահած առաջար
այս ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ու առաջ այս
առաջանարկար վայելու մասնի անցած մայնացնաւուան

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. Հայաստանը կազ-

մելով երեք հին աշխարհների միացման հանգոյցը՝
ներկայացնում է միենոյն ժամանակ գլխաւոր կէտր
այն մեծ համաշխարհական ճանապարհի, որի վրայով
շարժուել են բոլոր հին աշխարհի բնակիչները դէպի
նոր աշխարհը: Կովկասեան լեռները մէկ կողմից, Սև
ծովը միւս կողմից կազմելով պատնէշ այդ մեծ ճա-
նապարհի վրայ, ստիպել են բոլոր հրոսակ ազգերին
մի փոքր ժամանակ կանգ առնել այդ երկրում, ինչ-
պէս մէկ յարմար իջևանում: Այսպիսի մեծ շարժո-
ղութիւն ազգերի Հայաստանի վրայով պատահած է
պատմական ըլջանից առաջ և յետոյ, և իւրաքան-
չեւրը նոցանից թողնելով իւր հետքի նշանները,
մացորդները այդ երկրում այսօր ներկայացնում է
սարսափելի խառնուրդ բազմատեսակ ազգութիւն-
ների և ցեղերի միանդամայն միմեանցից տարբեր
կրօնով, լեզուով, սովորութիւններով աւանդու-

թիւններով և շատ ուրիշ ազգային յատկութիւն-
ներով: Եթէ աւելացնենք զորա վերայ ևս այն հան-
գամանքը, որ հայոց թագաւորները միշտ և ամե-
նայն կերպ նսկաստած են օտար ազգերին Հայաստան
գաղթելու, աալով նոցա ամենայն տեսակ յարմարու-
թիւն և որ գլխաւորն է Երկրի Քիշիչական կողման-Եփենը
ամենազբաղ էլերով նոդապատմ է առգերէ բաժանման և յե-
շէրէ ծագման, այն ժամանակ մենք կսանանք մի պատ-
կեր, որ կներկայացնի Հայաստանը իւր բազմացեղ
բազմալեզու, միմեանց աննման և մինչեւ անդամ ծայ-
րայել հակասութեանց տէր ազգերով:

Հին ժամանակ Հայաստանի մէջ յիշվում են
աւելի քան հարիւր մէծ և փոքր ազգութիւններ
թէ տեղականներ, թէ կամայ եկած և թէ գերի
բերուած. ինչպէս են՝ Հայեր, Հրէաներ, Մարք, Ասո-
րեատանցիք, Զինացիք, Քանանացիք, Հնդկացիք, Տայք,
Սակք, Ալաններ, Բուլզարներ, Կասպիք, Հոնք, Պար-
սիկներ, Ցոյն, Ասորիք, Վրացիք, Գարգարացիք,
Գարդմանացիք, Ծովիկացիք, Ուտիացիք, Եգերացիք,
Քաղդէացիք, Փոխիկացիք, Փիւնիկեցիք և այլն և
այլն: Բոլոր վերոյիշեալ ազգերը եկան Հայաստան
այն ժամանակ, երբ նորա քաղաքական իշխանու-
թիւնը մէծ էր և հայր ամենայն կողմանէ բարձր էր
միւս բոլոր հաղատակ ազգերից, ուստի և շատերը
նոցանից եթէ ոչ բոլորովին գոնեա մասամբ ձու-
լուեցան Հայոց շետ, մտցնելով միանդամայն և իւ-
րեանց կրօնական և ազգային առանձնայատկութիւն-
ները, հայրենիքում ծաղկած քաղաքական կարգերը,

գիտութիւնները, արհեստները, որով Հայերը թուով
աւելի շատացան, գիտութիւնների և արուեստների
մէջ առաջացան, և բնաւորութեան ու ընդունա-
կութեան մէջ էլ աւելի բազմակողմանի դառան:
Հայաստան գաղթող ազգերի դէպի լաւ ազգեցու-
թիւնը էլ աւելի մեծ էր այն պատճառով, որ նո-
ցանից շատերը թագաւորական և իշխանական ցե-
ղից էին շրջապատուած բազմաթիւ աղնուականնե-
րով ուսումնականներով, արհեստաւորներով և այլն:

Որքան և լաւ լինէր եկամուտ ազգերի ազգե-
ցութիւնը Հայոց վերայ, այնու ամենայնիւ նոցանից
շատերը Հայաստանում ապրելով իբրև առանձին ազ-
գութիւններ՝ թուլացրին տէրութեան և ազգու-
թեան միութեան կապը:

Աւելի վատ ներգործութիւն ունեցան Հայոց
վրայ այն հարիւրաւոր ազգերը, որոնք մտան Հայաս-
տան, նորա քաղաքական անկումից յետոյ. որոնք են՝
Տաճիկ, Պարսիկ, Յոյն, Արաբ, Թաթար, Թուրքմէն,
Զէրքէղ, Վրացի և այլն: Նոքա ոչ թէ Հայոց հետ
միացան, այլ Հայերից շատերին կրօնից և ազգու-
թիւնից հանելով իւրեանց հետ միացրին, ծանր
Ծի տակ տանջելով Հայաստանից գաղթել ստիպե-
ցին, սրով և կրակով Հայոց թիւը նուազեցրին,
քաղաքները աւերեցին, գիտութիւնները և ար-
հեստները սպառ ջնջեցին, կեանքի և կայքի անապա-
հովութիւնը ամեն ուրեք տարածեցին, երկիրն աւե-
րելով կատարեալ աղքատութեան և ամայութեան
հասցրին, իւրեանց բարբարոսական բռնութեամբ

Հայոց հոգւոյ մէջ ընկճուած ստրկական ուղղու-
թիւնը գրոշմեցին և այլն:
Բայց այս բոլորից յետոյ Հայը գոյութիւն ունի
իւր հարազատ երկրում և թէ թուով թէ բարոյա-
պէս բարձր է շրջապատող բոլոր աղգութիւններից:
Բնակչութ ՏԵՂԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ: Հայաստանի բնա-
կիչները միատեսակ չեն տարածված ամբողջ երկ-
րում: Երկրի գանազան մասերում զանազան ազգու-
թիւններ թուով աւելի շատ և տիրապետող են
հանդիսանում:

Հայերը առաւելապէս խմբուած են Մեծ-Հայաս-
տանի կենտրօնական մասում: Եթէ վերցնենք Մեծ
Հայաստանի այն մասը, ուր գտանվում են Այրարատ
(Երևաննեան նահանգ), Սիւնիք (Գանձակի նահանգ),
Վասպուրականի արևմտեան մասը (Վանայ վիլայէթ),
Զորբորդ - Հայոց արևելեան կողմը (Խարբերդի սան-
ջակ), Բարձր - Հայոց հարաւ արևելեան կողմը (Արզ-
րումայ վիլայէթ), կտեսնենք, որ Հայոց թիւը հա-
ւասար է բոլոր ազգութիւնների թուին միասին վեր
առած, թէւ կան այնպիսի տեղեր էլ ուր Հայերը
կէսից աւելի են կազմում: Այսպէս օրինակ Երկա-
նեան նահանգում բոլոր բնակչաց թիւն է 550,600
և մօտ երեք հինգերորդական մասը (349,000) Հայեր
են. Մուշի սանջակում բոլոր բնակչաց թիւն է
229,000, որի մօտ երկու երրորդ մասը (146,000)
Հայեր են: Խարբերդի զաղացում (գաւառակ) բոլոր
բնակչաց թիւն է 120,000, որի ուղեղ կէսը Հայեր
են, 40,000 Քուրդ և 20,000 Տաճիկ. Վանայ զա-

դայում բոլոր բնակչաց թիւն է 106,000, որի չորս
հինգերորդ մասը (84,000) հայեր են: Իսկ ամբողջ
Վանայ վելայէթում բոլոր բնակչաց թիւն է 474,730,
որի կէսից աւել (249,361) հայեր են: Իսկ տիրա-
պետող տարրը Հայոց հետ համեմատելով՝ խիստ
նուազ է: այսպէս Երևանեան նահանգում 343,000
հայի վերայ գալիս է 4,339 Ռուս. Մուշի սանջա-
կում 146,000 հայի վրայ գալիս է 19,640 Տաճիկ,
Վանայ զազայում 84,000 հայի վրայ գալիս է 670
Տաճիկ, ամբողջ Վանայ վելայէթում 249,361 հայի
վրայ գալիս է 13,964 Տաճիկ, Խարբերդի զազայում
60,000 հայի վրայ գալիս է 20,000 Տաճիկ: Այսպէս
ուրեմն Հայաստանի միջն մասում, Հայոց բուն հայ-
րենիքում, ուր առաջին անգամ կազմուեցաւ Հայոց
ազգը, այսօր ևս տիրապետող տարրը Հայն է: Հայա-
տանի արևելեան կողմը տարածուած են Թաթար-
ները, որոնց թիւը մօտ 800,000 է: Հայաստանի հա-
րաւային կողմը Զապ գետի հովիտում Զագրոսի
լեռների վրայ Ասորեստանի սահմաններին կից բնակ-
փում են առաւելապէս Ասորիք, ուր դոցա թիւը
Հարիւր քսան հազարից անցնում է. Զապ գետից
դէպի արևելուաք մինչև Տիգրիսի հովիտը լցուած են
Քորերով, ուր դոցա թիւը 250,000 է հասնում:
Տիգրիսից Հարաւ Հայոց Միջագետքում բնակուող
ազգերը կարելի է երկու խումբ բաժանել, առելի դէպի
Հիւսիս Տիգրիսի հովիտում բնակվում են Հայ, Ա-
սորի, Քաղղէացի, Քուրդ, իսկ Հարաւում Ասորի,
Եղիդայ, Քաղղէացի, Արար Հայաստանի արևելուան

կողմը Փոքր Հայաստանում և Կիլիկիայում լեռնային
տեղերը աւելի բռնած են Տաճիկներով, բայց կան և
բազմաթիւ Թուրքմէններ, Քրդեր, Հայեր: Կիլիկիայի
լեռների բարձրութեանց վրայ առաւելապէս տիրում
են Հայերը, իսկ դաշտային մասերին տիրում են Թուրք-
մէնները, Աւշարները, Արաբները: Մեծ - Հայաստանի
Հիւսիս արևելուան կողմը Ճորոխի հովիտը բռնում են
Լաղերը, որոնց թիւը մօտ 100,000 է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ԱԶԳԵՐԸ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ԾԱԳՈՒՄԸ: Հայոց ազգը, ինչ-
պէս և շատ ուրիշ ազգեր, կազմուած են երկու տա-
րերց միաւորութիւնից, տեղական բնիկներից և ե-
կաւոր նուածողներից: Տեղականը կազմում էր Ջրհե-
ղեղից յետոյ այդ երկրում բազմացած մարդկու-
թիւնը, իսկ եկաւորն էր Հայկ դիւցազն, որ իւր
խմբով գալով տիրեց այդ ժողովրդեան և նորա բնա-
կուած երկրին և իբրև աւելի զօրեղ տարր իւր ա-
նունը տուեց նոցա, որտեղից և առաջացաւ Հայք
և Հայաստան բառերը: Որովհետեւ Հայկը Յաբէթի
թոռան թոռն էր, այդ պատճառով և Հայոց ազգը
կոչվում է Յաբէթեան սերունդ, ինչպէս և այն բո-
լոր ազգերը, որոնք սերուած են Յաբէթից:

ՀԱՅՈՅ ԹԻՒԸ, ՆՈՐԱ ԱՃՈՒՄԸ ԵՒ ՆՈՒԱԶՈՒՄԸ:
Հայոց թիւը ազգութեան ծագման ժամանակ շատ
փոքր էր, բայց դարերի ընթացքում թէ բնական

օրէնքով սերնդապէս և թէ առաւելապէս օտար ազգերին իւրեանց հետ միացնելով Հայերը խիստ բազմացան։ Հայաստանի քաղաքների շատութիւնը, նոցա բազմամարդութիւնը և շատ ուրիշ իրողութիւններ պարզ ցոյց են տալիս, որ Հայոց թիւը հասած պիտի լինի 25ից մինչև 32 միլիոնի։ Պատմութեան մէջ յիշվում են շատ այնպիսի քաղաքներ, որոնց իւրաքանչիւրից գերի են տարուած Հայեր մինչև 200,000։ Բայց Հայոց թիւը ոյդ բարձր կէտի վրայ չմնաց։ Հայաստանի քաղաքական անկումով Հայոց թիւն էլ խիստ նուազեցաւ։ Նուազման գլխաւոր պատճառներն էին՝ 1, Հայոց ազատակամ գաղթելը օտար երկիրներ, 2, Հայոց գերի վարուելը օտար երկիրներ, 3, Օտար ազգերի մուտքը Հայաստան և սրածութիւն, ու տանջանքը Հայերի, 4, Յաճախ կրկնուող մահաբեր սովերը և ախտերը Հայաստանում, 5, բարոյական Ճնշումն ու բռնի կրօնափոխութիւնը Հայերի, 6, Հայերի թափառելը Հայաստանի մի մասից միւսը. 7, Ազատակամ խառնուելը Հայոց օտարների հետ և վերջապէս 8, Երկրի կատարեալ աղքատ և մասնկ վեճակը շնորհւ բոլոր վերոյիշեալ պայմանների։

ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ։ Հայերը այժմ խմբուած լինելով գլխաւորապէս (2,232,000) Մէջ Հայաստանի միջին մասում՝ բուն հայրենիքում, տարածուած են և նորանից դուրս ամէն ուրեք։ Դէպի արևմուտք նոքա տարածուած են Փոքր - Հայաստանում (մօտ 680,000), Կիլիկիայում (200,000), Փոք-

Ասկայում, Եւրոպական Տաճկաստանում (400,000)¹⁾ Յունաստանում (25,000), Բումիլիայում (10,000), Աւտրիայում (20,000), Խոալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում և մինչև անգամ Ամերիկայում (Նիւեօրքում և այլ տեղեր). գէպի հիւսիս Հայաստանից դուրս Կովկասում և Մուսաստանում (300,000), Սիրիկիայում (800), գէպի արևելք Պարսկաստանում (50,000), Հնդկաստանում (25,000), Բիրմայում (մի քանի հարիւր տուն), Զինաստանում, Սինգապոր, Սումայարա, Եավա, Բորնեօ Ցէլէբէս և այլ կղզիներում, գէպի հարաւ Հայոց Միջագետքում (70,000), Աֆրիկայում (25,000) և մինչև իսկ Աւստրալիայում։

Ամենայն տեղ, ուր և լինին Հայերը, յայնին իբրև ճարապիկ և բանիմաց մարդիք, ամէնքը համաձայն խոստվանում են, որ Հայերը հաստրակ խելքի տէր մարդիք չեն։ Նոքա Տաճկի հաստատամութիւնը ունին առանց նոցա թէթեամութեան, միով բանիւ նոքա արևելքի Անգլօսաքսերը են²⁾։ Հայերը միևնոն ժամանակ Զույցերացոց պէս աշխատանէր, հանգալու, կանոնաւոր և նոցա պէս էլ հաշուող և անյագ են³⁾։ Բայց աւելի արդար կլինէր Հայոց համեմատել Հոլլանդացիների հետ, Հայոց մէջ նկատ-

1) Տես Լիլիկի Ռէկլիւ Հատ. Ա. եր. 180։ 2) Պը-
լայս, 3) Լամարտին

վումէ նոյն յարատե, բայց հանգիստ գործունեութիւնը, նոյն ձգտումը հարստութիւն ձեռք բերելու, նոյն արհամարհանքը դէպի արտաքին փայլը¹⁾: Նատ սակաւէ է պատահում, որ Հայերը ճիշտ չփատարեն իւրեանց պարտաւորութիւնները, Հայերը ճիշտ են և խոստմունքի մէջ, խիստ են իւրեանց վարք ու բարքի մէջ²⁾). Հայոց շքեղ ապրուսար, հարստութիւնները կարող էին դայթակղեցնել իւրեանց բռնականերին և նոքա իրաւ գիզում են գանձեր և ապրում են ժլատ: Մի անգայշ իսօսք, մի անկեղծ և ճշմարիտ կարծիք, կարող էր յաձախ դէպի կորուստ տանել նոցա, ուստի և նոքա լող և երեսպաշտ դարձան: Երախտագիտութիւնը դէպի բարերարները կարող էր նոցա մնասել, ուստի և ապերախտ դարձան³⁾. ուրեմն Հայերի ախտերը այն բռնականութեան հետեանք են, որի տակ հեծում են նոքա⁴⁾:

Հայերը ցրուած լինելով ամենայն: տեղ զարմանալի կրօնական կապով միացած են միմեանց հետ, մի միութիւն են կազմում և մի ներքին ոյժ զարմանալի կերպով կապում է նոցա ամէնքին էջմիածնայ վանքի հետ, ուր նստում է ամենայն Հայոց կաթողիկոսը⁵⁾). Հայերը ճշտութեամբ պահում են և իւրեանց հաւատի պատուերները⁶⁾:

Հայերը ունին մեծ լնդունակութիւն առեւ-

¹⁾ Գեւօթեէ. ²⁾ Օլլվեէ: ³⁾ Գամբա, ⁴⁾ Բայըն, ⁵⁾ Աւագուստ Հաքս - Հառողէն, ⁶⁾ Գամբա,

տրական գործերում¹⁾). Օսմանեան կայսերութեան մէջ Հայերն են ամենամեծ առուտուր ունեցողները, միւնոյն ժամանակ այդ գործը հմտութեամբ առաջ տանողներ. Տաճկաստանում նոքա իւրեանց առեւտրական գործունեութեամբ և ընդունակութիւններով աւելի բարձր են հանգիստացել քան շնչակայ ազգութիւնները, բոլոր գիւտաւոր վաճառականները, ինչպէս և սեղանաւորները Հայերն են: Բայց կարող էք նոցա գանել ամէն մի ճեռնարկութեան և գործի պարագլուխ, որ մասնագիտական պատրաստութիւն է պահանջում²⁾): Հայերը և Կովկասի ամենից եռանդուս և ամէնից աւելի աչքի երեացող ժողովուրդն են և վաճառականութեան մեծ մասը նոցա ճեռին է³⁾): Արեւելեան վաճառականութեան տէր գառնալուց յետոյ Հայերը մեծ մասն ունին Եւրոպական քաղաքներում⁴⁾). բայց Հայաստանի հաստատաբնակ Հայը ունի միայն մէկ ցանկութիւն — հանգստութեամբ հողի տէր գառնալ հանգստութեամբ նորան մշակել կերակրվել նորա արդիւնքով և դորա հետ միասին անսարգել կերպով պաշտել իւր ընտրած կրօնը. Հայլենիքից դուրս նա ճեռք է զարկում վաճառականութեան, որպէս իւր ապրուստի միակ մատչելի միջոց⁵⁾): Քաղաքական կէտից վերցրած բոլոր նշաններից երեսում է, որ Հայոց ազգը աստուածային գիտողութեամբ լնտրուած է իրբե միջնորդ քրիս-

¹⁾ Օլեվեէ: ²⁾ Դվագտ: ³⁾ Զէմս - Բըայս ⁴⁾ Լամաբան. ⁵⁾ Բըունիալտի տէս Հեծելլա № 39 և 40.

տոնէութիւն և քաղաքակրթութիւն տնօրածելու այրեցրեմ Տարակրյս չկայ, ի՞մ մեծ պատմական նշան նախութիւն ունիածին համբամնութը, որ այս Քրիստոնեայ պատրիքը ցուցածէ է մի մեծ տարածութեան վերսից, միւնոյն ժամանակ բոլոր անդամները կազմուածէն գայանարական, քաղաքական և կրօնական կաֆուլ այս միւնդպային միութիւն են կազմուած: 1) Ասիական Տաճկանատանի առաջանդներում Հայերը քաղաքակրթութեան միակ ներկայացնուած է կովկասի Հայը:

Իւրեանց արտոքին գեղեցկութեամբ ևս Հայերը աշխարհի ամենագեղեցիկ ազգերից մէկն են: 2) Երևանի գեղեցկութիւն ասած բանը այն արտօնաքին աները և գծագրութիւննէ, որ ներկայացնուած է կովկասի Հայը: 3)

Տաճիկներ: Տաճիկները աիրեցին Հայաստանին սորանից մօտ 5 դար առաջ, երբ իւրեանց բարբարոսական քաջութեամբ աչ ու սարսափ էին գցել ամբողջ արևմտութերի վրայ: Տիրելով Մեծ Հայաստանի հարաւահեմատան մասին, Փոքր-Հայքին, Կիլիկիային, Հայոց Միջագետքին և ամենայն տեղ վարչութեան ղեկը իւրեանց ձեռքը ձգելով, ոչ մի նեղութիւն չմնաց, որ չտային Հայոց: Բնութեամբ շատ ծով գանդաղ, անգործունեայ լինելով, սովորել են անհոգնայել և միշտ բարբարոսաբար պահանջել հպատական աշխարհ:

1) Աւգուստ Հայոց Հառուղէն: 2) Բերնաբի: 3) Աւգուստ Հայուածական Հասուղէն: 4) Զուէլ և Լակիդէ Փիլիքական աշխարհ:

տոմի ազգերից: 5) Չունին ազգային պատմութիւն, գրականութիւնն լեզուն և շատ տնօշնկէ էսու աղքատ, ամբոխը ամենաստորին զարգացման վերաբերեալ բարեկարգ ուսումնարաններից, միանգամայն գումրի կրթութիւնը կայանուած է իւրեանց զուրանը անգիր անելում և դէմի տար ազգերը ատելութիւն զարգացմանում: Չնայնը որ նիրապեսող ազգենց շնորհիւ իւրեանց ծուլութեան և անհոգութեան շատ խեղճ և ողորմելի վիճակի մէջ են Չունին տնտեսական և արդիւնագործական հոգի և Ռողիկ պարապում են երկրագործութեամբ, խաշնարածութեամբ և արհեստներով բայց ամենաշավաւոր կերպով: Ընտանեկան կեանքով այն են, ինչ որ մի քանի հարիւր տարի սորանից առաջ: Կինը ընտանիքի մէջ միայն հաճայքի առարկայ է և տան գեղեցկութիւն: Իրաւանց հաւասարութիւնը, աշխատանքի հաւասար բաժանութեան նոցա մաքին անմատչելի է: Տաճիկ կանայք միանգամայն փակուած կեանք են վարութիւնը բարասիրութեան կողմանէ տաճիկները, ինչպէս և բոլոր արևելեան ազգերը: շատ հիւրասէր են: Կրօնով մահմեդական են Սիւնի աղանդի: Թուով մօտ 1,200,000 են:

Պարսիկներ. Դոքա Հայոց ամենահին դրացի ազգն էին, որոնց հետ Հայերը շատ անգամ բարեկամական և թշնամական յարաբերութեանց մէջ են մտած: Պարսիկները տիրում են Հայաստանի հարաւահեմատան մասին: Մոյլ անհոգ և գանդաղ ժողով վարդ են, ըստ մեծի մասին աղքատ և զարգացման

շատ ցածր աստիճանի վրայ չունին ոչ մի բարեկարգ ուսումնարան։ Եղածները բոլորն էլ Հայոց են պատկանում։ Նոցա միակ ուսուցիչները մօլլաներն են, որ մէջեցների կից խուցելում Պարսկական լեզու և մահմեդական կրօն են սովորեցնում։ Ընտանեկան կեանքը շատ ստորին վիճակի մէջ է, մարդը տան բռնական է և հրամայողը, կինը ստրուկը և տան գեղեցկութիւնը ու զարդը։ Յարաբերութիւնը հպատակ ազգերի հետ բռնի բարբարոսական և մոլեռանդ։ Կրօնով Մահմեդական են նիայ աղանդի, Պարսկի թիւն է մօտ 300,000։

ՈՒԽԱՆՆԵՐԻ. Ուուսները տիրեցին Հայաստանի հիւսիսյին մասին տասնեխններորդ դարի սկզբում։ Խոտաբնակ Ուուսաց թիւը Հայաստանում շատ քիչ է։ Նոցա մէծ մասը պաշտօնատէր անձննք են, Ուուսները ունին նոր մշակուած լեզու, պատմութիւն, գրաւականութիւն և բազմաթիւ ուսումնարաններ։ Հետեւ լովերուպալկան հասարակական կեանքին իրանք էլ բաւական զարգացած կեանքի տէր են դառել։ Ընտանիքի մէջ իրաւանց հաւասարութիւնը, աշխատանքի բաժանումն տարածուած է։ Ստորագրեալ ազգերի հետ յարաբերութիւնը լաւ է։ Կրօնով Ուուսները յունադաւան Քրիստոնեայ են, ունին և բազմաթիւ աղանդներ, թուով մօտ 35,000 են։

ՓՈՒՐԴՆԵՐԻ. Բնակվում են Հայաստանի հարաւային մասնում։ Գրուած են և ամբողջ Հայաստանում։ Դոքա առաջացած են Հայ Կորդուացիների և Մարաց խառնուելուց։ Քուրդերը բաժանուած են բազմաթիւներ։

մաթիւ ցեղերի, իւրաքանչեւրը ունի իւր առանձին ցեղապետը։ Յեղապետների պարտքն է պաշտպանել իւր ստորագրեալներին միւս ցեղերի դէմ։ Ու մի ազգի հետ այնքան թշնամի չեն որբան հակառակ ցեղերի հետ։ այդ պատճառով և շատ յաճախ ամենասարավելի և արիւնահեղ պատերազմներ է պատահում նոցա մէջ։ Ուղեղ է գտանվում են Տաճկաց, Պարսից և Ուուսաց կառավարութեան ներքոյ, բայց հպատակութեան ոչ մի նշան չեն ցոյց տալիս։ Համարեա անկախ ապրում են շարունակ թափառելով մէկ երկրից միւսը։ Քիչ մասը միայն քաղաքարնակ է և նստակեց։ մէծ մասը թափառական վրանութեաններ են։ Նստակեացները պարապում են արհեստներով և վաճառականութեամբ։ թափառականները խաշնարած են։ բայց ամենասիրելի և ընդհանուր պարապմունքը բոլոր Քրդերի աւազակութիւնն և յափշտակութիւնն է։ Բնութեամբ ծոյլ են, աշխատութեան անընտել աւագուկութեան ու յափշտակութեան անսանձնելի կրօնովի։ Հայաստանի խորը ձորերը, նեղ կիրճերը բռնելով անասելի կերպով հարստահարում են երկրի բոլոր բնակիչներին։ Քրդերի մէջ ամենից արժանաւոր է նա, որ շատ մարդէ կոտորել, գիւղեր ու ագարակներ աւերել։ Քուրդերի ընտանեկան կեանքը ամենասոր վիճակի մէջ է, ինչպէս և ամենայն վայրենի ազգերի։ Նոցա աները գետնափոր հորերի են նման, ուր ամբողջ ձմեռ բնակվում են։ Նոցա գիւղերը չեն կարելի նկատել մինչեւ անգամ ամենամօտ տեղեց, եթէ հրաբուխի պէս

դետնից հարիւրաւոր տեղերից աթարի մութ և
թանձր ծուխը դէպի վեր բարձրանալով չմթնացնէր
երկինքը: Գարնան սկսվելուն պէս ամբողջ գիւղը մի
ահարկու բանակի է վերափոխվում: առաջելից գը-
նում են ձիւրոր քուրդերը լաւ զբահաւորուած,
նոցա հետեւում է խաշնիքը և տանու կենդանիները
բեռնաւորուած տան կարասիքներով, դոցա շրջա-
պատում են ծառաները և կանայք իւրեանց մէջքի
վրայ շալակած փոքրիկ մանուկներին, որոնց աղմուկի
և աղաղակի ձայնը թնդացնում է օդը. այդ բոլորին
հետեւում է մէկ ուրիշ տւելի մեծ խումբ զինուո-
րուած քրդերի: Նախնի բնակարանները վայրենի
գաղանների բուն են դառնում, իսկ յաճախ կրկնուող
անձրւները միանդամայն քանդում և անհետացնում
են նոցա: Քուրդերը սարերում արածացնելով իւ-
րեանց հօտը միւնոյն ժամանակ յափշտակող գիշա-
տիչների նման սպասում են իւրեանց որսին՝ անցա-
ւոր ճանապարհորդներին կողոպտելու. աշնան վեր-
ջերին դարձեալ ցած են իջնում սարերից: Ոչ ցա-
նել են ոչ հնձեն. ահազին խումբեր կազմելով գը-
նում են ասպատակելու շրջակայ Հայ գիւղերը: Հայ
գիւղացու ամբողջ տարուայ աշխատանքը մէկ օրուայ
մէջ ջուր են կտրացնում:

Քուրդերը չունեն ոչ սպասմութիւն, ոչ գրա-
կանութիւն և ոչ սեփական լեզու, խօսում են բաղ-
մաթիւ միմեանց անհասկանալի բարբառով: Կրօնով
մահմետական են սիւննի և շիայ աղանդի. կրօնական
գրքերը գրուած են արաբերէն: Քուրդերը յարգում

են և Հայոց եկեղեցին. ապրին մի քանի անդամ
ուխտ են գալիս, մատաղ են բերում, հացին Հայ
քահանայ են կանչում, հիւանդ ունենալիս Հայ քա-
հանայ են կանչում աղօթելու կամ հաղորդելու և
այլն. թուով մօտ 900,000 են:

ԶԵՐՔԵԶՆԵՐ. Զերքեզները բազմաթիւ ցեղերի
են բաժանվում. ամենքն էլ միջին հասակի, ամուր
կազմուածքի և գեղեցիկ գէմքի տէր մարդիք են: Պա-
տերազմական և վըէժխնդրութեան հոգին, աւա-
զակութեան և յափշտակութեան անսանձելի ցան-
կութիւնը նոցա գլխաւոր յատկութիւնն է կազմում:
Անպատութիւնը անմռանալի է. իւրաքանչիւր կաթ-
արեան վըէժխնդրութիւնը, որ կանը է կոչվում:
պէտք է որդէցորդի գնայ ժառանգաբար մինչեւ կրկ-
նապատիկ վըէժ առնութիւն: Հիւրասիրութիւնը դոցա
մէջ խիստ զարգացած է. հիւրի համար միշտ լի-
նում է առանձնապէս զարգարած հիւրանոց: Նթէ
նորա մօտ գայ նոյն իսկ իւր անհաշտ թշնամին,
նա դարձեալ առաջն է վագում ընդունում քաղց-
րութեամբ, մեծ սպատիւներ տալիս և մինչեւ հիւրը
իւր տանն է Զերքեզը իւր անձն էլ չի ինայի նորա
համար, իսկ տանից դուրս գալուց յետոյ՝ գարձեալ
նոյն անհաշտ թշնամիքն են: Զերքեզները շատ յար-
գում են մեծերին, նոցա ներկայութեամբ չեն նըս-
տում, չեն խօսում և այլն: Տան մէջ Հայրը ամեն
բանի կատարեալ տէրն է. նա կարող է մինչեւ ան-
գամ իւր որդոց վաճառել: Կինը կատարեալ ստրուկ
է, կամքի և զուարձութեան առարկայ, ամբողջ օր

վարձկան մշակի պէս բանում է. Զերքեզները կրօնով Մահմեդական են սիւննի աղանդի, բայց և այնպէս մինչև այժմ մտքում պահում են Քրիստոսի վրայ հասկացողութիւն, յարգում են Աստուածածնին, առ նում են վերափոխումը և այն: Թուով մի քանի հարիւր հազար են:

ԹԻԱԹՈՒՐՆԵՐ: Հին Թաթարների մասցորդներ են, կրակոտ և վարվուն մարդիք են, սիրելի պարապանքը աւագակութիւնն է. խումբեր կտղմելով մութանտառներում, նեղ կիրճերում միշտ ասպասակում են շրջակայքը. կրօնով մահմեդական են, չափից դուրս կրօնամոլ, բռնում են Հայաստանի հիւսիս արևելքան մեծ մասը. թուով մօտ 800,000:

ԱՐԱԲՆԵՐ: Սոքա առաւելապէս տարածուած են. Մեծ - Հայաստանի հարաւային մասում, Կիլիկիայում և Հայոց - Միջագետքում. մի քանի տեղ սոցա լեզուն տիրապետող է, այնպէս որ Հայերն էլ Արաբախոս են. կրօնով Մահմեդական են սիւննի աղանդի. կրօնական լեզուն արաբականն է. սովորական լեզուն նոյնպէս արաբականն է:

ԱՍՈՐԻՑ: Մեծ բազմութեամբ տարածուած են Հայաստանի հարաւային մասում, առաւելապէս Զապգետի Հովիտում Զագրոսի լեռների վերայ: Վեռնական ասորիք յայտնի են իւրեանց անսլեհեր քաջութեամբ: Կրօնով քրիստոնեայ են, կէս Յակովը և ուրոնց հոգեւոր գլուխը նստում է Զուլամերկի մօտ Քոչհանէսում. և Նեսորականներ, որոնց զլսաւորը նստում է Բաղդադում: Սոցա մէկ մասն էլ կաթո-

լիկ են դարձած, կրօնական լեզուն ասորերէն է. սովորական լեզուն արաբերէն և ասորականի մէկ բարբառը, որ կոչվում է արևմտեան արամեան:

ՔԱՂԴԻՍԻՑԻՑԻՑ: Տարածուած են առաւելապէս Հայոց միջագետքում և Մեծ - Հայաստանի հարաւային կողմերը: Կրօնով նեսորական են և մասամբ պապական կաթոլիկ. կրօնական լեզուն է Քաղղիերէն կամ արևելքան արամեան. սովորական լեզուն է քաղցիերէնի բարբառը, որ յայտնի է նեսորերէն անունով քրիստոնի բարբառները, ֆէլլահի բարբառը և արաբերէն լեզուն:

ԵԶԻԴԻՑ: Ցրուած են Հայաստանի հարաւային կողմերը. թուով մօտ 28,000. սոցա ծագումը անյայտ է, բայց ենթագրում են, որ սոքա առաջած են Օսմանցիների Հարստութեան երկրորդ խալիֆայութիւնից. բնութեամբ քաջ են և անձնապատճեն. Հակումն ունին գեպի աւագակութիւնը. կողմութեամբ են Հայ գիւղերը, տանում են Հունձի բոլոր արգիւնքը. կրօնով սատանայապաշտ են. նորանց վարդապետութիւնը սարսափ է ներշնչում. նորանք Աստծուն չեն պաշտում և աղօթում այն պատճառով, որ նորա ողորմածութիւնը անսահման է, բայց յարգում են սատանային, որովհետեւ նա կարող է ամենայն տեսակ վնասներ հասցնել մարդկանց. նորանք սատանի անունը յիշում են սարսափելով և նորան հածնյանալու համար իրաւացի են համարում անել այն ամէնը, ինչ որ արգելուած է մարդկային և աստուածային օրէնքով: Կրօնական լե-

գուն անյայտէ, սովորական լեզուն է Քրդերէն և այլ
և այլ բարբառներ:

ԲՈՆԱՆԵՐ: Սոցա բուն հայրենիքն է Հնդկաս-
տամնը. տարածուած են Հայաստանի զանազան կող-
մերում. թափառական կեանք են վարում. ձմեռ
բնակվում են գետնափոր խուղերում, գարնան սկս-
վելուն պէս շարժվում են դէպի այն կողմը, ուր
աչքը կատրի ճանապարհին գողութեամբ և յափշ-
տակութեամբ պարապելով: Նոքա գիւղից գիւղ
շրջելով տունետուն ման են գալիս ողորմութիւն խնդ-
րում, գուշակութիւններ անում և բաղդ բաց ա-
նում. յարմար ժամանակի աչքի տակ պատահած բա-
ները կթռցնեն այնպէս, որ ոչ ոք չի նկատի. վերին
աստիճանի խարեւաններ են, ասած է թէ «Բոշան ա-
ռամց խարելու մէկ օր չի կարող ապրել»: Ինչ ազգի
մէջ ապրեն, նոցա կրօնն էլ կընդունեն, նոցա լեզուով
էլ կիսան: Կան բաւականաչափ և ուսաւորչական Բո-
շաններ: Բացի վերոյիշեալներից Հայաստանում բնակ-
վում են այլ և բազմաթիւ Թուրքմէններ, Աւշար-
ներ, Թարաքամաններ, Նասրանիք, Մլթօնիք, Լէդ-
զիք, Փարսեր, Վրացիք, Եւրոպական այլ այլ աղ-
գութիւններ և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉԱՑ ԹԻՒԾ

Տաճկո - Հայաստանում և Պարսկա - Հայաստա-
նում Ճիշդ մարդահամար չլինելու պատճառով շատ
գժուար է որոշել Հայաստանի բնակչաց ուղիղ թիւր.

բայց մի քանի աւելի ստոյգ աղքիւրներին նայելով *)
կարելի է հետևեալ հաշիւը ցոյց տալ:
Բուսա - Մեծ - Հայաստանում բոլոր բնակ-
չաց թիւն է 2,152,000, Հայոց թիւը 812,000
Տաճկո - Մեծ - Հայաստանում բոլոր բնակ-
չաց թիւն է 2,221,000, Հայոց թիւն է 1,350,000
Պարսկա - Մեծ - Հայաստանում բոլոր բնակ-
չաց թիւն է 485,000 Հայոց թիւն է 70,000
Ամբողջ Մեծ - Հայաստանում բոլոր բնակ-
չաց թիւն է 4,858,000 Հայոց թիւն է 2,232,000
Փոքր - Հայաստանում բոլոր բնակչաց
թիւն է 1,723,000 Հայոց թիւն է 680,000
Կիլիկիայում բոլոր բնակչաց թիւն է 500,000 Հայոց թիւն է 200,000
Հայոց Միջագետքում բոլոր բնակչաց
թիւն է 352,000 Հայոց թիւն է 70,000
Հայաստանի բոլոր բնակչաց թիւն է 7,433,000, Հայոց թիւն է 3,182,000

*) Երեցեան «օպытъ» стат. очерка народ. Турец.-
Арменія», Мортманъ «Статистика азіатской Турціи».
Թոխմախեան «Հայաստանի Վասպուրական նահանգը».
Извѣстія геогр. общ. Тиф. т. 6-й. Երեցեան Կովկасս-
մարդահամարը «Փոքրամսագում տպուած 1880 թուա-
կանին. Թէքիմանի Էֆքեար „Հայաստանի բնակիչ-
կանին. Սրբական և Սրուանձտեանի „Հայաս-
տանի մարդահամարը». «Մասիս» լրագրում 1881 թուին
տպած մարդահամարը և Գ. Արծրունի «Հայաստանի
տնտեսական վիճակը». Элизе Реклю т. 1-й, ст. 180.
և այլն և այլն:

Ուրեմն Հայաստանի բնակչաց մէջ թուի շառառութեամբ առաջին տեղը բոնում է Հայոց ազգը. բայց այս թուի մէջ չնեն մանում 130,000 Կաթոլիկ Հայերը, 40,000 Յունադաւան Հայերը, 35,000 Հայ բողոքականները. Ուրեմն Հայաստանում Հայքիստոնեաների թիւը հասնում է 3,487,000ի. բացի սոցանից կան և մօտ 600,000 Հայ մահմեդականներ, որոնք իւրեանց անուանում են Քուրդ կամ Տաճիկ, գիտեն Հայերէն, յարդում են Հայոց սրբութիւնները, ուխտատեղիները, յիշում են, որ իւրեանց նախնիքը Հայ են եղած. նախնեաց, պապերի, նոյն խոկ իւրեանց անունները Հայկական են. Հայ գերեզմանաների մէջ ցոյց են տալիս նախնեաց և պապերի գերեզմանները, բայց միևնոյն ժամանակ իւրեանց Հայ անուանները հայհոյանք են համարում. Հայ մահմեդականները բնակվում են ձորոխի ձախակողմը մինչև Սև ծովը, Ակնի և Արտիկերի մօտելքը, ուր քսանից աւել Հայ մահմեդականի գիւղեր կան, նոյնպէս և շատ ուրիշ տեղեր. սոքա մահմեդականութիւն ընդունած են Տաճիկների ծանր հարկահանութիւնից և այլ ճնշումներից դրդուած: Ուրեմն Հայաստանում բնակուող բոլոր գաւանութեանց Հայերի թիւն է 4,087,000: Բացի սոցանից Հայաստանից գուրս ևս կան բազմաթիւ Հայեր. Եւրոպական Տաճկաստանում 400,000, Հայաստանի սահմանից գուրս Փոքր - Ասիայում 150,000, Հայաստանից գուրս Կովկասում և Ռուսաստանում 300,000, Յունաստանում 30,000, Բումիլիայում 10,000, և

Հաստանում 20,000, Եգիպտոսում 25,000, Հնդկաստանում 25,000 և աշխարհի բոլոր կողմերում մի քանի հազար, ընդունը 5,047,000:

Հայերից յետոյ Հայաստանում թուի շառառութեամբ առաջին տեղը բոնում են Տաճիկները (1,-200,000), յետոյ Քուրդերը (900,000), Թաթարները (800,000), Պարսիկները (300,000), Ասորիք (200,-000) Լազերը (մօտ 100,000) և այլն:

Ընդունելով Հայաստանի տարածութիւնը մօտ 14,500 քառակուսի մղոն, կստանանք իւրաքանչեւր քառակուսի մղոնի վրայ մօտ 510 բնակիչ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉԱՑ ԿՐՈՆԸ

Ինչպէս բազմացել են Հայաստանի բնակիչները, այնպէս էլ բազմատեսակ է նոցա կրօնը և դաւանութիւնները. իսկ աղանդների թիւը մի քանի հարիւրից աւելի է: Կան մի քանի մանր ազգութիւններ և սորանց կրօնը միանգամայն անորոշ ու անյատ է և կամ բաղկացած է մի քանի կրօնների ու դաւանութիւնների խառնութիւց. Քրիստոնէական Կրօնը Հայաստանում իւր հետեւողների շատութեամբ տիրապետողն է. Քրիստոնէական կրօնին պատկանում են՝ Լուսաւրչական դաւանութիւնը, որին պատկանում են Հայերը, Յունական գումանութիւնը, որին պատկանում են Յոյները, Ռուսաները և Վրայիք, Կաթոլիկէ գումանութիւնը, որին պատկանում են Եւրոպարձ Ասորիք, Քաղքէացիք, Հայեր և այլն, Բաղադրչական գումանութիւնը, որին պատ

կանում են Եւրոպական ազգութիւններ և նորադարձ Ասորի, Քաղցէացի, Հայ և այլն. Յակովէէտան, որին հետեւում են Ասորիները և Քաղցէացիք, Նեստորէտան, որին հետեւում են Ասորիք, Քաղցէացիք, ՄՈՎԱՒՍԱԿԱՆ կրօնին պատկանում են Տալմուդ և Կարաիմ աղանդները: Երկուսն էլ դաւանում են Հրէաները: ՄԱԶՄԵԴԱԿԱՆՈՒԹԻՆ պատկանում են Շիա և Սիւննի աղանդները. Շիա աղանդին պատկանում են Պարտիկները, Թաթարները և այլն. Սիւննի աղանդին պատկանում են Տաճ'կ, Արաբ և այլն. ԿՈՒՊԱՇՏԱԿԱՆ կրօնին պատկանում են՝ Էլոհիադաշտութիւնը, արեադաշտութիւնը, ստուտադաշտութիւնը: Կրակ պաշտում են Ֆարսերը, արեա պաշտում են Եպիգաների մէկ մասը. սատանայ պաշտում են Եղիգաների մէծ մասը:

Կրօն.	ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆ.	ԱԶԳՈՒԹԻՒՆ.
Քրիստոնէակ.	Լուսաւորչական.	Հայեր,
	Յունադաւանութժ.	Յոյն, Ռուս, Վրացի
	Կաթոլիկութիւն,	Ֆրանսիացիք, և նորադարձ
Քրիստոնէակ.	Բողոքականութիւն.	Ասորիք,
		Գերմանացիք, նորադարձ
		Ասորիք, և այլն:
Մահմեդական.	Սիւննի	Տաճ'կ, Քուրդ,
	Շիա.	Պարսիկ, Թաթար և այլն:
Մոզմէական.	Թալմուաներ	Հրէայք
	Կարաիմներ.	Հրէայք.
Կռապա.	Կրակապաշտ.	Ֆարսեր, Հնդիկներ,
	Սատանայապաշտ.	Եղիգաներ,
	Արեապաշտ.	Արեորդիք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉԱՑ ՊԱՐԱՊՈՒՆՔԸ

Հայաստանի արտաքին կազմութեան բազմազանութիւնը, երկրի բազմատեսակ հարստութիւնները բնականապէս և ստեղծել են բազմատեսակ պարապմունք ժողովրդեան համար: Հայաստանը կողմուած լուսաւորեալ Եւրոպայից, շրջապատուած միւանգամայն բարբարոս ազգերով և ընկճուած նորածնը լծի տակ, շատ չէր կարող կատարելազդործուել և առաջանալ պարապմունքների այլ և այլ Ճիւղերի մէջ, մանաւանդ այնպիսի, որոնք աւելի են պահանջում մտաւոր և նիւթական միջոցներ, ինչպէս են գործարանական կամ մեքենայական պարապմունքները և այլն:

Այդ պատճառով և վերջին տեսակ պարապմունքները Հայաստանում շատ ստոր վիճակի մէջ են. բայց և այնպէս Հայը իւր յոյսը իւր ոյժի վերայ դրած ինքնօգնութեամբ այնքան առաջացել է միւս պարապմունքների մէջ, որ բոլոր միւս շրջապատող ազգերից շատ անգամ աւելի գերազանց է և միակ ներկայացուցիչն է Հայաստանում, երկրագործութեան այլայլ Ճիւղերի, արհեստների, վաճառականութեան, մտաւոր և գործարանական պարապմունքների մէջ և այլն:

Երկրագործութիւն: Երկրագործութիւնը Հայաստանի սեփական պարապմունքներից մէկն է. սա իւր բազմաթիւ Ճիւղերով կազմում է հայ գիւղացու

միակ և սիրելի պարապմունքը: Չնայելով այն բոլոր
անյաջող պայմաններին, որոնց մէջ գոտանլում է Հայ
գիւղացին, դարձեալ չնորհիւ երկրի բարեբերու-
թեան և գիւղացու առկուն աշխատութեամբ ծաղ-
կած է Հայաստանում բռնա էրիտրոֆուլի-նը, որ առ-
ռատօրէն վարձատրում է աշխատանքը, հայ գիւղա-
ցու դլսաւոր պարապմունքնէ կազմում: Ամէնից աշ-
ելի մշակվում է ցորեն և գարին. չնայելով որ եր-
կիրք արհեստական կերպով որոգուած չէ, գործիք-
ներն էլ շատ նահապետական են, այնու ամենայնիւ
մէկին ստացվում է 30 մինչև 50: Երկրորդ տեղը
բռնում է բրնձի մշակութիւնը, ապա կորեկինը, որ
մէկին ստացվում է մինչև 60: Կտաւատը, փուշը,
բամբակը նոյնպէս յաջողութեամբ մշակվում են:
Միայն Երևաննեան նահանգում մշակվում է ապրե-
կան 250,000 փութ բամբակ և վաճառվում է մօտ
2,000,000 ռուբլու: Ցորենի և գարիի առատ մշա-
կութիւնը լինում է Վանայ և Ալաշկերածի գաշտա-
վայրներում, այնպէս որ այդ երկու տեղերը կարող
են ամբողջ Տաճկաստանին բաւականութիւն տալ-
Երևակայ դաշտը ևս յայտնի է իսր առատ և ըն-
տիր ցորենի մշակութիւնով, իսկ Նարուրայ դաշտը
աւելի յայտնի է բրնձի մշակութեամբ: Վանայ լճի
հիւսիսային կողմը Արծէշի և Արծէկի շրջակայ հան-
ձարեղ հայ գիւղացիք արտեր ցանելու մի առանձին
եղանակ ունին, որ շատ ապահով է երաշտութեան
գէմ և արդիւնաբեր: Արտը վարելուց յետոյ ցանե-
լու ժամանակ, նորանիք արորով կրկին անզամ ակու-

ներով գծում են բոլոր արտը: արորի եաւ տախա-
տակեայ մի խողովակ է հաստատուած, որի միջնոր-
դութեամբ ցորենի հատիկները կարգով թափառմ են
ակոնների մէջ: Բնական է, որ ակոսի երկու կողմի
թմբերը միշտ կարող են խոնաւութիւն պահպանել
և առատ սնունդ տալ ցանքին: Այս տեսակ մշա-
կուած արտերը Տիր են կոչվում, որոնց ցորենի հա-
տիկները պարարտեն և խոշոր վարուցանքի ոյս եա-
զանակը այժմ տարածվում է:

ԱՅԻՆՊԱՀՈՒԹԻՒՆ: Երկրորդ տեղն է բռնում
երկրագործական պարապմանց մէջ և Հայոց սիրելի
պարապմունքներից մէկն է: Այգեպահութեան գլխա-
ւոր հետևանքն է գինեգործութիւնը, որ շատ ծաղ-
կած է Խարբերդի կողմերը և Հայոց Միջագետքում
Աև աւերակի կողմերը:

ԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ: Սա ևս բաւական տա-
րածված է Հայաստանում շնորհիւ բազմաթիւ թթեա-
նիների, բայց աւելի ծաղկած է Աւգոկիայի, Տրա-
պիզոնի և Գանձակոյ կողմերը, որտեղից տարեկան
մօտ 400,000 ռուբլու մէտաքս է վաճառվում: Բայց
Երամապահութեան հայրենիքը Տիգրանակերտն է:

ԱՅՆՊԱՀՈՒԹԻՒՆ: Սօրանով պարապում են
հաւասարապէս թէ Հայերը և թէ Տաճիկները. մի
քանի տեղ այս պարապմունքը մասնագիտութիւն է
դառած, ինչպէս Մշու և Բաղէշի կողմերը, որ
տեղի ընտիր մեղը մինչև Ա. Պօլս են տանում: Բայց
վայրենի դրութեամբ անտառներում ևս շատ կան,
ինչպէս Բարկուշատ գետի ափերքին գտնուած ան-

տառում, ուր մեզը այնքան շատ է լինում, որ շարունակ փեթակից թափուելով գետին՝ հոսում է գետի մէջ:

Կենդանապահութիւնը իւր գոյութեամբ պարտական է Հայաստանի ծաղկագարդ և ցողապատ արօաներին: Բայց Հայը երբէք չքաւականանալով եղածով ազնուացնում է նորա տեսակը և առանձնապէս ցանում է նորա համար առոյտ: Հայերը աւելի ընտանի կենդանիներ են պահում, իսկ խանարածութիւնը Քուրդերի, Թուրքմէնների մասնագիտութիւնն է, որոնք բռնում են Հայաստանի ամենալնտիր արօաները: Միայն Գանձակի նահանգում 1,300,000 կով, եղ, գոմէշ, ոչլար և այծ կայ, իսկ ամբողջ Ռուսա-Մեծ-Հայաստանում դրցա թիւն էր (1870 թուին) 4,572,000:

Արհեստներ: Հին ժամանակ արհեստները Հայաստանում բաւական ծաղկած դրութեան մէջ էին. իսկ այժմ ստորին վիճակի մէջ են գտանվում, շնորհիւերկրի վատ կառավարութեան. բոլոր արհեստները ևս Հայոց ձեռքին են գտանվում, որի մէջ Հայերը բոլոր արեւեան ազգերից ընդունակ են:

ԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ: Ճարտարապետութիւնը իւր զարգացման բարձր աստիճանը ունեցած է Հին ժամանակ, սորան ապացոյց կարող են լինել նախնի փառաւոր պալատների, տաճարների, կամուրջների աւերակները. ինչպէս են Անիի, Կամախի, Վանայ, Արտաշատի, Գառնիի և ուրիշ տեղերի աւերակները: Այժմ ևս Հայաստանում, Պարսկաստանում, Տաճ-

կաստանում, Եգիպտոսում և այն առաջնակարգ ճարտարապետները հայերն են. նոցա ձեռքով են շինվում երեւել պալատները, եկեղեցիք, մէջիգները, մինարէք և այլն:

ՊԴՆՁԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ և ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ առաջացած են Եւգոկիայի կողմերը, ուր ամենանուրբ պղնձէ և արծաթէ այլեւայլ իրեղէններ են շինում. յայտնի են Եւգոկիայի խիստ բարակ և նուրբ պղնձէ անօթները, որոնց մէջ ամենափոքը ջերմութեամբ անօթները, որոնց մէջ անկարներով զարգարուած արծաթէ գոկիայի նուրբ նկարներով զարգարուած արծաթէ աշտանակները և եկեղեցական սուրբ անօթները. նուրբ արծաթագործութեամբ նշանաւոր է և Ախալցիսան:

ԵրկաթԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ իւր բազմատեսակ գործադրութեամբ աւելի յայտնի է Երգըումում և Տրապիցնում. աւելի յայտնի են նուրբ գալանիքաւոր կողմէքները, ոսկէ տառերով պողվատի վրայ նուրբ փորագրութիւնները, ընտիր զէնքերը, որոնք ջրի մէջ մնալուց եւ չեն ժամկոստվում, գեղեցիկ և ամուրատունակները ու հրացանները, որոնք թաց լինելուց յետոյ գարձեալ արձակում են և երկու անգամ լրուց չեն ճայթքում: Բայց զինագործութեան լքցնելուց չեն ճայթքում: Բայց զինագործութեան մէջ յայտնի են և Արաբկիրի, Զէյթունի և Համբինի Հայերը:

ԱՏԱԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, աւելի առաջացած է Երգըումի վիճակում, իսկ Արաբկիրը և նորա շըրշակացյքը յայտնի են իրեւ առաջնակարգ քարտաշ-

ներ և փորագրողներ։ Բամբակագործութիւնը աւելի առաջացած է Նեղոկիայի և նրզնկայի կողմերը, ուր պատրաստում են շատ նուրբ և գեղեցիկ կերպաներ, որոնք յայտնի են Մանխսա անունով։ բայց ամենից աւելի ծաղկած է բամբակագործութիւնը Արարկիրում, ուր օրը 1,600 մեքենաներ դրազուած են մանիսաներ գործելով, գոված են շատ և գիւրիւնի ու Վանայ մանիսաները։ Ատաւագործութիւնը աւելի ծաղկած է Բիթլսի կողմերը, իսկ Վանը և Սեբաստիան յայտնի են բրդեգործութեամբ, որոնց շալերը չեն զանազանվում եւրոպականից։ Մետաքսագործութեամբ աւելի յայտնի են Նւղոկիան ու Տիգրանակերտը, բայց այս վերջենը աւելի յայտնի է ոսկեթել գործուածքներով։

Ա ԱՃՍՈՑԿԱՆՈՒԹԻՒՆ։ Մի այնպիսի բնականապէս հարուստ երկրում, որպիսին է Հայաստանը, թէ ներքին և թէ արտաքին վաճառականութիւնը շատ ծաղկած դրութեան մէջ պէտք է լինէր, բայց ճանապարհների բացակայութեան, եղածների և միանդամայն անապահովութեան, անիշնան և վատթար կառավարութեան պատճռուով թէ ներքին և թէ արտաքին վաճառականութիւնը ընդհանրապէս ընկած դրութեան մէջ է։ Աթէ երկրի մի մասում օրինակ մի բանի կատարեալ առատութիւն է, իսկ նորա կից երկրում կատարեալ պակասութիւն, անհնարին է լինում տեղափոխելու նախ այն պատճռով, որ ճանապարհները շատ վատ են, գժուար անցանելի և փուրդ կամ ուրիշ աւագակ ազգերի յափշտակու-

թիւնից աւարը չէ կարող ազատուել Գլխաւոր վաճառականութեան ճանապարհներն են 1, Տրապիզոնից երգում, երգումից Բայազիդի վրայով Դավթէժ, թէ յան և այն. 2, երգումից Մուշի, Բաղչը և Սղերիդի վրայով Մօսուլ. Յամսիայից Խողոկիայի, Սեբաստիայի, Մալաթիայի, Խարբերդի, Տիգրանակերտի և Մարտինի վրայով Մօսուլ և այն։ Տիգրանակերտից մէկ Ճիւղ բաժանվում է Սև աւերակի վրայով գետում է Արշա, Հալէպ և այն. 4, Տրապիզոնից Սեբաստիա, Կեսարիա և Քիւլք Բողազով Ատանա, Հալէպ և այն. 5, Մալաթիայից Պէհենիի Այնթափի վրայով Հալէպ և այն։ 6, Թիֆլիսից Ալէքսանդրոպոլի, Ղարսի վրայով գէպի երգում, Թիֆլիսից Ալէքսանդրոպոլի, Երևանի, Նախիջևանի վրայով Դավթէժ, Համալսն, Թէյրան և այն. Թիֆլիսից Գանձակի, Շուշի վրայով գէպի Պարսկաստան։ Ահա սոքա են Հայաստանի գլխաւոր վաճառականութեան ճանապարհները, բայց սոքա ևս ոչ թէ ներքին, այլ արտաքին վաճառականութեան համար են աւելի ծառայում, այնպէս որ այդ ճանապարհով ապրանքները Հայաստանի վրայով անցնում են գէպի օտար երկիրներ։ Որքան թոյլ և ընկած է Հայաստանի ներքին վաճառականութիւնը, այնքան և աւելի Հայերը Հայաստանից դուրս, ուր որ նոքա կան, յայտնի են իրեւ հռչակուած և հմուտ վաճառականներ՝ *):

Գիտութիւններ։ Հայոց գլխաւոր պարապ-

*) Տես „Հայոց այժմեան գրութենը“:

մունքներից մէկը ևս գիտութիւններն են: Տասնելինն երրորդ դարը Հայոց գրականութեան վերածնելութեան գար կարելի է անուանել: Բազմաթիւ ուսումնարանները, ամենօրեայ, կիրակնօրեայ դասախոսութիւնները, բազմաթիւ ուսումնական, մարդագասիրական ընկերութիւնները, գրականական ժողովները, լրագրութիւնները, ամենապարզ ապացոյց են ազգային լրւսաւորութեան բարգաւաճման: Ամէն ուրէք մտաւոր պարապմունքը Հայոց գլխաւոր գործերից մէկն է համարվում: Ազգային լրւսաւորութեան գործը ամենայն տեղ է տարածուած և ամէնքին է զբաղեցնում: Թէ Հայ գրագէտները ընդհանուր թուի հետ համեմատելով որ մասն է կազմում, դժուար է որոշել միայն այնքանը լաւ յայտնի է, որ այդ թիւը շատ անդամ աւելի է միւս բոլոր Հայերին շըջապատող ազգերի թուից: Հայաստանում ընդհանուր գրագիտութեան տարածման այժմ առաջին նպաստովն է «Միացեալ Ընկերութիւնը» Կ. Պօլսի:

ՀԱՅՈՅ ՇՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Հայոց ընտանեկան կեանքի մասին խօսելիս՝ պէտք է զանազանել քաղաքացի Հայերին գիւղականներից. Հայ գիւղացին ներկայացնում է նախնի հայկան տիպը: Դոցա բնակարանը յարմարացրած է կլիմային. խիստ ցուրտ տեղերում տները բոլորովին գետնի տակն են, գետնավոր են, աւելի մեղմ կլիմայում կիսագետնափոր, իսկ ջերմ կլիմաներում վերերկրեայ, կամ գարձեալ կիսագետնափոր: Հայ գիւ-

զացու տունը թէև փարթամ չէ, բայց իւր սպարզութեան մէջ շատ գեղեցիկ է և զարդարած: Նա բաղկանում է մէկ մեծ սենեակից, ուր իրանց բոլոր ժամանակը անց են կացնում ընտանիքի անդամները. այդ գահլիճի յատակը հողէ ամուր ծեծած. դորա մէջ տեղն է գտանվում վառարանը, ուր գիշեր ցերեկ մխում է ծուխը և վառվում է կրակը:

Դահլիճի շուրջը ներսից մէկ արշին բարձրութեամբ քաշած է պատ, որ կոչվում է առհռա, ծածկուած գոյնպգոյն գորգերով, կապերաներով դա է տան աթոռը, նստարանը, դահաւորակը և այլն: Գորանից արշին և կէս աւելի բարձր մէկ կամ երկու, երբեմն և բոլոր պատերի երկայնութեամբ, մի քանի ոտնաշափ խորութեամբ ներս է ընկած պէտը, ուր սարքում են Հայ գիւղացիք իւրեանց պղնձեղէն, խեցեղէն և փայտեղէն անօթները, որոնց մաքրութիւնը կարող է յաղթել գերմանականին: Առաստաղը բարձրանում է գմբեթածեւ և բաղկացած է միմեանց վերայ գասաւորուած հաստ և գեղեցիկ նկարներով փորագրուած գերաններից. այդ բոլոր վերջանում է հերթիկով որով ինչպէս ծխնելցով մեղմօրէն դուրս է գալիս ծուխը և ներս է մտնում լցուը: Դա է տան միակ լուսամուտը: Այդ գահլիճին կից մէկ կողմից գտանվում է հիւրսնոցը շքեղ զարդարուած գորգերով, կապերաներով և մի քանի նահապետական հաստ և կոպիտ կարասիքներով միւս կողմից գտանվում է մառանը լիքը և շտեմարանը լիքը բնութեան բոլոր առատութիւնով և բարիքով: Տան

առաջ գտանվում է ընդարձակ սրահը, ուր ամբողջ օր գործում, մանում, հիւսում և կամ ուրիշ պարագունքներով զբաղուած են տան հարսերը և օրիորդները: Բնակարանից փոքր ինչ հեռու առանձնացած գոմում գտանվում են հայ գիւղացու տանու կենդանիները, իսկ նորան կից է հնոցը՝ թռնիրը, ուր մեծ նանը երկու կամ երեք օրը մեկ իւրեանց արտերից ստացած ցորենի ալեւրից ինքը թխումէ հացը:

Ընտանիքի հայրը բոլոր ընտանիքի անդամների համար ծնող հայր է և միւնոյն ժամանակ կառավարիչ իշխան. տան բոլոր անդամները նորան են յանձնում իւրեանց աշխատանքի բոլոր արդինքը և նորան են անպայման հնազանդվում, իսկ հայրը նոցա ամէնքի համար հոգովն է և նոցա աշխատանաց վերահսկողը: Առանց հօր նախապէս գիտութեան ոչինչ գործ չէ կատարվում ընտանիքի մէջ: Հայ կինը իւր մարդու լծակից ընկերն է, խորհրդակիցը և օգնականը: Ամենայն ինչ երկուսի խորհրդակցութեամբ, փոխադարձ համաձայնութեամբ և վճիռովն է կայանում: Հօր մահից յետոյ ընտանիքի գերագոյն իշխանութիւնը անցնում է ընտանիքի մօրը, որ յայտնի է մեծ նան անունով: Տան մէջ այժմ ամէնքը նորան են հնազանդվում: գիւղական հասարակութիւնը սկսում է նորա վերայ աւելի ծանր աչքով նայել նա այնուհետեւ ձայն ունի գիւղական հասարակական գործերում իրեւ ընտանիքի ներկայացուցիչ: Հօր և մօր կենդանութեան ժա-

մանակ, որդիկերանցից ոչ ոք չէ կարող բաժանուել և հեռանալ ընտանիքից: Նոքա իւրեանց ծնողաց հաւանութեամբ, նոյն ընտրողութեամբ մէկ աղջկայ վրայ պասկուելով մնում են նոյն ընտանիքի մէջ և կազմում մի մեծ ընտանիք 30—80 հոգուց բաղկացած: Ծնողաց մահից յետոյ որդիք, նայելով իւրեանց կամքին կամ կհնաղանդուին աւագ եղբօրը, կրնակվեն միասին և կամ բաժանուելով դարձեալ միմեանց կից կապեն առանձին:

Հայ կանայք և աղջկերք թուրք, Քուրդ և ուրիշ արևելեան ազգերի նման փակուած չեն, այլ աղատօրէն շրջում են գիւղի մէջ, խումբ խումբ հաւաքուելով գնում են շրջակայ արտերը և այգիները, մինչև անդամ աղատօրէն խօսում են իւրեանց հատակից հայ երիտասարդների հետ, բայց անծանօթներից քաշվում են, այն ևս Պարսիկ, Թուրք և Քուրդ փայրենաբարոյ աղջերի անհաւատարիմ վարմունքի պատճառով:

Մեծերին յարգելը, հիւրասիրութեան չափազանցութիւնը հայ ընտանիքի ամենագլխաւոր յատկանիշն է: Երբ մէկ ծերունի կամ հասակաւոր մարդ, լինի գա միանգամայն անծանօթ, գալիս է, իսկոյն բոլոր երիտասարդները նոյն իսկ չափահաները ոտի են կանդում և մինչև նորեկը ինքը չնստի և իրաւոնք չտայ նստելու, նոքա ևս չեն նստի, իսկ եթէ նորեկը անցորդէ մինչև բաւական չափկենայ իրանք էլ չեն նստի: Մեծի մօտ փոքրի խօսելը անհամեստութիւն է: Փոքրին մինչև չհարցնեն նա չպէտք է խօսէ:

Հայի տունը միշտ բաց է հիւրի համար. Հայի տունը հիւրի կայսրան է. միշտ հիւրը գալիս է, հիւրը գնում է, նորա տեղու դատարկ չէ մնում: Հիւրը հայի ասելով Աստուծոյ պարգևն է, Աստուծոյ ողորմութիւնն է. աւելի մեծ յարգանք և անուն ունի այն տունը, ուր ամենից շատ են իջևանում հիւրերը: Ազնիւ հիւրը ոչ միայն տան տէրն է նորան պատուողը, այլ ամբողջ գիւղական հասարակութիւնը: Ամէնքը աշխատում են շահել նորա սիրաը և իւրեանց կարողացածի շափ պատուել նորան: Գիւղի մեծերը գալիս շարգում են հիւրի շուրջը և ամենայն կերպ աշխատում են գրաւել և շահել նորան: Հիւրի հեռանալը նոցա համար մեծ կորուստ է:

Հասարակական կեանքը, փոխագարձ օգնութիւնը նոյնպէս Հայոց ամենագլխաւոր յատկութիւններից մէկն է. Մի որեւից է մեծ աշխատանքի ժամանակ, խսկոյն գիւղի հասարակութիւնը հասցնում է իւր օգնութիւնը. օրինակ մէկ տուն շինելիս մէկը ձրիաբար գերաններն է բերում, միւսը քարը, երրորդը հողը և այն: Այդեկութը, նոյնպէս և ուրիշ շատ աշխատանքներ կատարվում են փոխագարձ օգնութեամբ: Փոխագարձ օգնութեան մէջ հայ կանայք գերազանցում են տղամարդիկներին: Գիւղի որբերի հոգացողութիւնը հայ կանանց պարտքն է: Զքաւոր ընտանիքներին նպաստելը — պահպանելը նոյնպէս հայ կանանց պարտքն է:

Հայ ընտանիքը ունի և իւր հանդսութեան

քաղցր և ուրախ ժամերը: Իոքա են Հայոց կրօնական ազգային ժողովրդականութիւն ստացած առները, որ կատարում են հայ երիտասարդները և օրիորդները նախապէս մեծ պատրաստութիւններ անելով. պար երգերը, խաղերը, որոնք ամենափառաւոր և հանդիսաւոր կերպով կատարում են Հայատանում գիւղացիները, քաղաքացիք միանգամայն մոռացութեան են տուած. Հայ ընտանիքը հարուստ է ու շատ ուրիշ ազգային սովորութիւններով, աւանդութիւններով և այն:

ՀԱՅՈՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

Պարապմունքի մէջ Հայ կինը հաւասար է աշխատում իւր մարդոյ հետ. կտրուած լրւսաւորուած աշխարհից հայ կինը Ասիայում իւր ձեռվիրագործել է կնոջ աշխատանքի խնդիրը: Բայց տեսային հօգացողութիւններից և պարապմունքներից այլ և երկրագործական բոլոր պարապմունքները՝ գինեգործութիւնը, շերամապահութիւնը, կաթնային մնացութիւնը, ինչպէս ոստայնանկութիւնը, բազմատեսակ գործուածքները, հիւսուածքները, մանուածքները բոլորը հայ կնոջ ձեռքումն են կենդրոնացած:

ԿԱԹՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայ կանայք իւրեանց հանձնարով այս արհեստի մէջ կարող են մըրցել եւրոպական հմուտ մասնագետների հետ: Կաթնից նոքա շինում են շատ ընտիր և տեսակ տեսակ

պանիր դաշտային հոտաւէտ ծաղիկներով։ Խոտոր-
ջուրի և համչէնի կանայք աւելի յայտնի են բրդի նման
պանիր պատրաստելով։ Բասէնի հայ կանոյք թե-
լքից բաղկացած ընտիր պանիր են պատրաստում։
շատ տեղ էլ ու ետինի պէս ձեռողդ պանիր են պատ-
րաստում։ Բայց իւր համով գոված է և Պարսկա-
Հայոց մանրած պանիրը խառն համեմներով, որ խե-
ցեղէն ամանների մէջ լքյնելով հողի մէջ թաղում
են և մի քանի ամսից կամ տարիից յետոյ հանումեն։
Գոված է և թերթերի պէս պատրաստուած սերը,
չորտցրած մածունը և թանը, որոնք կարելի է յետ
լուծել և ստանալ միանգամայն թարմ և նոր մա-
ծուն։

ԵԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ, որ շատ տեղ ժողովը-
դեան գլխաւոր պարապմունքն է կազմում, ամբողջա-
պէս կենարօնացած է հայուհիների ձեռքում։ Նա
մինչև վերին աստիճան ուսումնասիրել է իւր գործը,
այդ պատճառով և նորան շատ յաջողում է այդ
պարապմունքը. թէ պատրաստած մետաքսը և թէ
անպատրաստ գնում են մինչև ֆրանսիայի և Ռու-
սաստանի ամենահեռաւոր կողմերը։ Ներամապահու-
թեան մէջ յայտնի են Գանձակի կանայք։

ԱՍՏԵՅԱԿՈՒԹԻՒՆ։ Այս պարապմունքի մէջ
և հայ կանայք բաւական առաջացած են, իւրեանց
շնած նահապետական պարզ փայտեայ գործիքների
վրայ հայուհիները գործում են նուրբ, գեղեցիկ և
գիմացկուն քաթաններ, շալեր, կտաներ, բամբա-
կեայ շապիկներ, երեսրբիչներ, սփռոցներ, թաշ-

կինակներ և այլն։ Նատ գոված են նրգնկայի հայ
կանանց բաղանիսի համար պատրաստած բրդոտ
շապիկները և երեսրբիչները. նշանաւոր են և Բա-
ղէշի հայ կանանց ձեռքով գործած կտաւեղէնները,
Սեբաստիայի գորգերը և կապերտները. բայց ամե-
նաշնտիր կապերտներ և գորգեր պատրաստում են
Պարսկա - Հայաստանի հայուհիք. պակաս չեն և Սիւ-
նեաց (Պարաբաղի) կապերտները, գորգերը և նուրբ
ու գիմացկուն գուլքաները։ Գուլքաների ամենալաւ
տեսակը գտանվում է նրգնկայում։ այդ տեղի հայու-
հիների գործած գուլքաների վերայ ինչպէս մագա-
ղաթի վերայ կարելի է գրել։ Վանայ հայուհիք կա-
րող են պարծենալ ֆուշիկի ազնիւ մազից պատրա-
ստած նուրբ շալերով կամ անձրև չանցկացնող կեր-
պաններով, որ ճանապարհորդների համար վերար-
կուների տեղ են ծառայում. Փոքր - Հայաստանում,
Արաբկերի և մանաւանդ Գիւրիւնի կանայք հոչտ-
կուած են իւրեանց ընտիր, նուրբ և գեղեցիկ շալե-
րով և ուրիշ բազմաթիւ տեսակ կերպաննե-
րով։ Տիգրանակերտի հայ կանայք յայտնի են մե-
տաքսեայ և ոսկեթել գործուածքներով։

Հայ կինը հմուտ է և խոհարարական ար-
հեստի մէջ, նա պատրաստում է մի քանի տարի
մնացող ապուխտներ, զառւրմաներ, բաստուրմաներ,
քաղցրաւենիք և այլն։ Այդ բոլոր պարապմունքի
մէջ հայուհին չէ մոռանում և իւր որդոց դաստիա-
րակութիւնը, տղայոց յանձնելով տեղական ուսում-
նարանին, քահանային կամ տիրացուին, ինքը հո-

և Երբորտ - Հայք: Կիլիկիան և Հայոց - Միջագետքը իւրեանց փոքրութեան պատճառով չունեին բաժանմունքներ: Մեծ - Հայաստանի նահանգները իւրեանց ընդարձակութեան պատճառով բաժանուած էին երկրորդական մասերի որոնք կոչվում են գաւառներ. գաւառների թիւը հարիւը իննուն է եղած, բայց հասած է և մինչև 600ի:

Հայաստանը իւր անկախութիւնը կողցնելուց յետոյ ընկաւ ուրիշների ձեռքը: Այժմ նա բաժանուած է երեք տէրութեանց մէջ. հիւսիս արևելքան մասը պատկանում է Ռուսաստանին, հարաւ արեմտեան մասը Տաճկաստանին և հարաւ արևելքան մասը Պարսկաստանին: Ռուսա - Հայաստանի և Պարսկա - Հայաստանի սահմանները կազմում է Արաքսը և կասած Մասիսից դէպի արևելք մինչև Կուրի հետ խառնուիլը: Կուր գետի բերանից դէպի հարաւ ձգվում է մի փոքր ծովեզքեայ շերտ ևս, որի արևմտեան սահմանը Պարսկա - Հայաստանի հետ կազմում են Գիլանու սարերը: Ռուսա - Հայաստանի և Տաճկա - Հայաստանի սահմանները կազմում են՝ Մասիս, Բարդող և Զրաբաշխ սարերը հարաւից և Պարսկարի սարերը հարաւ արևմտքից. Տաճկա - Հայաստանի և Պարսկա - Հայաստանի սահմանները կազմում են՝ Մասիս լեառը, Յուժունեաց լեառները և Զագրոսի լեռնաշղթան: Հայաստանը օտարների ձեռքը ընկնելուց յետոյ՝ կորցրեց իւր նախնի քաղաքական բաժնունքները, մնացին գործածութեան մէջ միայն նոցա անունները, - այն ևս Հայոց:

Տաճկա - Հայաստանը այժմ բաժանուած է վելյայէթների, վելյայէթները բաժանուած են սանջակների, սանջակները բաժանուած են զազաների: Վիլյայէթի գլխաւոր կառավարիչը վելյին է, սանջակինը միւթսարիֆը, զազանը գայմագամը: Տաճկական Մեծ - Հայաստանը բաղկացած է հետևեալ մասերից՝ Արևոտնայ Նեշանէթից (Բարձր - Հայք, Տուրուբերանի Հիւսիս արևմտեան մասը), Վանաց Նեշանէթից (Վասպուրականի արևմտեան մասը), Տուրուբերանի, Մոկաց և Կորգուաց արևելքան մասերը), Դիտրէնէթից Նեշանէթից (Աղձնեաց, Կորգուաց, Մոկաց արևմտեան մասերը), Ծոփաց հարաւային մասը, Կրրորդ Հայոց արևելքան մասը): Մասերէթ - Իւշ - Աղնիութ (Խարբերդի): Բաշ - Ջեւեսարիքլիքինց (Չորրորդ Հայք): Փոքր - Հայաստանը բաղկացած է Տրտողցնի Նեշանէթից (Պոնտոս), Սէլլոսարիոյի Նեշանէթից (Երրորդ - Հայք) և Կետրիոյ կամ Ապյուռի սանջակից (Առաջին - Հայք): Կիլիկիան բաղկացած է Արտաքի վելյայէթից և Հուշտի վելյայէթի Հիւսիսային մասից. իսկ Հայոց Միջագետքը կազմում է Հաղեպի վելյայէթութեան արևելքան մասը:

Ռուսա - Հայաստանը քաղաքականապէս բաժանուած է հինգ նահանգնի (գուբէրնիա), իսկ նահանգները բաժանուած են գաւառների (ուեզդ): Նահանգների գլխաւոր կառավարիչն է նահանգապետը, իսկ գաւառների՝ գաւառապետը: Ռուսա - Հայաստանի նահանգները են՝ Պարսի նահանգ (Տայք, Գուգարքի և Այրարատի արևմտեան մասը), Երևանաշտան նահանգ (Այրարատի արևելքան մասը Սիւնեաց ա-

բեմուեան մասը), Գայզակի նոհանք (Սիւնիք, Աւտիք, Արցախի արեւմուեան մասը), Բագռաւոյ նոհանք (Փայտակարան), Թէքչեսի նոհանք Կուր գետից Հարաւ, (Արցախի արեւմուեան և Գուգարքի արեւլեան մասը):

Պարսկա - Հայաստանը ամբողջապէս կազմում է մէկ կուսակալութիւն, որ կոչվում է Արքէնցան (Պարսկա - Հայք, Վասպուրականի և Կորդուաց արեւելեան մասը, Փայտակարանի Հարաւային մասը): Աղքաբէյջանի կուսակալութիւնը բաժանվում է Հինդ խանութիւնների: Կուսակալութեան գլխաւոր կառավարիչը միշտ լինում է աւագ շահզարան, իսկ միւս խանութիւնների գլխաւոր կառավարիչներն են Հաստրակ խաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ՑԱ.ՃԿ. - ՑԱ.ՅԱ.ՍՏԱՆ: Տաճկա - Հայաստանում իւրաքանչիւր վեալի, միւթսարիֆ, և գայմագամ իւր վեճակի կատարեալ տէրն է ու կառավարում է եր կիրք իւր կամքի համաձայն: Առանձին հաստատած օրէնքներ, որի զօրութեամբ կարողանային կառավարել անխտիր բոլոր ազգութիւնները, չկան: Եղած օրէնքները ևս կրօնական հիմանց վրայ լինելով հաստատուած, քաղաքական նշանակութիւն քիչ ունեն: Քրիստոնեայ և ոչ - քրիստոնեայ կամ մահմեդական տարրերը միատեսակ օրէնքների չեն ենթարկվում և հաւասար իրաւունքներ չեն վայելում: Նոյն իսկ վար-

չութիւնը այնպիսի օրէնքներով է կազմուած, որ իւրաքանչիւր կառավարիչ մահմեդականութեան պաշտպան պէտք է լինի անգատմառ:

Կառավարիչները շատ քիչ վարձ են ստանում աէրութիւնից, կան մինչև անգամ այնպիսի պաշտօնեաններ, որոնք ծառայում են միանգամայն առանց ռոճիկի: Օրինակ ուշիմները (գատաւորները) միանգամայն վարձ չեն ստանում կառավարութիւնից, այլ նորա ստանում են մի տեսակ վարձ գտափի կամ քննութեան ենթարկուողներից և նայելով վէճի մէծութեան կամ փոքրութեան ստանում են աւելի կամ պակաս: Ի հարկէ այդպիսի հանգամանքում շատ մէծ նշանակութիւն ունի ուղեմի կամքը, թէ յօդուտ ում պէտք է վճռել հարցը: Նոյն իսկ մէծ պաշտօնեայք, ինչպէս փաշանները, ամենաստորին ռոճիկով (ամիսը 10 մանէթ) փառաւոր ապրում են, որովհետեւ հարստահարում և կողոպտում են ժողովրդեան, իսկ հաշիւ պահանջող չկայ, միայն թէ իրանք էլ շահէին իւրեանց բարձր պաշտօնեաններին: Իւրեանց պաշտօնին նայելով գայմագամները ստորագրվում են միւթսարիֆներին, միւթսարիֆը վեալիին, իսկ վեալին Բարձրագոյն - Դրան կամ Սուլթան - Փաղիշահէին, որ մարմնաւոր և հոգեւոր զուլսէ համարվում ամբողջ կայսերութեան մէջ: Մասմուրեթ - Իւլ - Ազիզի բաշ - միւթսարիֆութիւնը բաշառութիւն է կազմում: Նա ոչ ոքի չի ենթարկվում և ուղղակի յարաբերութիւն ունի Բարձր - Դրան հետ:

Տաճկա - Հայաստանում Հայոց հոգեւոր ատեան -

ները բացի կրօնական հարցերը քաղաքական գործերում ևս իրաւունք և ձայն ունին: Այսպէս օրինակ եթէ Հայ գիւղացիների մէջ անբաւականութիւն պատահի, նոքա իւրեանց դանդատով կդիմեն Հայոց հոգեռոր ատեանները, յաջորդին կամ առաջնորդին: իսկ առաջնորդի կամ յաջորդի խօսքը կատարեալ զօրութիւն ունի և վճիռը ընդունվում է: Եթէ վէճը Հայի և մի որևիցէ մահմեդականի մէջ է, իսկապէս պէտք է դիմեն Տաճիկ կառավարութեան, բայց Հայ դատաւորների ճշմարտութիւնը այնքան գերազանց է Տաճկականից, որ շատ անգամ մահմեդականները ինքեանք խնդրում են դիմելու Հայոց հոգեռոր ատեանները առաջնորդներին: Եթէ Հայ հասարակութիւնը շրջապատող օտար ազգերից նեղութիւն է կրում և կամ դժոնչ է Տաճիկ կառավարիչներից, նա դարձեալ դիմում է իւր առաջնորդին, որը իբրև միջնորդ յայտնում է Տաճկաց կամ օտարազգաց ներկայացուցիչներին և կամ անմիջապէս դիմում է Հայոց - Պատրիարքին Կ. Պօլսում, որը և իւր կողմից դիմում է Բարձրագոյն - Գրան: Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքը ամբողջ Տաճկաստանի Հայոց հոգեռոր, միւնցին ժամանակ քաղաքական դրսւ է Համարլում: Տաճկաստանի - Հայերը ունին և «ողգոյին առհմանաբարութեան» որի զօրութեամբ Հայերը իւրեանք են հոգում և կարգադրում Հայոց կրօնական, քաղաքական, ուսումնական և անտեսական գործերի մասին: Հայ ազգի ներկայացուցիչներից կազմուած է Աղգոյին Ժողովը», որի նախագահն է Հայոց Պատրի-

արքը: Աղգոյին կէսպիճական ժողովը գտանվում է Կ. Պօլսում և ունի իւր Ճիւղերը Տաճկա - Հայաստանի և ամբողջ Տաճկաստանի այլեայլ գաւառներում: Աղգոյին ժողովն է վճռում ամբողջ Տաճկաստանում բնակուող Հայերի վերաբերեալ ազգային հարցերը. նոյն իսկ Պատրիարքին իրաւունք ունի փոխելու տեղը ուրիշին նշանակելու: ՊՅԱ.ԲՍԿԱ. - ՀԱ.ՅԱ.ՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԻ: Ինչպէս կուսակալը կամ աւագ - խանը նոյնպէս և երկրորդական, երրորդական խաները, ամէնքը կատարեալ աէրեր են իւրեանց յանձնուած վիճակում: նոցա վրայ միայն պարտք է դրած որոշեալ քանակութեամբ տարեկան հարկ վճարել տէրութեան, իսկ թէ ինչպէս հարատահարելով ժողովրդեան կրկնապատիկ եռապատիկ, տաննազատիկ տէելի կազմանջեն, այդ տէրութեան գործը չէ. խանը իւր վիճակը կամ խանութիւնը կապալով է վերցնում որոշեալ ժամանակ և մինչեւ ժամանակ լրանալը իւր կամքով է կառավարում - երկիրը: Երկիրը կառավարելու համար չկան հաստատ քաղաքական օրէնքներ, որի զօրութեամբ կարողանային կառավարել առանց խորութեան մահմեդական և ոչ մահմեդական տարրը: Եղած օրէնքները զուտ կրօնական են և այդ կրօնական օրէնքների անփոփոխ պահպանելը Պարսից հոգեորականութեան պարտքն է: Բայց անսանձահարելի կաշառակերութիւնը թոյլ չէ տալիս խաներին նոյն իսկ այդ կրօնական օրէնքները ճշմարտութեամբ կատարել մահմեդականների վերաբերութեամբ:

Պարսկա - Հայաստանում՝ Հայ - Հոգեորականութեան նոյնպէս կրօնականի հետ միասին տուածէ և քաղաքական իշխանութիւն իւր ստորագրեալների վերաբերութեամբ։

ՈՒՍՏԱ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՌԱՄԱ - Հայաստանում նահանգապետները իւրեանց նահանգը և գաւառապետները իւրեանց գաւառը կառավարում են տէրութիւնից հաստատուած քաղաքական օրէնքների համաձայն։ Բացի դոցանից գաւառներում կան գաւառական և նահանգներում նահանգական գատաստանաներ, ուր առանց խարութեան ազգի և կրօնի ամենքը դատվում են ընդհանուր և հաստատ քաղաքական օրէնքներով։ Գաւառապետները ենթարկվում են նահանգապետին, իսկ նահանգապետները Կովկասեան Կուսակալին, որ նստում է Տփխիս։

ՈՒՌԱՄԱ - Հայաստանի Հայ - Հոգեորականութիւնը չէ վայելում այնպիսի քաղաքական իրաւունքներ, ինչպէս Տաճկա - Հայաստանի և Պարսկա - Հայաստանի Հայ Հոգեորականութիւնն է վայելում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ա. ԲԱՐՁՐ - ՀԱՅՔ

Հայաստանի բոլոր նահանգներից բարձր է, այդպատճառով և կոչվում է Բարձր - Հայք, գտանվում է Երկրորդ - Հայքի, Տայոց, Այրարատի և Տուրութեամբ։

Բանի մէջ Այստեղ են գտանվում Տօրոսի, Մոսկիքեան և Բիւրակնեան լեառների ձիւղերը, այստեղց են բղխում Եփրատ, Երասխ և Ճորոխ իւրեանց բաղմաթիւ վատկներով։ Երկրի ջրառատութեան համաձայն է Երկրի պտղաբերութիւնը, ամենապտղաբեր մասերը կազմում են Կարնոյ և Երգնկայի գաշտերը, Բարձր - Հայքը հարուստ է ազի, Երկաթի, քարածուխի և ոսկու հանքերով, նոյնպէս բաղմաթիւ առողջարար հանքային ջրերով։ Կենդանիներից աւելի նշանաւոր են ձին, ոչխարը և ջորին, իսկ թռչուններով շատ հարուստ է Կարնոյ շամբը։

Հին ժամանակ Բարձր - Հայքը բաժանուած էր ինն գաւառի, որոնցից նշանաւոր են՝

ԿԱՐԻՆ

Այս գաւառի գլխաւոր քաղաքն է Կարին կամ Արդերում կամ Երզում, գտանվում է մէկ ընդարձակ գտշտի մէջ։ ամուր բերդագաղաք է։ շրջապատած է Երկու կարգ խիստ հաստ և ամուր պարիսպներով, եօթանասուն և երկու աշտարակներով։ միջնաբերդումն է գտանվում կուսակալի ապարանը և զինարանը։ Կարինը նշանաւոր է և իրեւ վաճառաշահ քաղաք, գտանուելով այն մեծ ճանապարհի կենտրօնում, որ միացնում է Տաճկաստանը, ՈՒՌԱՄԱ - ՀԱՅՔՆԵՐԸ և Պարսկաստանը, յայտնի է իւր վոխաղաքական վաճառականութեամբ, ունի շատ վաճառանոց։

ներ, ուր օրը հազար քարտանն ներս է մանում, հազարը դուրս գալիս: Ծաղկած են կարինում և արշեստները. արհեստներից աւելի առաջացած են բամբակագործութիւնը, մետաքսագործութիւնը և պղնձագործութիւնը. կարինում շինում են շատ ընտիր հրացաններ և ատրճանակներ. երկու անգամ լքցրած հրացանը արձակելիս չի ճայթքում. զենքերը ջրի մէջ ընկնելուց չեն ժամփոտում: կարինը իւր գեղեցկութեամբ ևս առաջինն է ամբողջ Հայաստանում. ունի շատ գեղեցիկ շինութիւններ, որոնցից նշանաւոր են՝ Ուլուձամի մզկիթը, որ 150 սոնաշափերկայնութիւն և 120 սոնաչափ լանութիւն ունի. Զիվտի մինարեն, որ յախճապակեայ դոյնպղբյն աղիսներով է շինած. Նումնանէի քէապէ մզկիթը, որ նոյն ձեռվ և չափսով է շինած, ինչպէս Մէքքինը: Մէռմէռ համար կոչուած բաղանիքը: Եկեղեցիներից նշանաւոր են Աստուածածնայ եկեղեցին: Այսուղ է նստում Բարձր - Հայոց առաջնորդը. բնակիչների բազմութեամբ ևս կարինը բոլոր քաղաքներից գերազանց է. մօտ 90,000 բնակիչ ունի, որի երբորդ մասը Հայեր են:

Կարինից հարաւ արևելք նրասիի ափին գըտանվում է Արծու քաղաքը, որ այժմ գիւղ է:

ՍՊԵՐ

Քաղաքներից նշանաւոր է Սպեր. գտանվում է ձորոխի աջ ափին. ամուր բերդաքաղաք է. քաղաքի շուրջը պատած է պարտէզներով և այդիներով,

հարուստ է մեղրամնմով. շրջակայքում ոսկու և պղնձի հանքեր կան: Բաբեր, գտանվում է ձորոխի ձախ ափին, երկու կողմից Ճնշուած է լեառներով. ամուր բերդաքաղաք է, ունի ամուր բերդ բարձր քարաժայոի վրայ. բնակչաց թիւն է 8,900, որոնցից մօտ 2,000 Հայեր են:

ԴԱՐԱՆԱԴԻ

Գլխաւոր քաղաքն է Կամաֆ կամ Անի բերդ. խօստ ամուր գիրք ունի. ունի բերդ. նշանաւոր է Կամախի մօտ գտանվուած ստորերկրեայ անցքը Եփրատ գետի տակով: Այդ ստորերկրեայ անցքը միացնում է երկու ստորերկրեայ թաղեր, մէկը Եփրատի մէկ կողմն է, միւսը միւս կողմը. առաջինը ներկայացնում է զօրանոցներ և պալատներ իւրեանց շքեղ ննջարաններով, դահլիճներով և սրահներով, որոնք տաշած են ամբողջապէս միակտոր ժայռի մէջ: Այդ զօրանոցների առջեւ կարող են կանգնել հազարաւոր զօրքեր: Այդ պալատներից մէկ ստորերկրեայ անցք տանում է գէպի միւս կողմը ժայռի մէջ փորուած եկեղեցին:

ԵԿԵՂԻՖ

Եկեղեց գլխաւոր քաղաքն է Երեւան կամ Երգինկան, գտանվում է Եփրատի աջ ափին, մօտ

18,000 բնակիչ ունի, որի երրորդ մասը Հայեր են.
մէկ բարձր ժայռի վրայ ունի միջնաբերդ. Երգնկայից
արևմուտք գտանվում է Թիլ աւանը:

Բ. 20ՐՐՈՐԴԻ - ՀԱՅՔ

Այս նահանգը այլապէս կոչվում է Ծոփք կամ
Ծոփաց աշխարհ. գտանվում է Բարձր - Հայքից հա-
րաւ, Եփրատից արևելք, Աղձնիքից հիւսիս և Տու-
րուբերանից արևմուտք: Երկիրը խիստ լիառնոտ է,
այստեղ սկսուած են Տօրոսի բազմաթիւ Ճիւղերը.
այստեղից է սկսում արևմտեան Տիգրիսը իւր բազ-
մաթիւ Ճիւղերով: Երկիրը Արածանի գետով բա-
ժանվում է Հիւսիսային և Հարաւային մասերի:
Հարուստ է բուսականութեամբ, աւելի նշանաւոր է
Չորրորդ - Հայոց բամբակը, խաղողը և գինին: Հան-
քերից նշանաւոր են արծաթի, ոսկու, քարածուխի
և պղնձի հանքերը: Հին ժամանակ Չորրորդ - Հայքը
ունէր ութ գաւառ, որոնցից նշանաւոր են՝

ՀԱՆՁԻԹ

Այս գաւառի գլխաւոր քաղաքն է Խարբերդ. գլ-
տանվում է Արածանւոյ ձախ կողմը. նշանաւոր բեր-
դագաղաք է. շուրջը պատած է ամուր պարսպով. լե-
ռան վրայ ևս ունի մի ամուր բերդ. նշանաւոր է և
իրեւ վաճառաշահ քաղաք. Անձ քանակութեամբ
արտադրում է բամբակ, շերամ և գինի, որ մշակ-

վում են քաղաքի շրջակայքում: Խարբերդը 20,000
բնակիչ ունի, որոնց մօտ երրորդ մասը Հայեր են:
Կապան գտանվում է Խարբերդից դեպի արևմուտք
Եփրատի ձախ ափին. Հարուստ է շատ արծաթի և
երկաթի հանքերով:

ԲԱԼԱԿՈՎԻՏԸ

Գլխաւոր քաղաքն է Բալու. գտանվում է Արա-
ծանւոյ աջ ափին. ամուր բերդաքաղաք է: Եօթը
հազար բնակիչ ունի, որոնցից մօտ երրորդ մասը
Հայեր են: Բալուայ մօտելքում գտանվում են և շատ
առատ պղնձի ու քարածուխի հանքեր. խիստ երկրա-
շարժներից քաղաքը մեծամեծ վնասներ է կրում:

ՊԱՂԻՆ

Գլխաւոր քաղաքն է Արէնի կամ Արղանա. ա-
մուր բերդ է. մօտ 3,000 բնակիչ ունի. կէսից աւել
Հայեր են: Արշատայի մօտելքում կան հարուստ ոսկէ
հանքեր. գովածնեն և Արղանայի այգիները իւրեանց
ընտիր խաղողով:

Գ. ԱՂՋՆԻՔ

Աղձնեաց սահմանները կազմում են հիւսիսից
Չորրորդ - Հայքը, Հարաւից Հայոց - Միջագետքը, ա-
րևելքից Կորճէքը, արևմուտքից Փոքը - Հայաստանը:

Երկրի հիւսիսային և հարաւային մասը գաշտային է, միջն մասը լեառնոտ, ուր ձգվում են, Կորդուաց և Տօրոս լեռների Ճիւղերը: Այս երկով է անցնում արևմտեան Տիգրիսը իւր բազմաթիւ Ճիւղերով: Երկրը խիստ բարեբեր է, բուսուցանում է ջերմ կլիմայի բօյսեր: Հանքերից աւելի նշանաւոր են երկաթի, կապարի, պղնձի և նաւթի հանքերը: Նաև կան այս երկրում և հանքային տաք ջրեր: Հին ժամանակ Աղճնիքը բաժանուած էր 10 գաւառի, որոնցից նշանաւոր են:

ՍԱՍՈՒՆ

Երկիրը խիստ լեառնուտ է, բնակիչները կարուկ և պատերազմասեր, բնութեամբ խիստ հիւրասէր և օտարներին պատուող լեզուները թանձր և խոշորածին: Այս գաւառի զիսաւոր քաղաքն է Ստուռ, որ ամուր բերդ ևս է. շինած է բարձր լերան վրայ. սորա շրջակայքում ընտիր խաղող է մշակվում: Աղճանեաց մէջ է գտանվում և Տիգրանէրա կամ Դիարբէքիր քաղաքը, որի գաւառը անյայտ է. գտանվում է արևմտեան Տիգրիսի ափին: Տիգրանակերար նշանաւոր է իբրև բերդաքաղաք. շուրջը պատած է ամուր պարիսպներով ամբացրած եօթանասունեերկու աշտարակներով: Պարիսպի վրայ կարող են երկու կառք զուգընթաց գնալ: Պարսպի շուրջը ևս խրամով է պատած: Քաղաքը ունի և միջնաբերդ, ուր գտանվում է կուսակալի պալատը. Տիգրանակեր-

տում Տաղկած են և արհեստները, մանաւանդ բամբակագործութիւնը, մետաքսագործութիւնը, պղնձագործութիւնը. ամենից աւելի գոված են ոսկեթել գործուածքները: Տիգրանակերտը Հայաստանի հարաւում առաջին ընդարձակ վաճառաշահ քաղաքն է. մօտ 40,000 բնակիչ ունի, մեծ մասը Քուրդ և Ասորի, Քաղաքի շրջակայքը խիստ պաղաքեր է, գոված է Տիգրանակերտի սեխը և ձերուկը:

Դ. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

Տուրուբերանի սահմանները կազմում են հիւսիսից Այրարատը, արևելքից Վասպուրականը, հարաւից Մոկաց աշխարհը, արևմուտքից Զորբորդ-Հայք և Բարձր-Հայք: Երկիրը լեառներ և զաշտեր շատ ունի. այսուղ են ձգվում Տօրոսի Ճիւղերը Խցթ, Գոգուռ, Ներրովդ, Սիփան և այլն: Տուրուբերանի միջով անցնում է Արածանին իւր մէջ ընդգունելով բազմաթիւ վոակներ՝ Մանազկերտայ ջուրը, Խնուսայ գետը, Մեղրագետը և այլն: Երկիրը խիստ պաղաքեր է և առատութեամբ բուսուցանում է ցորեն, մանաւանդ հիւսիս արևելքան կողմերը, ծխախոտ հարաւային կողմերը: Հանքերից նշանաւոր են կարմիր և սպիտակ աղը, երկաթը, զոնեխը և քարածուիը: Այս նահանգի արևելքան կողմն է գտանվում Վանայ ծովը իւր Աղթամար, Առաքը, Կտուց և Լիմ կղզիներով: Տուրուբերանը հին ժամանակ

բաժանուած էր տասնեւթեց դաւասի, որոնցից նշա-
նաւոր ենք ոչ ու ծովագուած ոչ ու ծովագուած
մին ան ծախոր ոյլու ըլում ու միջին ու ծովագու-
ած ու կառուայու պայման ու ծովագուած ոյլու ըլու-

ՏԱՐՈՆ

Այս դաւասի գլխաւոր քաղաքն է Մոշ. նշա-
նաւոր է իբրև վաճառաշահ քաղաք. մեծ քանա-
կութեամբ այստեղից տանում են ծխախոտ, որ Սամ-
սն կոչուած տեսակից ստոր չէ, մեղը, գինի, ը-
րացրած մրգեր և գաղաք. 10,000 բնակիչ ունի,
որի կէսը Հայեր են. քաղաքի շքակայքում նշանա-
ւոր է Մուշի անսպառելի աղահանքը, որ կարող է
ամբողջ Ասիային և Եւրոպային աղ մատակարարել:
Մշու մօտ է Հայոց երեելի մուրագատու Սուրբ Կա-
րապետի վանքը, որ այլարէս իննակնեան էլ է կոչ-
վում մօտից բղնող ինն անուշահամ աղբիւրների
պատճառով: Մշու մօտ է և Սուրբ Ա.աղարու կամ
Աւագէլոց վանքը, որ նշանաւոր է իւր երկրադորժա-
կան ուսումնարանով:

Արածանու աջ ափին է գտանվում պատմական
Սշտէշառ քաղաքը, որ այժմ գիւղէ դարձած:

ՀԱՐՔ

Գլխաւոր քաղաքն է Մանառ Էլլու. գտանվում է
Մանգկերու գետի ափին. բերդագաղաք է և բնա-
կան ամռուած դիզուու պայման:

ԱՂԻՌՈՎԻՑ

Գլխաւոր քաղաքն է Արծէլ. գտանվում է հա-
մանուն գետի ափին Վանայ լճի հիւսի-
սային կողմը. բերդագաղաք է և ամռու դիրք ունի.
շքակայքը խիստ հարուստ է և լաւ մշակուած. ա-
ռատօրէն բուսու ցանում է ցորեն և գարի: Բաշէլ
կամ Բիթիս. գտանվում է Վանայ լճի հարաւ ա-
րեմտեան կողմը համանուն գետի վրայ. ընդարձակ
բերդագաղաք է, ունի միջնաբերդ. նշանաւոր է և իբրև
վաճառաշահ քաղաք. վաճառականութեան առար-
կաներն են գլատոր, ծխախոտ, կտաւեղիններ, կաշե-
ղէններ, չորացրած մրգեր և այլն: Բաղէշում առա-
ջացած են և արհեստները առաւելապէս կտաւա-
գործութիւնը և կաշեգործութիւնը: Ունի գեղե-
ցիկ քարաշէն աներ, վաճառանոցներ, մզկիթներ և
կամուրջներ Բաղէշ գետի վրայ. Հայերը ունին 4 ե-
կեղեցի. բնակչաց թիւն է 24,000. շքակայքը հա-
րուստ է պղնձի և զռնեխի հանքերով: Բաղէշից
արևելք Վանայ ծովեղերքում գտանվում է Գողրուած
որ Բաղէշի նաւահանգիստն է. Գողրուածից հիւսիս
գտանվում է Խլուը, որ Մուշի նաւահանգիստն է:

ՏՈՒԱՐԱՇԱՏԱՓ

Գլխաւոր քաղաքն է Խոնսո, ամուր դիրք ունի, բերդաքաղաք է. 2,200 բնակիչ ունի, կէսը Հայ կէսը Տաճիկ:

Ե. ՄՊԿՔ

Մոկաց սահմաններն են Հիւսիսից Տուրուբերան և Վասպուրական, արևելքից Վասպուրական, հարաւից Կորճէք, արևմուտքից Ծոփի: Երկրի մակերեսը լեռնային և գաշտային է. հարաւում ձգվում են Կորդուաց լեռների Ճիւղերը, արևելքում Զագրոսի Ճիւղերը, իսկ Հիւսիսում բարձրանում է Առնոս լեռը: Մոկաց միջով արևելքից դէպի արևմուտք ձգվում է Արևելեան Տիգրիսը իւր բաղմաթիւ մանր վտակներով: Երկիրը պտղաբեր և հարուստ է, բայց առհասարակ լեռներով կտրառուած մելու, ձանփառը հների բացակայութեան և տեղական բազմաթիւ Քուրդ ցեղերի պատճառով շատ քիչէ ուսումնասիրած: Հին ժամանակ Մոկաց նահանգը ունէր ինն գաւառ: Այս նահանգի մէջ նշանաւոր է Մոկացիւղաքաղաքը Տիգրիսի աջ ափին. բնակիչները բուլը Հայեր են, փոքրիկ վաճառաշահ քաղաք է. վաճառում է մեծ քանտկութեամբ մեղրամում: արհեստներից առաջացած են ոստայնանկութիւնը և ներկարարութիւնը. գործում են բաւական գեղեցիկ

մանիսաներ, բամբակեայ կերպասներ: Գոված են և այսաեղի այծի մաղեց գործած խիստ գիմացկուն կոշիկները:

Զ. ԿՈՐՃԱՅՅՔ

Սահմանները կազմում են Հիւսիսից Մոկք, արևելքից Պարսկահայք, Հարաւակից Ասորեստան, արևմուտքից Աղձնիք: Երկիրը խիստ լեռնուտ է. այսաեղ են ձգվում Կորդուաց և Զագրոսի բարձր լեռնաշղթաները: Աւաղակարարոյ և կիսավայրենի Քուրդ և Ասորիների ձեռքին է այս երկիրը. կեանքի և կայքի կատարեալ անապահովութիւն է տիրում այս երկրում, ուստի և մինչև այժմ լաւ ուսումնասիրուած չէ: Քաղաքներ և գիւղեր այստեղ համարեա թէ չկան. անմատչելի լեռնագագաթները կազմում են նոցաբնակութեան զլիաւոր տեղերը: Այս նահանգը հին ժամանակ բաժանուած էր տասնեմեկ գաւառների:

Կորճէքից գլխաւոր քաղաքն է Ճռշամբէրի. շենած է մօտ հինգ հազար բարձրութեամբ մի բարձր ժայռի վրայ Զաւ գետի ափին. ամուր բերդաքաղաք է, մօտ 3,000 բնակիչ ունի Ասորի, Քուրդ և մասամբ Հայ: Ճռշամբէրի մօտ է Քաջանէս գիւղը, ուր նստում է Ասորոց Մարշանը (Պատրիարքը) որ Հոգեոր և քաղաքական գլուխ է համարվում ասորիների:

Է. ՊԱՐՍԿԱՀԱՅՅՔ

Պարսկահայոց սահմանները կազմում են Հիւսիսից Վասպուրականը, արևելքից Ատրպատականը,

Հարաւից Մարք և արևմուտքից Կորճէքը: Երկրի արևմտեան մասը լեառնոտ է, այստեղ էն ձգվում Զագրոս լեռան Ճիւղերը, երկրի արևելեան մասը դաշտային է, միայն հիւսիս արևմտեան մասում բարձրանում է Սոհունց բարձրաբերձ լեառը: Երկրի մէջ տեղ հիւսիսից հարաւ ձգվում է Որմիոյ լիճը, որ բաղմաթիւ գետեր է ընդունում շրջակայ լեռներից: Երկիրը բարեբեր է և հարուստ թէ բուսականութեամբ և թէ կենդանիներով: Հանքերից առատ են աղի և երկաթի հանքերը: Հին ժամանակ Պարսկահայքը ունէր ինն գաւառ: Այս նահանգի քաղաքներից նշանաւոր են Խոյ, գտանվում է Կոտուր գետի ձախ ափին. վաճառականական յարմար զիրք ունի, սորա վրայով են անցնում Տաճկաստանից և Ռուսաստանից դէպի Պարսկաստան և Հնդկաստան գնացող ապրանքները: Տաղկած է քաղաքի ներքին և արտաքին վաճառականութիւնը. մօտ 30,000 բնակիչ ունի: Քաղաքի շրջակայքը պաղաքեր է և ծածկուած է այդիներով: Խոյի մօտ է գտանվում և Կոտուր բերդը: Սալտառ (Դիլման) գտանվում է համանուն գետի վրայ, որ թափում է Որմիոյ լիճը հիւսիսից: Որմէ, գտանվում է համանուն լճի արևմտեան կողմը Շահեր գետի վրայ, մօտ 20,000 բնակիչ ունի Պարսիկ, Ասորի, Հրէայ և Հայ: Պարսկահայոց մէկ մասն էր կազմում հին ժամանակ և Ատրպատականի հիւսիս արևմտեան կողմը, որի մէջ քաղաքներից նշանաւոր են՝ Դավթէծ. գտանվում է Սջի գետի վրայ, առաջնակարգ վաճառաշահ քաղաք է. այստեղ էն հաւաքսիւմ

Կովկասի առլբանքը Երևանի վրայով, Տաճկաստանի ապրանքը Արգերումի վերայով, Ռուսաստանի ապրանքը Կատարից Տովի վրայով, ամբողջ Պարսկաստանի ապրանքները Թէյրանի և Համադանի վրայով: Հարիւր քսան հաղար բնակիչ ունի, այստեղ է նստում Պարսկական կուսակազ: Արտաւիլ, գտանվում է համանուն գետի վրայ գաշտի մէջ. շրջապատած է պարիսպներով, վաճառաշահ քաղաք է. ունի մօտ 6,000 բնակիչ շրջակայքում կան ցուրտ և տաք հանքային ջրեր: Մարտառ, գտանվում է Սաֆի գետի վրայ. 14,000 բնակիչ ունի:

Հ. ՎԱՍՊՈՒԹՐԱԿԱՆ

Վահանները են արևմուտքից Տուրուբերանը, հիւսիսից Այրարատ և Սիւնիք, արևելքից Փայտակարան և Պարսկահայք, հարաւից Մոկք և Կորճէք: Այս նահանգը հայաստանի բոլոր նահանգներից մեծ է. ունի շատ լեռնային և գաշտային մասեր. լեռներից նշանաւոր են Բուժունեաց լեառները, Աղբակայ լեռները, Արտսու, Վարագ լեռները և այլն: Այս երկրով է անցնում Արաքսը, Կարմիր վտակով, Զաք գետը և շատ ուրիշ մանր գետեր, որոնք թափում են Վանայ և Որմիոյ լեռը: Երկիրը խիստ սպարաբ է և լաւ մշակած հարուստ ամենայն անսակ բուսականութեամբ և ընտիր կենդանիներով, գոված են Վասպուրականի այծերը իւրեանց ընտիր մաղով, ոչխարները իւրեանց աղնիւ

բրդով և պարարտ գմակով, այնպէս որ չկարողանալով
հետեւից քաշ տալ, գիւղացիք շինում են փոքրիկ
սայլակներ և վրեն զնելով ահագին դմակը լծումեն
ոչխարին և այդպիսով հեշտացնում նոցա մանգալը
արօտներում գոված են կրակոտ ձիաները և խոշոր
կովերը Հանքերից առատ են պղնձի, երկաթի, քա-
րածուխի, աղի և կապարի հանքերը: Հայաստանի
ամենից բազմամարդ և հարուստ նահանգն էր մեկ
ժամանակ, ունէր 4,400 գիւղ, 72 բերդ, տասը քա-
ղաք, 900 վանք, երկու միլիոնից առելի բնակիչ և
կազմում էր առանձին թագաւորութիւն. այժմ
գարձել է սակաւամարդ, քաղաքները անշուք են, բնա-
կիչները մեծ մասով աղքատ և խեղճ: Բայց և այն-
պէս գարձեալ այս նահանգում տիրապետող տարրն է
Հայը, որ թէ թուով, թէ նիւթական և թէ բա-
րյական կողմանէ բարձր է շրջապատող ազգերից:
Այս նահանգը հին ժամանակ բազացած էր երե-
սունեւեց գաւառներից, որոնցից նշանաւոր են՝

ՈՉՏՈՒՆԻՔ

Գլխաւոր քաղաքն է Ոստան. գտանվում է հա-
մանուն գետի վրայ Վանայ լճի հարաւային կողմբ:
Ունի ամուր բերդ. այս գաւառին էր պատկանում
Աղթամար կղզին համանուն քաղաքով. Ոստանից
գետի արևմուտք գտանվում է Նարեկ գիւղը Նարե-
կայ հռչակաւոր վանքով:

ան մասնաւոր և խոյմա ունաւոյ զմանամաս
անուն է Ա Ա ան համար ու ան համար ու ան համար
ու ան համար ու ան համար ու ան համար ու ան համար

ՏՈՍՔ

Այս գաւառի գլխաւոր քաղաքն է Վան. Հայա-
տանի ամենահին քաղաքներից մեկն է. նշանաւոր է
իրեւ բերդագաղաք. շրջապատած է ամուր պարիսպ-
ներով, հիւսիսային կողմից ևս բարձր քարաժայրն է
պաշտպանում քաղաքը. այդ քարաժայրի վրայ ևս
շինած է միջնաբերդը, ուր գտանվում է զօրանոցը,
զինարանը և կուսակալի ապարանը. նշանաւոր է
Վանը իւր վաճառականութեամբ, միայն վատ ճա-
նապարհների պատճառով վաճառականութիւնը շատ
հեռու չէ տարածվում: Վաճառականութեան ա-
ռարկաներն են գոյնզգոյն մանիսաներ, փուլիկ այծի
մազից գործած, շալեղիններ, կտաւեղիններ, բամ-
բակեղիններ, չժեր, որոնք թէւ փոքր ինչ կոշտ են,
բայց խիստ դիմացիուն են և գեղեցիկ նկարներով
զարդարած: Մեծ քանակութեամբ վաճառ է հան-
վում և կաշի, տառեխ ձուկ, նժոյզներ և բնիու-
ղենու կոճղ: Վան քաղաքը իւր գեղեցիութեամբ եւ
տառաջնն է միջին Հայաստանում: ինն հազար տասն
բնակիչ ունի, որից 19,000 հոգի Հայեր են: Հայերը
ունին բազմաթիւ ուսումնարաններ. նշանաւոր է վար-
ժապետանոցը. Վանից գետի արևելք Վարագայ
Հռչակաւոր վանքում նշանաւոր է Վարագայ երկրա-
գործական ուսումնարանը:

Այս քաղաքի շրջակայ ժայռերի վրայ կան
բազմաթիւ արձանագրութիւններ, գուրս փորուած

սենեակներ լուսամուտաներով և սանդիներով։ Վանքաղաքին աւահանգիստն է Աւանց, գտանլում է Վանայ լճի տիկին։ Աւանց գիւղացիք Վանայ լճի վրայ առաջնակարգ նաւասահներ են և 70-ից աւելի նաւեր ունին։ Արքեմբէ, գտանվում է Վանից գէպի հարաւ լճի տիկին։ շրջապատած է ընդարձակ այգիներով և պարտէղներով դոված են այստեղի խնձորը և տանձը։

ԱՌԵՐԱՆ

Այս գաւառում նշանաւոր է Բերեբեր բերդաւանը, գտանվում է համանուն գետի վրայ, որ թափվում է Վանայ լիճը։ մեծ առուտուր ունի և տառելս ձկնով։

ԱՐՏԱԶ

Գլխաւոր քաղաքն է Մաքու, ամուր բերդաքաղաք է, գտանվում է համանուն գետի վրայ։ Սորամօտն է Արտազ դաշտը, ուր եղաւ Վարդանանց պատերազմը։ այս գաւառումն էր և Շատավանդ քաղաքը։

ԳՈՂԹՆ

Գլխաւոր քաղաքն է Օլոռ-Էռոր։ գտանվում է Արասի ձախ ափին մի քարափի վրայ, որ գէպի դաշտն է խոնարհվում։ տները յրուած են այգիների և պարտէղների մէջ։ 3,500 բնակիչ ունի։ Սորամօտն է գլ-

տանվում Ագուլիս աւանը, որ յայտնի է իւր հմուտ և ճարպիկ վաճառականներով։ աւանը բաժանվումէ երկու մասը, Վերին-Ագուլիս և Ներքին-Ագուլիս։

ՆԱԽՃԱՒԱՆ

Գլխաւոր քաղաքն է Նախճաւան կամ Նախչուան կամ Նախիջեան։ գտանվում է համանուն գետի վրայ։ 7,000 բնակիչ ունի։ վաճառաշահ սահմանային քաղաք է։ տարեկան մէկ և կէս միլիոն ռուբլու ապրանք է ընդունում Պարսկաստանից և 150,000 ռուբլու ապրանք է ուղարկում Պարսկաստան։ Նախչուանայ մօտ նշանաւոր է աղահանքը, որտեղից տարեկան 104,000 պուդ աղէ ստացվում։

ՄԱՐԱՆԴ

Այս գաւառի գլխաւոր քաղաքն է Մարանդ։ յարմար վաճառականներ գիրք ունի։ Բնակչաց թիւն է 10,000։ մեծ մասը մահմեդական են։

ԹԲ. ՄԻՒՆԻՔ

Աահմանները կազմում են հիւսիսից Գուգարք և Արցախ, արեւելքից Ուտիք, հարաւից Փայտակարան և Վասպուրական, արեւմուտքից Այրարատ, երկիրը ծածկուած է խիստ բարձր լեռներով։ այստեղ են ձգվում Գեղասմայ, Գեղարքունեաց, Գարուց, Գի-

զավայտու և ուրիշ շատ լեռներ. երկրի միջով վազում են բաղմաթիւ լեռնային արագընթաց և սահանքաւոր գետեր, որոնք թափվում են Կուր. և Երասխ դետերի ու Սևանայ լճի մէջ։ Հարուստ է բոյսերով և կենդանիներով. նշանաւոր է աւելի յուրենը, գարին, խաղողը, նուռը, ծիրանը և այլն. կենդանիներից յայտնի է՝ ձին, որ շատ աղնիւ տեսակն է, նոյնպէս և կոմի ու զոմեշը։ Հարուստ է և ծծմբային երկաթային և աղային հանքերով։ Այս երկրի բնակչութիւնը միշտ յայտնի են եղած իրեւ քաջ և ուսումնական մարդկէք, բաղմաթիւ քաղաքներից և վանքերի այժմ միտքն մի քանի հետքերն են մնացել. Աինիքը հին ժամանակ բաղկացած էր տասնեւերկու դաւառի, որոնցից նշանաւոր են՝

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ

Այս գաւառում նշանաւոր է Գառնի աւանը, որ մէկ ժամանակ թափաւորական ամարանոց էր. հնութիւններից նշանաւոր է Տրդատայ թաղթը. այս գաւառում մն է գտանվում Ազի վանքը, որ այլապէս Գեղարդայ վանք է կոչվում։

ԵՐՆՉԱԿ

Այս գաւառում նշանաւոր է Երնջոկ բերդաւանը, որ գտանվում է մի քարտլերան վրայ համանուն գետի ափին. մօտ 100 տուն բնակիչ ունի։

ԱՐԵՒԻՒԾ

Հին ժամանակ այս գաւառում շատ էր ծաղկած արեւապաշտութիւնը. նշանաւոր է Մելքի աւանը, որ դամանվում է համանուն գետի վրայ, ըրջակայքը շատ պտղաբեր են ծածկուած այգիներով։ Սիւնիքումն է գտանվում և նռշի քաղաքը. նշանաւոր է իրեւ բերդաբաղաք. շինած է մէկ բարձր տեղ և ըրջապատճ է ամուր պարիսպներով. մօտ 25,000 բնակիչ ունի. նշանաւոր է Հոգեւոր Կողբանոցը, հարուստ տպարանը. բնակիչները պարապում են վաճառականութեամբ և արհեստներով։ Աւելի ծաղկած է շերամապահութիւնը։

Փ. ԱՐՅԱԽ

Աաշմանները կազմում են հիւսիսից Վրաստանը, արևելքից Փայտակարանը և Ռւտիքը, հարաւից Սիւնիք, արևմուտքից Գուգարք. երկրի հարաւ արևմտեան մասը լեռնոտ է, մնացած մասը դաշտային է. հարուստ է բուսականութեամբ. հանքերից նշանաւոր են պղնձի, երկաթի և արծաթի հանքերը։ Այս երկիրը լինելով սահմանակից Սիւնիքին, երբեմն սորտքաղաքները, նոյն իսկ գաւառները նորա մէջ են հաշվում և երբեմն նորանը սորտքաղաքները, նորա մէջ են հաշվում և երբեմն նորանը սորտքաղաքները և այլն։

ԺԱ. ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Այս նահանգը գտանվում է Կասպից արևմտական ծովեղբում. երկրի մակերեսը՝ բոլորովին հարթէ և ծածկած գեղեցիկ արօտներով. Սորա միջով անցնում է Կուր գետը, որ գարնան ժամանակ մեծանալով ողղում է դաշտերը. Հարուստ է նաւթի և աղի հանքերով. Այս նահանգից տարեկան 2,000,000 փուդ աղէ ստացվում. Հին ժամանակ բաժանուած էր տասնեւերկու գաւառի. Այս նահանգի քաղաքներէց նշանաւոր են Լեռնորտ, ծովեղբեայ վաճառաշահ քաղաք է, 5,000 բնակիչ ունի, Բաքու ծովեղբեայ առաջնակարգ վաճառաշահ քաղաք է. մօտ 15,000 բնակիչ ունի. օրէցօր առաջ է գնում թէ ծովեղբեայ վաճառականական յարմար գիրք ունենալու պատճառով և թէ մերձակայ նաւթային հանքով որտեղից տարեկան տասնեւորս միլիօն փութ նաւթ է ստացվում. Բաքուայ մօտ են և կրակապաշտ Հնգիկները:

ԺԲ. ՈՒՏԻ

Սորա սահմանները կազմում են Հիւսիս արևելքից Կուր գետը, Հարաւ արևելքից Արաքսը, արևմտաքից Սիւնիքը, Հիւսիսից Արցախը, երկրի մակերեսը՝ Հարթ Հաւասար է ծածկուած բազմաթիւ մանր գետերով, որոնք թափվում են Կուր

գետը, հարուստ է ջերմ կլիմայի բոյսերով և կենդանիներով. Հանքերից նշանաւոր են՝ արծաթ, պղինձ, կապար, աղ, նաւթ և քարածուխ. Հին ժամանակ ուտիքը ունէր ութ գաւառ. Քաղաքներից նշանաւոր են՝ Գույսակ, գտանվում է համանուն գետի վրայ, որ թափվում է Կուր գետը. վաճառաշահ քաղաք է, մեծ քանակութեամբ արտադրում է մետաքս. ունի բազմաթիւ մետաքսի գործարաններ. նշանաւոր է բարդը, բարձր սոսիներով զարդարած Ճեմելիքը, Շահաբասի մզկիթը. Բնակչաց թիւն է 18500. Կիսով չափ Հայեր ենք Տէրաէր գետի ափին գտանվում է Պարտաւ աւանը, որ մէկ ժամանակ Աղուանից թափառաւ առաջ էր. Այս նահանգումն էր գաւորանիստ մայրաքաղաք էր. Այս նահանգումն էր Խաչեմու քաղաքը, որ այժմ գիւղ է:

ԺԳ. ԳՈՒԹՎԱՐՔ

Սահմանները կազմում են Հիւսիսից Վրաստանը, արևելքից Արցախը, Հարաւից Սիւնիք և Ալբարատը, արևմտաքից Տայքը, Երկիրը խիստ լեռնոտ է ծածկուած անտառներով ու կարտուած Կուր գետով և նորա վտակներով. Հարուստ է բոյսերով և կենդանիներով. Հանքերից նշանաւոր են պղինձահանքը և երկաթահանքը. Ունի և շատ կենսահանքը և սառը հանքային ջրեր. Այս նահանգը Հին ժամանակ բաժանուած էր ինն գաւառի, որոնցից նշանաւոր են՝

ԱՐԴԱՀԱՆ

Գլխաւոր քաղաքն է Արտաշատ. վոքրիկ բերդաւ քաղաք է. շինած է մի բարձրաւանդակի վրայի կուր գետի ափին. մօտ 800 տուն բնակիչ ունի:

ԶԱՒԱԽՖ

Չիլստոր քաղաքն է Աթուցալաք. վաճառաշահ քաղաք է, շրջակայքում մեծ քանակութեամբ մշակվում է ծխախոտ. 3,000 բնակիչ ունի, համարեա ամէնքն էլ Հայ են:

ՁՈՐՈՓՈՐ

Այս տեղ է գտանվում Սանահին և Հաղբառ հոչակաւոր վանքերը. Սանահինի մէջն է ամենափեկած բարձրագմբէթ փառաւոր եկեղեցին թագաւորների և իշխանների գերեզմաններով. Հաղպատի մէջն է Սուրբ Նշան եկեղեցին մատուռներով և թագաւորական գերեզմաններով զարդարած:

ԺԵ. ՏԱՅՔ

Աահմանները կազմում են հիւսիսից Եգերացոց աշխարհը, արևելքից Գուգարքը և Այրարատ, հարաւից Բարձր - Հայք, արևմուտքից Սև ծով և

Փոքր - Հայք: Երկիրը ծածկուած է Մոսկիքեան և Պարխարեան լեռների Ճիւղերով: Երկրի միջով անցնում է ձորոխ գետը, որը իւր աջ և ձախ կողմերից ընդունում է բազմաթիւ վտակներ: Հարժաւած է անշտաներով, հողը պարարտ է և լաւ մշակուած. կենդանիներից յայտնի են ոչխարը, կովը, ջորին և գոմեշը, հանքերից նշանաւոր են ոսկու, երկաթի, մարմարի, սաթի և քարածուխի հանքերը: Ունի և բազմաթիւ հանքային ջրեր:

Այս նահանգը հին ժամանակ ուներ ինն գաւառ: Քաղաքներից նշանաւոր են Ո-խոիս կոմ Օլլի, գիւղաքաղաքէ, գանավում է համանուն գետի վրայ, որ թափվում է ձորոխը, շրջապատած է պարսպով. 500 տուն բնակիչ ունի: Նորիման, ունի հին բերդ: Սորա մօտ լնդարձակ տարածութեամբ քարածուխի հանք է գտանվում. հարուստ է և անտառներով. Պիտիստ. գտանվում է Կուր գետի ափին. բերդաքաղաք է. մօտ 15,000 բնակիչ ունի, որի երկուերրորդը Հայ են. արհեստներից տուածացած է ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը, կաշուեգործութիւնը. նշանաւոր են և ոսկեթել մանուածները: Նրջակայքը շատ պաղաքեր է, ունի երկաթային, թթուային հանքային ջրեր:

ԺԵ. ԱՅՐԱՐԱՏ

Այրարատ սահմանները կազմում են հիւսիսից Գուգարք, արևելքից Սիւնիք, հարաւից Վաս-

պուրական և Տուրուբերան, արևմուտքից Բարձր-
Հայք և Տայք; Այստեղ են գտանվում Հայաստանի
ամենաբարձր սարերը Մասիս, Բարդող, Զրաբաշխ,
Վահանդայ և Զարիշատայ սարերը, Արագած, Արայի
և Նամիրամի լեռները: Երկրի միջով անցնում է
Արաքսը, որի հովիտը ներկայացնում է Հայաստանի
ամենաստղաբեր և լաւ մշակուած մասը: Հովիտի
ձախ կողմից տարածվում են Վանանդայ, Նիրակայ և
Նարուրայ ծաղկազարդ գաշտերը. աջ կողմից ձգվում
են Բասենու, Բագրեանդայ անմահական դաշտերը:
Այդ բոլոն էլ որոգվում են Այրարատի բազմաթիւ
գետերով որոնք բոլոն էլ թափվում են Արաքսի
մէջ, Մուրց, Ախուրեան, Մեծամօր, Հրազդան, Ա-
զատ, Վեդի, Սագարակ և Արեելեան Գարուոյ գետ
ձախ կողմից. Կաղզուան, Սուրմանի և Մտկուայ գետ
աջ կողմից: Այստեղ է մշակվում ամենատառ և
ընտիր ցորենը Նիրակայ և Բագրեանդայ կողմերը,
բրինձը Նարուրայ կողմերը, գարին մինչև անդամ
ինքնսրոյս Երասխի հովիտում, բամբակը Երևանայ
կողմերը, Խաղողը Արագածից հարաւ Արաքսի ամ-
բողջ հովտում: Բազմաթիւ են թէ ընտանի և թէ
վայրի կենդանիները. միան Վաղարշապատայ փոք-
րիկ վիճակը 250,000 դլուխ տաւար է մնուցանում:
Ոչսարների հոտը, կովերի նախիրները, ձիաների
երամակները սփռուած են Արագածի և Մասիսի ստո-
րոտներում, իսկ անտառները լիքն են վարազների և
կինձերի երամներով, նապաստակների, Ճագարների,
գայլերի խմբերով և հաղարաւոր տեսակ տեսակ

թռչուններով: Հանքերից նշանաւոր են՝ ոսկի, ար-
ծաթ, պղինձ: Հին ժամանակ Այրարատը ուներ 20
գաւառ, որոնցից նշանաւոր են՝

ՇԻՐԱԿ

Այս գաւառի նշանաւոր քաղաքն է Անի. գտան-
վում է Ախուրեանի ափին մի բարձր թերակղզիաձե-
ժայռի վրայ. շատ ամուր դիրք ունի. արևմտեան
կողմը գտանվում է խորը ձորը, հարաւից և արեել-
քից հոսում է Ախուրեանը 300 ոտնաշափ խորու-
թեամբ: Նուրջը պատաժ է երկու կարգ հաստ և
ամուր պարիսպներով 30 ոտնաշափ բարձրութեամբ
աշտարակներով զարգարած, որոնք միմեանցից մօտ
150 ոտնաշափ հեռու են: Հին ժամանակ առաջնա-
կարգ բերդ էր, կենդրօն ցամաքային վաճառականու-
թեան և արհեստների. մայրաքաղաք էր Բագրատու-
նեաց: Առաջինն էր և իւր ճարտարապետական գե-
ղեցկութեամբ. միլիօնտչափ բնակիչ ուներ, հաղարից
աւելի եկեղեցի, հարիւրաւոր պալատներ, հաղարա-
ւոր վաճառանոցներ, ուր օրը հազար քարավաններս
էր մանում հազարը գուրս գալիս. այժմ այս քա-
ղաքը աւերակ է և նուիրավան ուխտաւեղի Հայ ժո-
ղովրդեան: Տարուայ ամէն ժամանակ ուխտաւորներ են
զնում այդ տեղ Սուրբ Գրիգոր Լուսաւորչուն եկե-
ղեցուն և կաթուղիկէ մայր եկեղեցուն ուխտ անելու,
որոնց մօտ շինուած են Հիւրանոցներ ուխտագնաց-
ների համար, ուր և բնակվում է Վանահայրը: Աշէ-

առներով, գտանվում է Գարւոյ գետի ձախ ափին, ունի
առւր բերդ, քսան հաղար բնակիչ, համարեա թէ
բոլորն էլ Հայ են:

ՎԱՆԱԴ

Քաղաքներից նշանաւոր է Կարս, գտանվում է
Ոահ գետի վերայ, առաջնակարգ անառիկ բերդա-
քաղաք է համարվում. շնած է մի բարձր քարա-
բլուրի վրայ, ունի միջնաբերդ. բնակչաց թիւն է
20,000:

ԱՐԵԱՐՈՒՆԻՄ

Այս գաւառում նշանաւոր է Կաշպատ, գտան-
վում է Արաքս գետի ձախ ափին, հարուստ է ազա-
հանքով, որտեղից տարեկան 50,000 փուդ աղէ սաաց-
վում, շրջակայքը ծածկած են այգիներով. Հին ժա-
մանակ այս գաւառումն էր գտանվում Երանեստա-
շտ թագաւորանիստ մայրաքաղաքը, որ այժմ ա-
ւերակ է:

ԲԱԳԻՐԵՒԱՆԴ

Քաղաքներից նշանաւոր է Վաղարշելիք (Թոփ-
րագ գալէ), գտանվում է Սուկաւի ստորոտում, բեր-
դաքաղաք է. շուրջը պատած է պարիսպներով և ունի
միջնաբերդ. բնակչաց թիւն է 2,000. Դիտին, գտան-

վում է Արածանոյ արեելեան Ճիւղի վրայ. ունի ա-
մուր միջնաբերդ. հարուստ է տեսակ տեսակ ջեր-
մուկներով. Դիաղինից գէպի արևմուտք Արածանոյ
ձախ ափին գտանվում է Սուրբ Յովհաննու Հռչա-
կաւոր վանքը. Խոհանք. գտանվում է Արածանոյ
ձախ ափին, բերդաքաղաք է, բնակիչները մեծ մասը
Քուրդեր են.

ԲԱՍԵԱՆ

Այս գաւառը առաջ շատ լնդարձակ էր և
բաղկացած էր վերին և ստորին Բասեանից. վերինը
բաժանուելով կազմեց Վանանդացոց գաւառը: Քա-
ղաքներից նշանաւոր են Հաստաղաց, գտանվում է Վերե-
ջու լեռան ստորոտում. շրջապատած է ամուր պա-
րագով, ունի բերդ: Այս քաղաքի մօտ է գտան-
վում եօմը կամարանի քարաշեն կամուրջը, որ
իրեւ թէ մէկ հովիւ է շինել ուստի կոչվում է Զո-
րանկեօփիրիւսի:

ՃԱՎԱՏ

Այս գաւառում նշանաւոր է Կողդ առանց. գր-
տանվում է Բարդող լեռան ստորոտում, 200 տուն
բնակիչ ունի. նշանաւոր է սորա մօտ գտանուած ան-
պառելի աղահանքը, որ երեք ծալերով միմեանց
վրայ դասաւորուած է ահագին տարածութեամբ, այս-
եղից տարեկան 1,500,000 փուդ աղէ սաացվում:

ԿՈԳՈՎԻՑ

Գլխաւոր քաղաքն է Բայառի, բերդաքաղաք է, գտանվում է Մակուայ գետի աջ ափին։ Վաճառականութեան ճանապարհի յարմարաւոր կետ է ներկայացնում, որովհետև սորա վերայով են անցկացնում Տաճկաստան մոնող Պարսկական ապրանքները և Տաճկաստանից Պարսկաստան գնացող ապրանքները։ Բնակչաց թիւն է 1,500 հոգի։

ԿՈՏԱՅՔ

Գլխաւոր քաղաքն է Երես։ շինած է Հրազդանի ափին, պատած է ամեւր պարիսպներով, ունի միջնաբերդ, ուր գտանվում է մինչև այժմ Երևանայ խաների պալատը, 14,000 բնակիչ ունի, որոնց կեսը Հայեր են։ Նշանաւոր է և իրեւ վաճառաշահ քաղաք։ Երևանայ մօտ է գտանվում Վաղարշապատ քաղաքը։ այստեղ է գտանվում Էջմանձնայ վանքը, որ շինել են Հայոց Տրդատ թագաւորը և Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը։ այս վանքը բոլոր աշխարհի Հայերի աչքում մի բարձր նուիրական սրբատեղի է։ Այստեղ են պատրաստում սուրբ Մեռնը։ Այստեղ է նստում Հայոց ընդհանուր Կաթուղիկոսը, որի իրաւունքը տարածվում է բոլոր աշխարհում բնակուող Լուսաւորչականների վրայ։ Այստեղ է գտանվում Սուրբ Սինօղը։ Ենութիւններից նշանաւոր են՝ Կոր-

գեան Հայոց ձեմարանը, որ իւր ճարտարապետական գեղեցկութեամբ կարող է մրցել Եւրոպական ամենալաւ շինութիւնների հետ, իսկ Հայաստանում իւր նմանը չունի։ Նշանաւոր է Էջմիածնայ Թանգարանը, որ իւր հարստութեամբ առաջինն է ամբողջ Հայաստանում։ այստեղ գտանվում են Հայոց թագաւորական թագերը, գայսոնները գրամները, մատանիները և շատ ուրիշ հազուագիւտ ոսկեայ, արծաթեայ և թանկագին քարերով զարդարած իրեղէններ։ Թանգարանին կից է և մատենադարանը, ուր կան շատ տպած և անտիպ գրքեր, շատերը նոյն իսկ մագաղաթի վրայ գրած։ Էջմիածնայ մօտ է Ներսէս Կաթողիկոսի անկած անտառը և կոփածոյ քարից շենած լիճը լիքը բազմաթիւ տեսակ տեսակ ձկներով։ Վաղարշապատի մօտ են գտանվում Հոխվոհմէ, Գայանէ և Շողակաթ վանքերը, որ շինեց Գրիգոր Լուսաւորիչը Հրդատի հետ միասին։ Վաղարշապատի հիւսիսային կողմն է գտանվում Օշական աւանը, ուր գտանվում է Սուրբ Մեսրոբի գերեզմանը։ Վաղարշատումն են գտանվում Գոռին, Արտաշատ և Արմատիք քաղաքների աւերակները։ Արտաշատի աւերակները գլուխանվում են Ազատ և Երասխ գետերի մնկիւնում։ գորա մօտ է և խոր վերապը, որ մինչեւ այժմ կայ, Գուլինի աւերակները Ազատ գետի ձախ ափին Արտաշատից հիւսիս արևելք։ Այս երկու քաղաքների տաշատից գիւղեր կան։ Արմատիրի տեղը աւելի անտեղ այժմ գիւղեր կան։ Արմատիրի տեղը աւելի անտեղ այժմ գիւղեր կան։ Արմատիրի մորոշ է։ նա պէտք է լինի Ախուրեանի և Մեծամօր գետերի մէջ տեղ Երասխ գետի ձախ ափին։

**ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺՄԱ-
ՄՈՒՆՔԸ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ**

Փոքր Հայաստանը ներկայացնում է մի լեռտարձակ լեռնադաշտ մօտ հինգ հազար ոսանաշափ բարձրութեամբ, սորա հիւսիսային և հարա ային կողմը ձգվում է եւ երկու կարգ լեռնաշղթաներ՝ հարաւում ծօրոսը իւր բազմաթիւ ճիւղերով հիւսիսում՝ Պարիսարեան և Պնդական շղթաները իւրեանց ճիւղերով. լեռնադաշտը կարուած է Անտիտորոսի շղթայով երկու հաւասար մասերի՝ արևելեան և արևմտեան; Երկիրը ծրաբատէ, բայց կան և սակաւաջուր տեղեր. հողը պաղաբեր է և մեծ քանակութեամբ մշտկում է ծխախոտ, բամբակ, ձիթենի, աֆիօն, տօրոն, խաշխաշ, ցորեն, գարի և այլն, ունի և մեծամեծ անտառներ, կենդանիներից նշանաւոր են ձի, կով, ոչխար, գոմել և բազմաթիւ վայրի կենդանիներ և գաղաններ: Հանքերից նշանաւոր են՝ աղ, գաճ, բորակ, կարմիր և սպիտակ մարմար, երկաթ, պղինձ, արծաթ. Փոքր Հայաստանը բաժանվում է երեք գլխաւոր մասով՝ Առաջեւ-Հայք, Երևարդ-Հայք, Երրորդ-Հայք:

ԱՌԱՋԻՆ - ՀԱՅՔ

Գտանվում է Փոքր - Հայաստանի արևելեան կողմը: Այս երկրի սահմանները, ինչպէս և Երկրորդ և Երրորդ - Հայքի սահմանները, անորոշ են: Քաղաք-

ներից նշանաւոր է Կեսարիա. գտանվում է Արգէսոս լեռն հիւսիսային կողմը, ունի պատիկ բերդ: Աաճառաշահ քաղաք է, ունի բազմաթիւ կտուի գործարաններ, բնակչաց թիւն է 30,000, որի մէկ երբորդը Հայէ: Եւ-Երկիր, գտանվում է Երիս գետի ափին մի բարձր ժայռի վրայ, ունի միջնաբերդ, բայց աւելի յայտնի է իւրեւ հարուստ վաճառաշահ քաղաք. Ճաղկած են և արհեստները, առաւելապէս պղնձագործութիւնը, բամբակագործութիւնը, մետաքսագործութիւնը, կապանի և Արդանայի պղինձը այստեղ է հալվում մաքրում և ապա տարածվում գէպի ամենայն կողմերը. Բնակչաց թիւն է 24,000: Զիէ գտանվում է Եւդոկիայից հարաւ արևմուտք մի գեղեցիկ հովիտի մէջ, ունի միջնաբերդ իւր զօրսնոցով. տեղն էլ շատ ամուր է և անառիկ: Զիէն նշանաւոր է և իւրեւ վաճառաշահ քաղաք. իւրաքանչիւր տարի գեկտեմբեր ամսին լինում է տօնավաճառ (փանայիր) և այդ ժամանակ Պամասկոսից, Հալէպից, Կեսարիայից գալիս են առաւտուր անելու: Արհեստներից առաջացած է խաղախորդութիւնը և բամբակագործութիւնը, շինում են բնտիր կտաւ և զոյնզոյն մանիսաններ: Զնայելով բնակչաց հարստութեան թէ քաղաքը և թէ ինքեանք շատ կեղտոտ են: Բնակչաց թիւն է 19,000. երկու հաղարից աւել Հայ են, ամէնքն էլ թրբախօս. Նիւռուցիւ (Գարահիսար), վաճառաշահ և բազմահայ քաղաք է. իւր շրջակայքում ունի առատ պաղեղի հանքեր, գտանվում է Եւդոկիայի արևելեան կողմը. Կեսար, գտանվում է Եւդո-

կիայի հիւսիս արևելեան կողմը Դայլ գետի աջ առ
փին. 6,000 բնակիչ ունի, կիսով չափ Հայեր են:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՔ

Գտանվում է Բարձր - Հայոց և Ծոփաց արևմ-
տեան կողմը: Քաղաքներից նշանաւոր է Սէբաստիոն
(Սվազ): Գտանվում է Ալիս գետի ափին մի դաշտի
մէջ. ունի երկու բերդ, արհեստներից առաջացած է
բամբակագործութիւնը, բրդէգործութիւնը, շինում
են շատ գեղեցիկ երեսորբիչներ, թաշկինակներ, շա-
լեր, մանխաներ, գորգեր, կապերաներ և այլն, ծաղ-
կած է և երկաթագործութիւնը, առաւելապիս զի-
նագործութիւնը, շինում են շատ լաւ ատրճանակ-
ներ, հրացաններ, փամփուշներ և այլն: Ցարմար
վաճառականական դիրք ունի, այդ պատճառով ա-
ռաջացած է և վաճառականութիւնը. բնակչաց թիւն
է 22,000, որի երկու երրորդ մասը Հայեր են. Հնու-
թիւններից նշանաւոր է Սուրբ Նշան եկեղեցին, որի
ներսը ընտիր մազայիկայից է շինած: Սեբաստիայի
շրջակայքը շատ հարուստ են աղի, գաճի, մար-
մարի հանքերով: Տիւլին կամ Տիպրիկէ, գտանվում է
Սեբաստիայից արևելք, բնական ամուր դիրք ունի,
բերդաքաղաք է. նշանաւոր է և ընդարձակ վաճառա-
կանութեամբ: Տարանքա, գտանվում է Սեբաստիայից
հարաւ Մելաս գետի ափին մի բլուրի վրայ. նշա-
նաւոր է միջնաբերդը. բնակիչների մեծ մասը ծա-
ճիկ է: Սորա մօտ է գտանվում Գիւրիւն, հոչակուած

է իւր ընտիր մանխաներով և շալերով: 350 տուն
բնակիչ ունի: Աէն գտանվում է Ակն վտակի վրայ,
որ թափվում է Եփրատ գետը. բնական ամուր և
խիստ գեղեցիկ տեսք ունի, ամէն կողմից խիստ բարձր
լեռներ են, մուտքը մի նեղ կիրճ է. արհեստներից
առաջացած է կաշէգործութիւնը, շերամապահու-
թիւնը և մանխան գործելը, բնակչաց թիւն է 10,000,
կէսը Հայ կէսը Տաճիկ: Ակնցիք ցրուած են ամէն ուրէք.
ասած է ակնցի երկու ոտով կաղը հասած է Հնդ-
կաստան, մէկ ոտով կաղը Չինաստան: Փաղաքների
շրջակայքում շատ կան այգիներ. նշանաւոր է և
Ակնի մօտ պղնձահանքը: Ակնի վիճակում 20 աւել
Հայ գիւղեր ընդունած են Մահմեդականութիւն և
Յունադաւանութիւն, բայց մինչեւ այժմ պահում են
Հայկական լեզուն և սովորութիւնները. Արտէնիք, գր-
տանվում է Ոսկէգետակի ափին Անտիտօրոսի ստորո-
տում: արհեստները շատ առաջացած են մանխանդ
զինագործութիւնը. շինում են մեքենաներ, եւրոպա-
կան գէնքեր, նուրբ գործիքներ. ծաղկած է և շե-
րամբագործութիւնը և բամբակագործութիւնը. շի-
նում են շատ ընտիր գոյնզգոյն մանխաներ, օրական
հազար վեց հարիւր մեքենաներ զբաղուած են մա-
նխան պատրաստելով *). բնակչաց թիւն է 10,000:
Արաբկիրի շրջակայքը շատ պաղաքեր է և հարուստ
արծաթի հանքով:

*) Տես Թորոս աղքար Սրուանձտեանի:

ԵՐՐՈՐԴ ՀԱՅՔ

Երրորդ Հայքը գտանվում է Խփրատից արևմտաք, Երկրորդ Հայքից հարաւ. միջովը անցնում է Տօրոսը: Քաղաքներից նշանաւոր են Մէլքինէ (Մալաթիա), գտանվում է Մելասի բերանի մօտ աջ՝ կողմից. ունի միջնաբերդ. բնակչաց թիւն է 18,000, որոնցից մօտ 5,000 Հայ են. առաջը օգը խիստ վատ առողջ է. շրջակայքը խիստ պաղաքեր է և մշտիկում է առատութեամբ բամբակ և աֆիօն. միայն աֆիօն գուրս է ասրվում Մալաթիայից տարեկան 120,000 լիրոյի: Ունի կաւահանք. շրջապատ գիւղերը բոլորը Քրդաբնակ են: Սահմառառ, գտանվում է Խփրատի աջ՝ ափին. այսուեղ գտաւ սուրբն Մէսրոպ Հայոց տառերը և բացեց առաջին հայկական ուսումնարանը. մէկ բլուրի վրայ փոքրիկ բերդ ունի. Բնակչաց թիւն է 3,600, որոնց մեծ մասը Քուրդ և Տաճիկ են: Սամուսատում մինչև այժմ կայ մէկ քարարլուրի մէջ խիստ գեղեցիկ կերպով գուրս փուրուած եկեղեցի և մենաստան, որ յայտնի է Խաչքիլսա անունով: Սամուսատից զէպի արևմուտք Տօրոսի Ճիւղերի վրայ գտանվում են Քէսառն և Արևմտահանք քաղաքները:

ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիայի սահմանները կազմում են Հիւսիսից Փոքր Հայաստանը, արևելքից Խփրատ գետը, հա-

րաւից Միջերկրական ծովը և արևմուտքից Տօրոսի Ճիւղերը: Երկրի հիւսիսային և արևմտեան մասերը լեռնոտ են, հարաւային ծովեղբեայ մասերը գաշտային են: Երկիրը ջրառատ է, բազմաթիւ լեռնային արագընթաց գետեր որոդում և մեծացած ժամանակ ողոգում են Կիլիկիայի գաշտերը: Բուսականութիւնը խիստ ճնշի է. ջերմ կլիմայի բոլոր բոյսերը բանում են այսուղ: Բոյսերից տւելի նշանաւոր են արմառ, նարինջ, թուրինջ, կիսրօն, ձիթենի, բամբակ, շաքարի եղեգն, նուռն. կենդանիներից նշանաւոր են ոչխար, այծեամն, այծ, կով, գոմէշ, ձի և այլն: Հանքերից աւելի նշանաւոր են երկաթ, աղ, ծծումբ, արջասուզ, արծաթ, հանքային ածուխ:

Մէկ ժամանակ Կիլիկիան մօտ 400 քաղաք և երեկու բերդ ուներ, հազարից աւելի էր տմրոցների թիւը, այժմ մեծ մասը աւերակ են դարձած. Կիլիկիայի քաղաքներից նշանաւոր են՝ Արանտ. գտանվում է Սարօս գետի աջ ափին. Կիլիկիայի առաջին հարուստ և վաճառաշահ քաղաքնէ. շրջապատած է գեղեցիկ պարտէգներով, ամառը անսանելի շոգէ, ուստի բնակիչները գնում են մերձակայ լեռները ամարանոց. Բնակչաց թիւն է 30,000 որոնցից մօտ 10,000ը Հայ են: Տարսն, գտանվում է Կիւղնոսի ափին. վաճառաշահ քաղաք է, մօտ 20,000 բնակիչ ունի, որոնցից 400ը Հայ են. Տարսնի հնութիւններից նշանաւոր են Հայոց թագաւորական պալատը և գանձարանը: Տարսնի նաւահանգիստն է Մէրսին, գտանվում է ծովի ափին, 3,000 բնակիչ ունի:

Սիւ, գտանվում է Տօրոսի հարաւային կողմը Պիւրա-
մասից արեւմուտք, այստեղ է նստում Եջմիածնից ան-
կախ Սիսոյ Կաթուղեկոսը, որ Ներսէս Շնորհալու-
յաջորդութիւնն է Փոքր Հայոց մէկ մասի և Կիլի-
կիայի վերայ: Հնութիւններից նշանաւոր են Հայոց
արքունական պալատը, գանձարանը, բանտը, Սուրբ
Սոփիայի եկեղեցին, բերդի պարիսպները, բայց բո-
լորն էլ անհոգ թողած են և համարեա կիսաւեր
զարձած, բնակչաց թիւն է 7,000. Քաղաքի շրջա-
կայքը շատ պաղաքեր է: Խոռ կամ Այաս, գտանվում
է Հայոց ծոցի ափին. մէկ ժամանակ իւր յարմար
նաւահանգիստով համաշխարհական նշանակութիւն
ունէր, սկսած Հնդկաստանից մինչև Վենետիկ ամե-
նայն տեղեց ապրանքները հաւաքվում էին այստեղ.
այժմ յամաքի գետի առաջ մեծանալով առ հեռա-
ցել է ծովեց, շրջակայքը ճահճային են դարձել
ուստի և քաղաքը կորցրել է իւր նախնի նշանա-
կութիւնը, ունի միջնաբերդ. 6,000 բնակիչ շրջա-
կայքը հարուստ են աղահանքով: Մամեստիս (Մսիս),
շինած է Պիւրամասի վրայ, ունի ամուր բերդ, բնակ-
չաց թիւն է 3,000. Անբանի, գտանվում է Կիլիկիայի
արևելեան մասում, ունի միջնաբերդ. յարմար վաճա-
ռականական դիրք ունի. սորա վերայով են անց-
նում Փոքր - Ասիայի ապրանքները գետի Բաղդադ,
Հալէպ և ուրիշ շահաստան քաղաքները: 25,000 բնա-
կիչ ունի. կիսով չափ Հայեր են, շրջակայքը խիստ
պաղաքեր են. յաճախ կրինուող երկրաշարժները մե-
ծամեծ պատճեր են տալիս քաղաքին: Աշխատաբեր:

գտանվում է Հայոց ծոցի ափին, նաւահանգիստ է,
1871ին այս նաւահանգիստում 179 առագաստանաւ
և 226 շոգենաւէին լողում: շրջակայքի ճահճաների
պատճառով օդը ապականուած է. բնակչաց թիւն է
1,500. քաղաքը եւրոպական ձևով է շինած. Մարտ-
գտանվում է Տօրոսի լեռնաշղթայի վերայ. ունի ա-
մուր բերդ. երեւելի վաճառաշահ քաղաք է. ար-
հեստներից տրածացած են ոստայնանկութիւնը և
ներկարարութիւնը, դոված է մանաւանդ Մարաշի
կտար. 20,000 բնակիչ ունի, որոնցից մօտ 11,000
Հայ են. Մարաշից գէտի հարաւ արևելք նշանաւոր է
Համբայ. գտանվում է Խիրասի աջ կողմը. մէկ ժա-
մանակ այստեղ էին հստում Հայոց կաթուղեկոսները.
100 տուն բնակիչ ունի, հնութիւններից նշանա-
ւոր է Ներսէս Շնորհալու եկեղեցին. Կիլիկիայի
նախնի բազմաթիւ բերդերից մնացած են մինչև այժմ
Վահան բերդը, որ գտանվում է Կիլիկիայի անմատչելի
ամուր ժայռերի վրայ. 150 տուն Հայ բնակիչ ունի:
Լամբաս (Նեմրուդ գալէ), գտանվում է Տարսոնից
հիւսիս արևելուադք. Բարյը - Բէրբ (Պէրսպէրթ), գտան-
վում է Սիսից մէկ օրուայ ճանապարհ գետի հիւ-
սիս լեռների վրայ: Անարդար հին ժամանակ երեւելի
բերդաքաղաք էր, այժմ գիւղէ, գտանվում է Պիւրա-
մասի աջ ափին. Կիլիկիայի լեռներումն է գտանվում
Զէյթունի վիճակը: Այս վիճակը ամէն կողմից պա-
տահ է ուղահայեաց և անմատչելի ժայռերով, միայն
հարաւային կողմից մի նեղ կիրճ կայ անցնելու հա-
մար, ուր մի քանի մարդ կանգնած կարող են կռուել.

ամբողջ գօրքի դէմ: Հովհանները, ուր գտանվում են Հայ լեռնականների գիւղերը, շատ պաղպեր են և բնակիչները գտնում են առատ կերակուր իւրեանց խաշինների համար: Երկրագործութիւնը այնքան արդ գիւնաւոր չէ. ուստի և նոքա պարապում են երկաթագործութեամբ: Երկաթից պատրաստած գործիքները տանում են Մարաշ և Կեսարիա վաճառում ու նոցա տեղ հաց գնում: Զէյթունի կանայք պարապում են շերամապահութեամբ, մետաքսագործութեամբ, գորգեր, կապերաններ պատրաստելով և այլն. Զէյթունցիք առհասարակ քաղցր բարքի և փափուկ բնաւորութեան տէր մարդիք են: Սպանութիւն շատ հազիւ է պատահում նոցա մէջ. գողութիւն, յափշտակութիւն և դիտաւորութեամբ սկրած մարդասպանութիւն տեղացիք չեն յիշում: Եթէ մի Զէյթունցի յանցաւոր է՝ նորան աքսորում են կամ ստիպում են վանքերից մէկում ապաշխարելու: Զէյթունցոց ազնուութիւնը առած է դառած: Զէյթունցի Հայերը խիստ անձնուէր և հաւատարիմ են իւրեանց եկեղեցուն. այդ գգացմունքը մինչեւ մոլուանդութեան է համնում. նոցա քահանաներից մէկը հաւատափոխ եղաւ և նոքա կաշին մաշկեցին և այրեցին: Զէյթունի Հայերի կազմուածքը գօրեղ և առողջ է. նոցա մէջ ազատութեան անընկածելի հոգին, անկախութեան միտքը վերին աստիճան կատարելութեան է հասած. ամենափոքրից մինչեւ ամենածերերը կրողներ են. երկրին մի որեիցէ վանդապատանալիս 14 տարեկանից մինչեւ 60 տարեկան

անապայման պէտք է զէնք վեր առնեն: Զէյթունցիք ինչպէս և ամէն լեռնաբնակ ազգեր ունին իւրեանց ազգային պատերազմական երգերը, որոնք խսկապէս նոյա միակ գրականական հարստութիւններն են կազմում: Զէյթունցիք խօսում են աղջատած բարբառով. շրջակայ Թուրքմէնները ևս նոյն բարբառով են խօսում: Մօտ 20 տարի առաջ Զէյթունցիք վայելում էին կատարեալ անկախութիւն իւնինավարութիւնը. երկրի կառավարութիւնը յանձնուած էր ըրս հոգու, որոնք կոչում էին իշխաններ: Սոցա պարտականութիւնն էր հոգալ երկրի ներքին բարելաւութեան համար ու պաշտպանել արտաքին թշնամիներից: Ուղեղ է կանոնաւոր զօրք ձկար, բայց ամէնքը երկուած էին գուրս գալ պատերազմ հայրենիքի պաշտպանութեան համար, նոյն իսկ հոգեւորականութիւնը խաչու խաչվառով և սուրբ պատկերներով առաջնորդում էր ժողովրդիան դէմի պատերազմը:

Այս վեճակի գլխաւոր քաղաքներն են Զէյթուն, գտանվում է լեռների մէջ մէկ բլբի վերայ, դորս ձանասպահը մի նեղ կիրճ է, որի վրայով երկու մարդ ձեռք ձեռքի տուած հազիւ կարող են անցնել. 2,000 տուն բնակիչ ունի, համարեա բոլորն էլ Հայ են. ունին եօթը եկեղեցի, նշանաւոր է Սուրբ Աստուածածնոյ եկեղեցին, ուր նստում է Զէյթունի եպիսկոպոսը. Զէյթունի շրջակայքը հարուստ է երկաթի հանքով, որը տեղականները մշակելով լաւ զենքեր են շինում: Զէյթունի մօա է գտանվում և

Ուշի առանք, ուր գտանվում է Սուբր Ստեփաննոսի վանքը, Հարգան կամ Հաճին. գտանվում է Սարոսի աջ ափին՝ 2,000 տուն բնակիչ ունի⁸⁾:

ՀԱՅՈՅ ՄԻԶԱԳԵՏՔ

Միջագետքի հիւսիսային մասը շատ ժամանակից առաջ գտանվում էր Հայոց ձեռքին և կոչվում էր Հայոց Միջագետք, որ սահմանակիցէ ՄեծՀայաստանի Աղճնեաց նահանգին. Գտանվում է ծիրիս և Նիբատ գետերի մէջ: Այս երկիրը երբեմն խիստ բնդարձակուած է և երբեմն փոքրացած, բայց Երուանդ երկրորդից յետոյ միանգամայն օտարների ձեռքը անցաւ: Երկրի հիւսիսային մասը լեանոտէ, այդտեղ ձգվում են Մասիսի ձիւղերը, իսկ հարաւային մասը դաշտայինէ: Երկրի միջով անցնում են Խապուր և Բեղլեկայ գետերը իւրեանց բազմաթիւ ծիւղերով. Հողը բարեբեր է և առասութեամբ լուսուցանում է ջերմ կլիմայի բյուրեր, բայց աւելի շատ ունի խաշնարածութեան յարմար տեղեր. Միջագետքը հայրացյանի հայրենիքն է: 0դը առողջարար է. տեղական բնակիները որ են Արաբները, Քուրդերը, Քաղիայիք և Հայերը, շատ առողջ կալմուածք ունին:

Քաղաքներից նշանաւոր են՝ Երիվան կամ Ռուսիա. Հայոց մայրաքաղաք էր, շրջապատած է պարսպով և աշտարակներով. առաջնակարգ վաճառաշահ քա-

⁸⁾ Լանգլուտ:

լաքէ, արհեստներից ծաղկած են կտաւագործութիւնը, բամբակագործութիւնը, կաւակերտութիւնը և արծաթագործութիւնը, ունի գեղեցիկ շինուաթիւններ, աալյասանակ փողոցներ 40,000 բնակիչ ունի, որիներկու երբորդ մասը քրիստոնեայ են: Հայոց թիւն է 1,000 հոգի: Մարտին (Մերդին) գտանվումէ մօտ 5,000 ոտնաշափ բարձրութեան վերայ: Հաւմարվում է բանալի վերին Միջագետքի. իւր ամուր դիրքով անմատչելի է համարվում, շրջապատած է պարիսպներով և աշտարակներով: Արհեստներից առաջացած է բրդագործութիւնը: Մաքուր քաղաք է, ունի լաւ շինուաթիւններ, բաղանկներ, մէջեգներ, հրապարակներ, ջրհոլներ: Նրջակայքում մշակվումէ ընտիր խաղող: Բնակչաց թիւն է 20,000, որոնցից մօտ 8,000 հայ են, մնացածները Արաբ, Քուրդ, Ասորի և այլն: Մծբին (Նիսիբին) գտանվում է ձախճախ գետի աջ ափին. մէկ ժամանակ Հայոց մայրաքաղաք էր, այժմ աւան է, 1,000 բնակիչ ունի, որոնցից 60 հայ են, մնացածը Քուրդ և Արաբ. Փոքր-Ասիայից Ասորեստան և Պարսկաստան գնացող կարաւանները դորա վերայով են անցնում: Բերդ (Պիրեցիկ), Հայոց թագաւորների շինածն է. վաճառաշահ քաղաք է, բնակչաց թիւն է 3,000, որոնցից 600 հայ են, ունի ամուր բերդ. Սեաւերսկ կամ Հոգի Հայ են, ունի ամուր բերդ. Սեաւերսկ կամ Սևերակ, գտանվում է Եփրատի ձախ ափին Հայաստանից Ասորիք գնացող մեծ վաճառականնական ճանապարհի վրայ. բնակչաց թիւն է 7,000, որոնցից մօտ երկու հազարը հայ են: Նրջակայքում մշակ-

**Վումէքամբակ և իսպողը որից պատրաստուած
գինին կարող է մրցել եւրոպական ամենալիակը զիշ
նիսերի հետ. Կոյն խաղողից տեղականները թանձր
մեջը են պատրաստուած նիկիվուէն (Ուաքա), գտան
վում է Բեղեկայի և Եփրատի միացման անկիւնում:
Հնութիւններից նշանաւոր են : Հարուն. Էլ- Ուշեղի
պալատի մնացորդները: Ըստ պաշտոնա 000,0 տոն
դիմա զոյ պատճին Ս ազգի պահապ. Ա Խայբուն
Հ Ծառադաշտ Անտիկան: Ն պատճենն իսպարը
ա վելչամաշը Խոյս վարչուաց և Խոյմարտիւու
Հ գորաց ս ուղար: Զ զեմի ու ուղարարը Հ Տարօնաւ
Ղ գմարժն Կ վազանուաց ու մուն ու ու ու ու
Ա Խայբուն Խ աց սախման Վ թերթից ու թախզուաց
Ռ վիշտու 000,0 Հ մայի Ս սահման Պ րարան Վ վեն
Ա
Հ այտատան: Վ այլու Վ այլու Վ այլու Վ այլու Վ այլու⁷
Հ այտատանի անունը: Վ այլու Վ այլու Վ այլու⁷
Հ այտատանի Քաղաքական սահմանները: Վ այլու Վ այլու⁸
Հ այտատանի Բնական սահմանները: Վ այլու Վ այլու⁸
Հ այտատանի սահմանային հեռաւոր կետերը: Վ այլու⁹
Հ այտատանի տարածութիւնը Վ այլու Վ այլու⁹
Հ այտատանի գլխաւոր բաժանմունքը: Վ այլու Վ այլու⁹
Հ այտատանի մակերեսյթը: Վ այլու Վ այլու¹⁰
Մ ե ծ - Հ այտատանի մակերեսյթը Վ այլու Վ այլու Վ այլու¹¹
Մ ե ծ - Հ այտատանի Լ ե ռ ն ե ր ը Վ այլու Վ այլու Վ այլու¹²
Փ ո ք ը - Հ այտատանի մակերեսյթը 19
Փ ո ք ը - Հ այտատանի մակերեսյթը 20
Կ ի լ ե կ ի ս յ ի մ ա կ ե ր ե ս յ թ ը 20
Հ ա յ ո ց - Ս ի ջ ա գ ե ա ք ի մ ա կ ե ր ե ս յ թ ը 23
Հ ա յ տ ա տ ա ն ի բ ա ր ձ ր ա ւ ա ն դ ա կ ն ե ր ը 23
Մ ե ծ - Հ ա յ տ ա տ ա ն ի բ ա ր ձ ր ա ւ ա ն դ ա կ ն ե ր ը 25
Փ ո ք ը - Հ ա յ տ ա տ ա ն ի բ ա ր ձ ր ա ւ ա ն դ ա կ ն ե ր ը 26
Հ ա յ տ ա տ ա ն ի դ ա շ տ ե ր ը և մ օ ր ե ր ը 27**

Հայաստանի մակերեսյթի պղուտոնական, պուստոնական և հեփեստեան կաղմութիւնը.	29
Հայաստանի հրաբուխները	33
Մեծ - Հայաստանի հրաբուխները	34
Փոքր - Հայաստանի հրաբուխները	37
Հայաստանի ջրերը	38
Մեծ - Հայաստանի գետերը	40
Փոքր - Հայաստանի գետերը	44
Կիլիկիայի գետերը	45
Հայաստանի լըերը	48
Հայաստանի հանքային ջրերը	53
Հայաստանի օդը	54
Հայաստանի բոյսերը	60
Հայաստանի հանքերը	70
Երկրի կաղմութեան ազդեցութիւնը ժողովրդաւ կան և քաղաքական կեանքի վրայ	74
Երկրի կաղմութեան ազդեցութիւնը ժողովրդաւ կան կեանքի վրայ	76
Երկրի կաղմութեան ազդեցութիւնը քաղաքաւ կան կեանքի վրայ	82
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ	
Հայաստանի բնակիչները	84
Բնակչաց տեղաւորութիւնը	87
Հայաստանի գլխաւոր տղգերը	89
Հայոց այժմեան դրութիւնը	90
Հայաստանի բնակչաց թիւը	102

Հայաստանի բնակչաց կրօնը	105
Հայաստանի բնակչաց պարապմունքը	107
Հայոց ընտանեկան կեանքը	114
Հայոց ընտանեկան պարապմունքը	119
ԲՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ	
Հայաստանի քաղաքական բաժնումն	123
Հայաստանի կառավարութիւնը	126
Տաճկա - Հայաստանի կառավարութիւնը	126
Պարսկա - Հայաստանի կառավարութիւնը	129
Ռուսա - Հայաստանի կառավարութիւնը	130
Հայաստանի նահանգները և քաղաքները	130
Բարձր - Հայք	131
Չորրորդ - Հայք	134
Աղձնիք	135
Տուրուբերան	137
Մոք	140
Կորճայք	141
Պարսկահայք	141
Վասպուրական	143
Սիւնիք	147
Արցախ	149
Փայտակարան	150
Ուտի	150
Գուգարք	151
Տայք	152
Այրարատ	153

Փոքր - Հայտառանի	բաժանմունքը	և	քաղաքները	160
Առաջին - Հայք	պահանջարար	ուստի	հմասու	160
Երկրորդ - Հայք	վաճառք	մայթմանոց	162
Երրորդ - Հայք	ճայտարար	ճշխետում	164
Կիլեկիս	164
Հայոց Միջագետք	ԱՊԳԱԳԻՒՅ	ՃԱՌԱՐՈՒՅ		170

- 021 մի ուստիս մայթագյործ հմասուցան
021 զմունք ուստիսուած հմասուցան
021 զմունք ուստիսուած հմասուցան ավելան
021 զմունք ուստիսուած հմասուցան - այսպիս
021 զմունք ուստիսուած հմասուցան - այսպիս
021 զմունք ուստիսուած հմասուցան - այս այլ
021 զմունք ուստիսուած հմասուցան
161 գյուղ - զնուան
181 գյուղ - զնուան
681 գյուղ
781 մասնի ուղան
041 գ ա ն
111 գ ա ն ա յ ս
141 պահանջարար
331 մայթագյուրան
711 պահանջարար
041 սիրուան
061 մարտիսանցան
061 գյուղ
161 գյուղանց
261 գյուղ
361 գյուղանց



